

**Լրագրողների Ել
լրատվամիջոցների
Ակատմամբ
ընուլժյունները,
Ճշումները Ել
դատական գործերը
Հայաստանում
2008-2009 թթ.**

**դեպքեր եւ
վերլուծություններ**



Երեւան 2009

ՀՏԴ 070:341.231.14

ԳՄԴ 76.12+67.91

Բ 898

Գիրքը հրատարակվել է Եվրոպայում Ասվոտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵՎՀԿ) երեանյան գրասենյակի աշակցությամբ:

Գրքում արտահայտված տեսակետները «Հետաքննող լրագրողներ» հ/կ-ինն են եւ կարող են չհամընկել ԵՎՀԿ տեսակետների հետ:

"This publication has been made possible by support from the Organization for Security and Co-operation in Europe, Office in Yerevan. The views expressed herein are those of the Investigative Journalists NGO and do not necessarily reflect the views of the OSCE."

Բ 898

Բռնություններ եւ ճնշումներ լրագրողների եւ մեդիայի նկատմամբ Հայաստանում. դեպքեր և վերլուծություններ.- Եր.: «Հետաքննող լրագրողներ» հ/կ, 2009.- ...Եշ:

«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի պատրաստած այս գիրքն ամփոփում է 2008-2009 թվականներին Հայաստանում լրագրողների եւ զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ տեղի ունեցած քննություններն ու ճնշումները, ներկայացնում այդ դեպքերի եւ իրադարձությունների փաստանան կրոմք, վերլուծում դրանք միշազգային համաձայնագրերի եւ ՀՀ օրենսդրության տեսանկյունից եւ տայիս իրավական գնահատական:

Նախատեսված է լրագրողների, իրավաբանների, խոսքի եւ մամուլի ազատության խնդիրներով գրաղվող փորձագետների, ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 070:341.231.14

ԳՄԴ 76.12+67.91

ISBN 978-92-9235-839-6

ISBN 978-99941-2-336-0

© Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2009 թ.

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ 5

ՀԱՅ I. ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7

Քրիստինե Աղալարյան

Լրագրողի վրա հարձակվողները չեն հայտնաբերվել,
քրեական գործը կասեցված է..... 8

Արարատ Դավթյան

Ի՞նչ կապ ունի Վարդան Այվազյանը.
պատահականությո՞ւն, թե? 16

Արարատ Դավթյան

Ֆոտոլրագրողին ծեծողները համաներվեցին..... 23

Արարատ Դավթյան

Սպանության փորձ Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ.
հարձակվողները իրենց «հետքերը» թողել են դեպքի վայրում.... 25

Քրիստինե Աղալարյան

Երեւանի ավագանու ընտրություններում
լրագրողի նկատմամբ բռնության 5 դեպք է արձանագրվել..... 29

Քրիստինե Աղալարյան

Խոչընդոտել են լրագրողի աշխատանքը.
ԴԱՇԿ-ը հակառակն է պնդում..... 34

Արարատ Դավթյան

Լրագրողի վրա հարձակվողների «ինքնությունը»
դարձյալ անհայտ մնաց..... 37

ՀԱՅ Ա. ՀԱՅՊՐԵՏՈՒԹՅԱՆ ՀԱ ՀԱՅ-Ի ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 39

Քրիստինէ Աղալարյան

Իշեւանի քաղաքապետն ընդդեմ «Հետաքննող լրագրողների».
գործը կլսվի Վերաքննիչում..... 40

Ա. Միմոնյան

Իշեւանի քաղաքապետարանն ընդդեմ «Հետաքննող
լրագրողների». Մարդու իրավունքների եվրոպական դատարանի
նախադեպային իրավունքը՝ «ճայն բարբառոյ յանապատի».... 45

Քրիստինէ Աղալարյան, Արարատ Դավթյան

Գագիկ Շամշյանը չի ընդունում
դատավորին վիրավորելու մեղադրանքը..... 52

Ա. Միմոնյան

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների
եվրոպական կոնվենցիայի սկզբունքներն՝
ընդդեմ Գագիկ Շամշյանի դատավճռի..... 58

Արարատ Դավթյան

Գոհար Վեգիրյանին դատեցին միայն
կարգադրիչների ցուցմունքների հիման վրա..... 63

Արմասն Ղարիբյան

Պատգամավոր Զարուհի Փոստանչյանն՝
ընդդեմ «Ազատամտության»..... 69

Քրիստինէ Աղալարյան

«Յայկական ժամանակը» չի հերքելու Լեւոն Թոշարյանի մասին
տպագրած տեղեկությունը եւ չի վճարելու 3 մլն դրամը..... 71

Քրիստինէ Աղալարյան

«Գինդ» տպարանն ընդդեմ «Զորրորդ իշխանության».
քաղաքական պատվե՞ր, թե՞ չվճարված պարտքեր..... 76

Արմասն Ղարիբյան

«Ռադիո Յայ»-ը՝
ընդդեմ պատգամավոր Ստեփան Սաֆարյանի..... 81

ԱՐԵՎԱՏՅԱՆ

Ամեն տարի սեպտեմբերի 1-ին, երբ լսարանում ողջունում եմ ժուռանայիստիկայի ֆակուլտետի առաջին կուրսեցիների իմ խմբին, զրույցը մասնագիտության շուրջ սկսում եմ լրագրողի աշխատանքի հետաքրքիր ու գայթակղիչ կողմերը ներկայացնելով։ Սակայն այս տարի, անկախ ինձնից, խոսեցի լրագրողի աշխատանքի վտանգավոր կողմերից, մասնավորապես Հայաստանում առկա խոչընդոտներից։ Պատճառը, ըստ ամենայնի, վերջին երկու տարում լրագրողների եւ լրատվամիջոցների դեմ Հայաստանում հայտարարված «պատերազմն է», շիկացած անհանդուրժողական մթնոլորտը ցանկացած քննադատական խոսքի նկատմամբ։ Հայաստանի անկախության 18 տարիների ընթացքում այս էլ արդեն երրորդ անգամ՝ ընտրություններից առաջ եւ հետո, լրագրողների դարձում են քաղաքական եւ այլ հաշվեհարդարների գործ։ Այդպես էր 1995-96թթ.-ին, այդպես էր 2003-2004թթ., այդպես եղավ նաև 2008-2009թթ.-ին։

Հաշվեհարդարի ծեւերը չեն փոխվել՝ ֆիզիկական եւ տնտեսական սպառնայիքներ, նաեւ՝ զրաքարտության մեղադրանքով քրեական հետապնդման մշտական սպառնալիք, հատկապես այն լրագրողների նկատմամբ։ Ովերտ բացահայտում են կոռուպցիան եւ հշխանության չարաշահումը։ Ցավոք, այդ սպառնայիքների մեջ տեսակարար մեծ կշիռ ունեն բռնությունները՝ 18 դեկտեմբերի 11 դեկտեմբերի 2009 թ., 11 դեկտեմբերի 2008 թ., 11 դեկտեմբերի 2007 թ. Դրանց հետինակներին կամ պատվիրատուներին բացահայտելու քաղաքական կամքի բացակայությունը եւ/կամ իրավապահ մարմինների անկարողությունը ծնում են նոր բռնություններ եւ «կանաչ լույս» ցույց տալիս հարցերն այդ կերպ լուծողներին։

Իրավապահները լրագրողների դեմ հարձակումները դասում են «բարդ հանցագործությունների» շարքին, սակայն հարուցված մի շարք քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նախաքննություն իրականացնող մարմինները միտումնավոր կամ անկարողության պատճառով լիարժեք քննչական գործողություններ չեն հրականացնում՝ հանցագործներին բացահայտելու համար։ Ակելորդ է խոսել այդ հանցագործությունների պատվիրատուներին բացահայտելու «ջանքերի» մասին, որովհետեւ աղպիսիք գրեթե չկան։

Թերեւս սա էր պատճառներից մեկը, որ 2008 թ. վերջին «Յետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպությունը որոշեց 2008-09 թթ. լրագրողների եւ ԶԼՄ-ի դեմ բռնությունների, սպառնայիքների եւ զրաքարտության մեղադրանքով հարուցված դատական գործերի դիտարկում իրականացնել, դրանց մասին հոդվածներ պատրաստել, ներկայացնել լրագրողների դեմ գործված հանցանքները բացահայտելու ուղղությամբ նախաքննություն եւ հետաքննություն իրականացների աշխատանքը եւ

արդյունքները մեկ ամիսով ժողովածուով ներկայացնել: Մենք ոչ միայն լուսաբանել ենք այդ դեպքերը հոդվածների, երբեմ հոդվածաշարերի միջոցով, այլև հետեւ ենք քննիչների եւ դատավորների աշխատանքի օրինականությանը՝ լրագրողներին առնչվող գործերը քննելիս, տվել այդ գործողությունների իրավական գնահատականը: Հոդվածները նախապես հրապարակվել են «Հետք» ինտերնետային թերթում (www.hetq.am):

Այս գրքի առաջին բամսում գտնելված էն 2008-09 թթ. լրագրողների դեմ քննությունների մասին հոդվածները: Օյեկտիվ պատճառներով դրանց ցանկը սպառչչ չէ, որովհետև մեր գործընկերներից ոմանք չեն ցանկացել, որ իրենց հետ տեղի ունեցած հրապարակայնացվի եւ խուսափել են իրավապահների հետ ինչիրներ ունենալոց: Երկրորդ բաժինը, որ անվանել ենք «Լրագրողները դատարանում», ընդգրկում է հոդվածներ նույն ժամանակահատվածում սկսված դատական գործերի մասին, որոնցում լրագրողները հանդես են զայիս պատասխանող կամ հայցվորի դերում: Նույն նկատմամբ հիմնական մերարտանքներն են՝ գրպարտություն, վիրավորանք, պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի արաւություն: Թեեւ Եվրոպական կառուցյաները բազմից հայտնել են իրենց դիրքորոշումը եւ Զայաստանին կոչ արել ապաքրենականացնել գրպարտության մասին հոդվածը կամ կիրառել ողքամիտ ֆինանսական փոխհատուցում, իշխանությունները մտադիր չեն նման փոփոխություններ կատարել: Այս ժողովածուում ներկայացված նման մի քանի գործերով կտևնենք, որ քաղաքական կամ պետական գործիքները փոխհատուցման չիմնավորված գումարներ են պահանջում ՉԼՍ-ից: Գորի երկրորդ բաժինը արժեքավոր է նաև նրանով, որ լրագրողներին կամ ՉԼՍ-ին առնչվող մի քանի աղմկահարուց գործերով կայացված դատական վճիռները վերլուծվել են Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի սկզբունքների համատեքստում, Եվրոպական դատարանի նախադեպերի լույսի ներքո եւ տրվել են իրավաբանական եզրակացություններ: Այդ գործերի քննությունը Զայաստանի եռաստիճան դատական համակարգում դեռևս ավարտված չէ, եւ այս վերլուծությունները օգտակար կլինեն դրանք քննող դատավորների, ինչպես նաև ՉԼՍ-ի կամ նրանց դեմ հայցեր ներկայացրած անհատների համար, ովքեր պատրաստվել են դիմել Եվրոպական դատարան: Զայաստան դատավորների, ովքեր Զայաստանի՝ Եկ-ին անդամակցության ուժով, պարտավոր են հետեւել եւ կիրառել Եվրոպական դատարանի նախադեպեր նմանատիպ գործեր քննելիս:

Մեր Եզրակացությունն այն է, որ լրագրությամբ գրաղվել Զայաստանում գնալով ավելի վտանգավոր է դառնում, եւ իշխանությունները ոչ այսօր, ոչ է ապագայում հակված չեն լինելու ապահովել մամուլի եւ խոսքի ազատությունը, երաշխիքներ տալ լրագրողների անվտանգության համար: Մեր իրավունքները եւ ազատությունը ինքներս պետք է պաշտպանենք:



ՄԱՍ I

ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
բանություններ




Pr̄lus̄kun Աղալարյան

Աղալարյան Աննա Ռուսականացինեան
Երևան Հայաստանի Հանրապետություն,
Արտադրության գործադրության մ

«**R**այկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինե Բարսեղյանի վրա հարձակման փաստով 2008 թ.-ի օգոստոսի 11-ին հարուցված քրեական գործը նոյն թվականի նոյեմբերի 11-ին կասեցվել է. հանցագործները չեն հայտնաբերվել. Վարույթն իրականացնող մարմինը վստահեցնում է, որ իրենք կատարել են ամեն ինչ, սակայն չեն կարողացել հայտնաբերել հանցագործներին: «Այս գործով թերություն չկա: Աշխատանք է տարվել ինչպես որ կարգն է, ինչքան ուզում եք միլիցիային քննադատեք, այս գործով բաց տեղ չի մնացել, որովհետեւ բարձրաստիճան պաշտոնյաների հակողության տակ է եղել», - «Յետքի» հետ զրույցում ասաց Ոստիկանության Նոր Նորքի քննչական բաժնի քննիչ Արտաշես Յովհաննիսյանը: Վերջինիս վարույթում է եղել լրագրողի վրա հարձակման փաստով հարուցված քրեական գործը:

Մեր ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ վարույթն իրականացնող մարմինը չի կատարել անհրաժեշտ քննչական գործողություններ՝ հանցագործությունը բացահայտելու համար:

2008 թ. օգոստոսի 11-ին, առավոտյան ժամը 9:40-ի սահմաններում, «Յայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինե Բարսեղյանը երկու անհայտ անձանց կողմից ենթարկվել է հարձակման: «Երբ ես իմ հայրական տնից դուրս եի եկել եւ գալիս եի աշխատանքի, նկատեցի, որ կողքի շենքի մոտ կանգնած մեքենայի շարժիչը միացավ եւ որ ինձ հետեւում են, մտածեցի՝ երեւի Ազգային անվտանգության աշխատակիցներն են, քանի որ այդ ժամանակ Նիկոլին են փնտրում եւ բոլորին հետեւում են, ուշադրություն չդարձի, բայց զարմացա, թե ինչու այս անգամ այսքան բացահայտ է: Յասել եի աստիճաններին եւ ներքեւ եի իշխում, զգացի, որ մեքենան ել իմ հետեւից պտտվեց ու եկավ եղ աստիճանների մոտ, դրանք դուրս եկան մեքենայից, հարձակվեցին վրաս ու սկսեցին խփել: Ես սկսեցի բղավել եւ այդ աղմուկի վրա, երբ տեսան մարդիկ են հավաքվում, թողեցին ու փախան», - պատմում է Լուսինեն:



Լուսինեհի ծայլը լսելով՝ մոտակա գագի լցակայանի աշխատակիցն ու մի քանի անցորդներ օգնելու նպատակով վազել են Լուսինեհի կողմը, սակայն հարձակվողները հասցրել են փախչել: Լուսինեհի կարծիքով՝ հարձակվողները հատուկ էին ընտրել այդ աստիճանները, քանի որ այն մարդաշատ չէր եւ կարելի էր հեշտ փախչել: Լուսինեն նույնիսկ Ենթադրում է, որ հարձակման պահին եղել է ոչ թե մեկ, այլ երկու մեքենա, որից մեկը կանգնած է եղել վերեւում, մյուսը՝ աստիճանների ներքեւում, եւ այդպես առավել հեշտ է եղել փախչել: Միջադեպն այսքան արագ է տեղի ունեցել, որ Լուսինեն չի հասցրել տեսնել, թե ուր, որ կողմ եւ ինչպես են կարողացել հարձակվողներն անհետանալ, քանի որ իր աղաղակների վրա օգնության հասած մարդկանց ծայլներից հարձակվողները հապճեա փախուստի են դիմել: Լուսինեն չի հասցրել նույնիսկ տեսնել հարձակվողների դեմքերը: Սակայն նշում է, որ նրանք սպորտային կազմվածքը ունեին եւ նման էին սափրագլուխների: «Ես շոկային վիճակում էի, առաջին պատահած տաքսին կանգնեցրի, որ իբր հասնել դրանց ետևից: Բայց թե ոնց ծկեցին, չնկատեցի: Դրա համար Ենթադրում եմ, որ մեկ այլ մեքենա կար նաեւ աստիճանների ներքեւում», - ասում է Լուսինեն: ճանապարհին՝ լուսաֆորի կարմիր լուսի տակ կանգնելու ժամանակ, Լուսինեն նկատել է սպիտակ գոյսին «Մոսկվի» 15 LU 393 պետիամարանիշով մեքենա, որում տեսել է ոստիկանական համազգեստով վարորդին, ետեւում՝ իր վրա հարձակվող սափրագլիքի նման մեկին եւ կողքին՝ մեկ այլ անձի: Նրանք, ըստ Լուսինեհի, ուշադիր նայել են իր կողմը:


Լուսինեն վնասվածքներով հասել է խմբագրություն: Խմբագրությունից շտապօգնություն են կանչել. նրան տեղափոխել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Բժշկմերը հետազոտել են լրագրողին եւ արձանագրել գլխի սալշարդ ու հեմատոմա:

Օպերատիվ հետախուզչական միջոցառումները պարզել են, որ «Մոսկվի 21-41» 15 LU 393 պետիամարանիշով մեքենան պատկանում է Երեւան քաղաքի Նոր Նորքի առաջին զանգվածի, Նաևսենի փողոցի 17 շենքի թիվ 111 բնակարանի բնակիչ Վահե Վրմենի խաչատրյանին, որը վարում է վերջինիս հայրը՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնին կից պահպանության բաժանմունքի ոստիկան, ոստիկանության ավագ Վրմեն Խաչատրյանը: Կատարված քննությամբ պարզվել է, որ Վրմեն Խաչատրյանը օգոստոսի 10-ին՝ դեպքի նախորդ օրը, Երեւան ընդունել է հերթափոխը Խահիմակյան փողոցի «Տրիումֆ» սրճարանում, առավոտյան 09:30-ի սահմաններում հանձնել այն եւ վերոնշյալ ավտոմեքենայով «Տրիումֆ» սրճարանի բանվոր Սեյրան Սարգսյանին եւ ել. մոնտաժող Յուրի Սարգսյանին տեղափոխել է Երեւան քաղաքի Սարյան փողոց, այսուհետեւ անձնական գործերով ուղեւորվել Լոռու մարզի Ակներ գյուղ: Ջրեական գործի նախաքննությամբ վերոնշյալ երեք անձանց մասնակցությունը կատարված հանցագործությանը հիմնավորող տվյալներ ծեռք չեն բերվել:

Զանի որ Լուսինեն գրանցված էր Ավանի հայրական տանը, քրեական գործը հարուցվել է ոստիկանության Նորի բաժնում՝ ՀՀ քր.օր.-ի 118-րդ հոդվածի հատկանիշներով՝ ծեծ (ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը պատճում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամս ժամկետով): Օգոստոսի 12-ին Նոր Նորի քննչական բաժնը գործը վարույթ է ընդունել: Լուսինեի գործը քննող Նոր Նորի քննչական բաժնի քննիչ Կրտաշես Յովհաննիսիսի հավաստմամբ, հանձնարարություններ են տրվել ոստիկանության Նոր Նորի բաժնին՝ ծեծնարկելու օպերատիվ-հետախուզչական միջոցառումներ Լուսինե Բարսեղյանին ծեծի ենթարկող երկու հանցագործներին հայտնաբերելու ուղղությամբ, սակայն ձեռնարկված միջոցառումները դրական արդյունքներ չեն տվել:

Քրեական գործով նշանակվել է դատարժշկական փորձաքննություն: Նախաքննության ընթացքում Լուսինե Բարսեղյանը որպես տուժող ճանաչվելուց եւ հարցաքննվելուց հետո բազմից հրավիրվել է քննչական բաժն՝ քննչական գործողությունների կատարման, ինչպես նաև դատարժշկական փորձաքննությունն ավարտելու համար, սակայն իր գրանցածության պատճառով քննության չի ներկայացել: Չնեմիզը ցուց տվեց բազմաթիվ տեղեկանքներ այս մասին, որ Լուսինեին թե հեռախոսազանգերով, թե գրավոր բազմից ծանուցվել է դատական բժշկին ներկայանալու համար, որպեսզի վերջնական եզրակացնություն կազմվի նրա ստացած վնասվածքների ծանրության աստիճանի մասին: «Մի ամս ինձ համոզում էին, որ Նորից գնամ դատարժկի մոտ, ես բացատրեցի, որ ժամանակ չունեմ, եւ քանի որ մինչեւ այդ իրենք մատը մատին չէին տալիս, միայն իմ հետ էին քննչական գործողություններ կատարել, որեւէ իմաստ չեմ տեսել Նորից գնամ դատարժշկական փորձաքննության: Որքան ես հասկանում եմ, իրենք ուզում եին Նորից ինձ ուղարկել դատարժկի մոտ, ու եթե հետեւաքններ չլինեին, ավելի հեշտությամբ գործը փակեին»,- ասում է Լուսինեն:

Չայած Լուսինեն երկրորդ անգամ չի ներկայացել դատարժշկական հետազոտության, այդուհանդերձ, նոյեմբերի 11-ին դատարժիշկը նախնական հետազոտությունների հիման վրա կայացրել է եզրակացնություն, որի համաձայն՝ «Լուսինե Բարսեղյանի ստացած մարմնական վնասվածքները պատճառել են նրա առողջությանը թեթեւ վնաս եւ առողջության կարճատեւ քայլայում»: Նոյն օրը որոշում է կայացվել արարքը ՀՀ քր.օր.-ի 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելը) վերարակելու մասին: Քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քր.դատ.օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործությունը կատարող անձինք պարզված չլինելու հիմքով, որի օրինականությունը ստուգվել է Երեւան քաղաքի դատախազության կողմից:



«Գործով վարույթը կասեցվել է, չնայած օպերատիվ հետախուզական աշխատանքները մինչեւ օրս ել շարունակվում են», - փաստեց քննիչ Ա. Յովհաննիսյանը:

«Բնականաբար, ոչ ոքի չհայտնաբերեցին, չնայած ես նշել եի այնպիսի տվյալներ, որոնցով շատ հեշտ էր գտնել նրանց», - ասում է Լուսինեն: Նրա խոսքերով՝ նույն մեքենան, որը դեպքի պահին կանգնած էր հայրական տան շքամուտքի մոտ, մի քանի օր պահակություն է արել խմբագրության դիմաց: Կյան եղել է մուգ մանուշակագույն երանգով 06 «Ժիգուլի» մակսիչի ավտոմեքենա: Մեքենան նկատել են նաեւ խմբագրություն այցելած անձինք: Դեպքից մի քանի օր առաջ Կարեն անվամբ ուն մեկը եկել է նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրություն, Ներկայացել «Սարգիս Տիգրոսի» երիտասարդական թեկից, ցանկացել է տեսնել Լուսինենի: Լուսինեն այդ պահին զբաղված է եղել եւ խնդրել է սպասել մի քանի րոպե, իսկ երբ դուրս է եկել, Կարեն անվամբ Ներկայացող երիտասարդն արդեն չկար: Նոյն անձը եղել է նաեւ Լուսինենի ծնողների տանը: Լուսինենի հայրը՝ Նորայր Բարսեղյանը, պատմեց, որ այդ երիտասարդը հետաքրքրվել է Լուսինենով եւ ասել, որ ուզում է աշխատել «Հայկական ժամանակ» օրաթերթում: «Կվիր դեմքով, ոչ մուգ գովակի մազերով, 35 տարեկանին մոտ երիտասարդ էր: Ասաց, որ ուզում է «Հայկական ժամանակ»-ում աշխատել, մենք ել ասացինք՝ եթե ուզում եք աշխատել, գնացեք «Հայկական ժամանակ», մեր տուն ինչու՞ եք եկել, «Հայկական ժամանակ»-ը խմբագրի ունի, գնացեք խմբագրի մոտ», - պատմում է Նորայր Բարսեղյանը: Երիտասարդն ասել է, թե արդեն եղել է խմբագրությունում, այստեղից են ուղարկել Լուսինենի հայրական տուն: Լրագրողը պարզել է, որ «Սարգիս Տիգրոսի»-ում նման մարդ գոյություն չունի: «Ստուգողական աշխատանքներ են իրականացրել», - վստահ է Լ. Բարսեղյանը:

Լուսինենի վրա հարձակվողների ֆուտոռորոտը չի կազմվել, քանի որ Լուսինեն նրանց միայն ետեւից է տեսել, իսկ օգնության հասած մարդիկ անձանոթ են եղել: Ջևսիչը դժգոհում է, որ Լուսինեն պասիվություն է դրսեւորել այս գործի բացահայտման առումով, չի ներկայացել իրենց մոտ, չի օգնել գործի ընսուլյանը: Լուսինեն դրա բացատրությունն ունի: Նա վստահ է, որ ոստիկանությունը չի բացահայտի հանցագործներին, եւ նրանք ձեւական ընսուլյան են կատարում: «Նոյն երիտասարդը նաեւ զանգել է խմբագրություն, ես մնտավոր ժամը ասել եմ, եւ եթե ուզենային տեսնել, թե ով է, «ԱրմենՏելից» կառող էին վերցնել հեռախոսազանգերի վերծանումը եւ շատ հեշտ ճշտել, կարող էի տալ նրա նկարագիրը», - ասում է լրագրողը:


Կարեն Ներկայացող անձի ֆուտոռորոտ կազմելու անհրաժեշտություն, ըստ քննիչի, չի եղել: «Կարենը հանցագործներից մեկը չէ: Լուսինեն է կապում Կարենին այս դեպքին, բայց դա դեպքից շատ շուտ է եղել՝ մի շաբաթ առաջ: Ինքը չգիտի, ուղղակի ասում է, դե թող գար՝ պարզեինք», - ասում է քննիչը եւ վստահեցնում, որ

իրենք բոլոր վարկածները ստուգել են: Սակայն անհասկանալի է, թե ինչու է քննիչն այդքան համոզված, որ Կարեն անունով տղան ոչ մի կապ չունի դեպքի հետ: Թեեւ Կարենին տեսել են շատերը՝ Եւ Լուսինեն, եւ «Յայկական ժամանակ»-ի աշխատակիցները, եւ Լուսինենի ծնողները, քննիչը պնդում է, որ Լուսինեն Կարենի արտաքինն է կարգին չի հիշում, դրա համար էլ ֆոտոռոբուտ չի կազմվել: «Յորն էլ ենք քննել, նա էլ չէր կարողանում նկարագրել Կարենին», - ասում է Ա. Յարությունյանը: Լուսինեն հակառակն է պնդում, չեն հարցաքննվել նաև այդ տղային խմբագրությունում տեսած «Յայկական ժամանակ» օրաթերթի աշխատակիցները:

Վրտաշես Յովհաննիսյանն ասում է, որ հեռախոսազանգերի վերծանումով էլ ոչինչ հնարավոր չի եղել պարզել. «Մենք վերծանումներով փորձել ենք պարզել, Լուսինենին էլ կանչել ենք կոնկրետ համարներ ճշտելու համար, ինքը հրաժարվել է: Յնարավոր չի եղել պարզել, թե Կարեն անունով անձն ով է»: Յիշեցնենք, որ Լուսինեն նշել է մոտավոր ժամը, երբ այդ Կարենը զանգել էր խմբագրություն, եւ քննիչների համար դժվար չէր այդ ժամերի շրջանակում զանգերի ճշտումը, թեկուզ առանց Լուսինենի: Լուսինեն ասում է, որ այդ տղան չկար իր վրա հարձակվողների մեջ, հարձակվողները սափրագլուխներ էին, իսկ Կարեն անունով Ներկայացող անձը չեկ մազերով երիտասարդ էր: «Այդ բոլոր տվյալները նշեցուց հետո ցանկացած պրոֆեսիոնալ կարող էր հեշտությամբ հայտնաբերել դրանց, ոչ մի բան չարվեց, մի քանի ամիս ճգճեկուց հետո իրենք հայտարարեցին, որ գործը կասեցվել է, - պատմում է Լուսինեն, - ինձ էլ տեղյակ չեն պահել, ես պատահական աղբյուրներից եմ լսել, որ գործը կասեցվել է այն հիմնավորմամբ, որ չկա երկրորդ վկա, ապացուցների անբավարության պատճառով: Ի սկզբանե պարզ էր, որ չէր բացահայտվելու, որովհետեւ դա իմ լրագրողական գործունեության հետ էր կապված»:

Դեպքին նախորդող շրջանում լրագրողը հրապարակել է հոդվածների շարք պաշտոնյաների ենթադրվող չարաշահումների մասին: Մասնավորապես, հոդվածներ են եղել ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանի, Էրեբունու թաղապետ Միեր Սեղրակյանի, այն ժամանակ Սերժ Սարգսյանի աշխատակազմի դեկավար Յովիկ Աբրահամյանի գործունեության եւ ուսեցվածքի վերաբերյալ: «Սույնիսկ նշել եմ, որ առաջին կասկածյալը Էրեբունու թաղապետ Միեր Սեղրակյանն է (հանրությանը հայտնի է Թողխմախի Միեր մականունով-խմբ.), կարող են լինել նաև այլ մարդիկ, ասենք՝ Յովիկ Աբրահամյանը: Կամ մեկ ուրիշը: Չափի որ մեր հեռախոսները լսվում են, իրենք գիտեին, որ, օրինակ, ևյութ էր նախապատրաստում ոստիկանության չարաշահումների վերաբերյալ», - համոզված ասում է լրագրողը:

Վարկածները, ըստ քննիչ Ա. Յովհաննիսյանի, տարբեր են եղել Եւ դիտարկվել են լրագրողի մասնագիտական գործունեության ոլոր-



տում: «Աժ նախագահ Յովիկ Աբրահամյանի անունն էլ է տվել, գևայինք քննեի՞նք,- հարցնում է քննիչը Եւ հաստատում, որ չեն քննել:- Այդ վարկածն օպերատիվ հետախուզական միջոցառումներում մշակվել ու ստուգվել է, եթե կապ ունենար, մենք կանեինք»: Չննիչ Ա. Յովիանսիսյանը վստահեցնում է, որ բոլոր օպերատիվ-քննչական գործողություններն արված են Եւ շեշտում, որ «հմիշիալոց, գործը նախարարի կոնտրոլի տակ է եղել, ըսդիհուած մինչեւ նախագահի աշխատակազմ»:

«Հետքը» գրավոր դիմեց ՀՀ գլխավոր դատախազին՝ պարզելու, թե ինչու չի կազմվել Կարեն անունով Ներկայացող անձի ֆուտոռորոտը, ինչու չեն ստուգվել հեռախոսազերը, չեն հարցաքննվել «Յայկական ժամանակ»-ի աշխատակիցները: Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված մեր նամակի՝ Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Վ. Շահինյանը պատասխանել է. «...Լուսինը Բարսեղյանին մարմնական վնասվածք հասցնելու փաստի առիթով հարուցված քրեական գործով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից Երեւան քաղաքի Ազգային նոր նոր համայնքների դատախազին տրվել է գրավոր ցուցում՝ դիմումում նշված փաստերի ստուգման նպատակով համապատասխան քննչական գործողություններ կատարելու մասին»:

Նոյնափակ մի նամակ էլ «Հետքը» ուղղել էր ոստիկանապետ Ալիկ Սարգսյանին:

2009 թ. ապրիլի 8-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունից ստացանք պատասխան 1-ին վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ Ս. Ծաղկյանի ստորագրությամբ, որտեղ, սակայն, չկար մեր նշած հարցերից եւ ոչ մեկի պատասխանը: Մեջբերենք այդ պատասխան-գրությունից մի հատված.

«...Ինչ վերաբերում է գրությամբ նշված այն հանգամանքներին, որ քրեական գործի նախաքննության ընթացքում լիարժեք քննչական գործողություններ չեն կատարվել Եւ թույլ տրված անփութության հետեւանքով է, որ լրագրող Լ. Բարսեղյանի նկատմամբ կատարված հանցագործությունը չի բացահայտվել, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ նոր նոր քննչական բաժնի վարույթում քննվող քրեական գործի նյութերի մակրազնին ուսումնասիրությամբ պարզվել է, որ գործի նախաքննության ընթացքում քրեական վարույթը իրականացնող մարմնի կողմից անշեղորեն պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները, ճեղսարկվել են օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օրյեկտիվ հետազոտման համար, ինչպես նաև նախաքննության ընթացքում կատարվել են անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները»:

Լուսինե Բարսեղյան. «Ո ՌԵՊՐԵՆԵ գՈՅԵ՛, Ո ՌԵ զՈՒՅՈ Ո ԲՈՒՇՈՒՇՈՒԵ՛»




Լուսանկարը՝
Գագիկ
Ճամշյանի

«**Բ**ետքի» հրապարակումից հետո «Դայկա» կան ժամանակ» օրաթերթի խմբագրություն են այցելել քննիչն ու ոստիկանները, նորից են հարցաքննիկները և աշխատակիցների: Դրանից հետո Լուսինեին եւ մի քանի աշխատակիցների: Դրանից հետո Լուսինե Բարսեղյանին ում Կարենի կողմից կատարված հեռախոսազանգը պարզելու համար ոստիկանությունը սկսել է դեպքի օրը կամ այդ շրջանում Լուսինեին զանգահարած բոլոր անձանց հրավիրել ոստիկանություն եւ հարցաքննել: «Ակնհայտորեն փորձել են թուղթ սեւացնել, որ ցույց տան, թե իր գործ են անում: Ոստիկանությունը հրապարակումից հետո ինչ-որ միջոցներ եր սկսել ծերք առնել՝ թերեւս ցույց տալու համար, որ գործ են անում: Տայրահետ դեպքում իրենք կարող են իմ նշած հեռախոսազանգի վերծանումը վերցնել, ինչ իսկդիր կար, փոխանակ այդքան մարդկանց կամքեին ոստիկանություն», -ասում է Լուսինե Բարսեղյանը:

Լուսինեի հորը եւս կանչել են հարցաքննության: Թաղայինը գնացել եւ զգուշացրել է Նորայր Բարսեղյանին, որպեսզի լրացրացիք հարցաքննության գնա: Սակայն Ն. Բարսեղյանը եւս չի գնացել. «Ես ինչ-որ պետք ե՝ ասել եմ, նկարագրել եմ այդ անձին, որ տեսնեմ՝ կճանաչեմ», - ասաց Լուսինեի հայրը:

Հունիսի 30-ի թվագրմամբ «Դետքը» Գլխավոր դատախազության Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ա. Սարուխյանի ստորագրությամբ ստացավ մեկ այլ պատասխան. «...Լուսինե Բարսեղյանին մարմնական վկասվածք հասցելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք քննչական բաժնի կողմից կատարվել են մի շաբթ քննչական եւ օպերատիվ-հետախուզական գործողություններ, որոնք, սակայն, դրական արդյունքներ չեն տվել: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Լ. Բարսեղյանը, նրա հայր Ն. Բարսեղյանը եւ «Դայկական ժամանակ» օրաթերթի խմբագրության աշխատակիցները չեն համագործակցել նախաքննական մարմնի հետ, ինչի հետեւանքով անհնար է դարձել ում «Կարենի» ֆոտոռոբոտի կազմումը»:



Լրագրողը կարծում է, որ ոստիկանության այս գործողություններն ամբողջովին ծեւական կողմ են ապահովում: «Ոչ ել գնացել եմ լրացուցիչ հարցաքննության, որովհետեւ ես վստահ չեի, որ գնամ՝ ֆոտոռորտ կկազմեն: Ակնհայտ շոու են սարքում: Այն փաստերը, որոնք ես եի նշել, որոնց հետեւից եր պետք գնալ, ում ես եմ կասկածում, դա իրենք չեն արել», - հիմնավորում է Լուսինե Բարսեղյանը:

Թնախը «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրություն այցելության ժամանակ փորձել է հարցաքննել աշխատակիցներին, սակայն նույն հարցերին նորից պատասխանել աշխատակիցները չեն ցանկացել: «Նրանք գալիս են, մեր ամբողջ աշխատանքը ժամերով կազմալուծում ու անհմաստ հարցեր են տալիս, նույնը վերաշարադրում են: Ինչ-որ պետք էր, ես դեպքից անմիջապես հետո, հարցաքննության ժամանակ նշել էի: Ես ի սկզբանե գիտեի, որ այս գործը չի բացահայտվելու, բայց ես գնացել եմ, ինձ ժամերով հարցաքննել են, ամեն ինչ մանրամասն պատմել եմ», - ասում է Լուսինե Բարսեղյանը:

Արարատ Դավթյան

Ո՞ւստի կու մասս
Ուստի համարակալուն.
Ուստի առաջապահութեան, մե՞...



Հուսանկարը՝ Գագիկ Ծամշյանի

2008 թ. նոյեմբերի 17-ին աշխատանքների ժամանակակից «Հետք» գլխավոր խմբագիր Եղիկ Բաղդասարյանն իր ավտոմեքենայի մոտ երեք անձանց կողմից հարձակման ենթարկվեց: Սկզբից եւեթ որոշ լրատվամիջոցներ, որպես կատարվածի պատվիրատու, պարզ ուղղեցին այդ օրերին Մոսկվայում գտնվող Բնապահպանության նախկին նախարար, այժմ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանի ուղղությամբ:

Միջադեպից երեք օր առաջ

«168 ժամ» թերթում արտատպվել էր Եղիկ Բաղդասարյանի հոդվածը Վարդան Այվազյանի գործունեության մի դրվագի մասին («Նոր հանքավայր Յաղղանում: Վարդան Այվազյանի երազանքն իրականանում է»): Սակայն «Հետքում» այդ հրապարակմանը նախորդել էին մի քանի այլ մերկացնող հոդվածներ, որոնցում Բաղդասարյանը բացահայտել էր, թե ինչպես է նախկին նախարարը տիրացել Յայաստանի ընդերքի մի մասին՝ ինքն իրեն, հարազատներին կամ իր ենթականերին սվիրելով հանքավայրեր: Յենց այդ հոդվածաշարը մատնաշելով՝ դեպքից հետո իր տված առաջին ասուլիսում Վարդան Այվազյանը հայտարարեց, որ «Եթե նման մտադրություն ունենար, դա կանեք ավելի վաղ» եւ կտրականապես հերքեց միշադեպի հետ իր առնչությունը:



Ի թիվս բարձրաստիճան պաշտոնյաների եւ հիվանդանոցում Բաղդասարյանին այցելած վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ կատարվածը դատապարտեց նաեւ նախագահ Սերժ Սարգսյանը՝ իրավապահներին խիստ հանձնարարելով «հնարավորինս սեղմ ժամկետներում բացահայտել հարձակման հեղինակներին եւ պատասխանատվության կանչել բոլոր մեղավորներին»: Յայտարարվեց, որ անձամբ ոստիկանապետը գործը վերցրել է իր հսկողության տակ, իսկ բարձրաստիճան ոստիկանները, հղում անելով իրենց «Ներքին համոգմունքներին», նշում եին, թե գործը շատ շուտով կրացահայտվի:

Այդ օրերին, հաշվի առնելով ոստիկանության գործելաձեւը, դժվար եր հասկանալ, թե ինչի վրա եին հիմնված «Ներքին համոզմունքները»: Ոստիկանությունը հավաստիացնում էր, որ «ամենափորձառու աշխատողների մասնակցությամբ կազմվել է օպերատիվ խումբ, որն իրականացնում է անհրաժեշտ բոլոր օպերատիվ-հետախուզական գործողությունները»: Այդ «փորձառուները» դեպքից անմիջապես հետո կատարել եին տեղազնություն եւ գործին առնչվող որեւէ իր չեին հայտնաբերել: Մինչդեռ միջադեպից շուրջ 6 ժամ անց Եղիկ Բաղդասարյանի որդին դեպքի վայրում գտել է հոր մեքենայի բանալիները, լուսանկարչական սարքը եւ բռնարարի պատահական ականատեսի գազային ատրճանակից արձակված դատարկ գնդակի պարկուճը:

Բացի այդ, Եղիկ Բաղդասարյանը տեսել է իր վրա հարձակվողներից մեկի դեմքի մի հատվածը, սակայն իրավապահներն այս հանգամանքի վրա ուշադրություն չեն դարձրել: «Կռվի ժամանակ, երբ մեկին հարվածեցի, ևս ետ-ետ գնաց, եւ ինչ-որ տեղից նրա այտոսկրին լուս ընկավ: Առաջին օրերին ինձ թվում եր, որ եթե նրան տեսնեմ, կճանաչեմ: Բայց հետո այդ պատկերը հիշողությունից ամբողջությամբ ջնջվեց,- ասում է Բաղդասարյանը:- Իրավապահներն այս հարցով չեն ել հետաքրքրվել: Յիմա եմ հասկանում, որ նրանք դրա կարիքը չունեին, որովհետեւ առաջին օրվանից փնտում եին այդ տղային՝ Կարեն Յարությունյանին»:

Եղիկ Բաղդասարյանի վրա հարձակվողները նրան շարունակել են հարվածել նույնիսկ անգիտակից վիճակում եւ փախել են միայն միջադեպին պատահաբար ականատես դարձած ոստիկանության ուսումնական կենտրոնի տեսուք՝ որ արձակած կրակոցից հետո: Դենց այդ տեսուքն էլ՝ Նորիկ Ավետիսյանը, հարձակվողների մեջ ճանաչել է իրենց բակի նախկին բնակչին: Տեսուչ Ավետիսյանի գրավոր գեկուցագրի հիման վրա կազմվել է այդ բնակչի՝ Կարեն Յարությունյանի նկարագիրը, եւ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:


«Հետախուզում» բառի կիրառությունն այս պարագայում առնվազն տեղին չէ: Կարեն Յարությունյանի պաշտպան Վահագն Մանուկյանը հայտարարել է, թե իր պաշտպանյալին դեպքից 8 օր անց ծանուցագրով որպես վկա հրավիրել են ոստիկանության Կենտրոնի բաժին եւ անմիջապես կալանավորել: Իսկ Կարենի մայրը՝ Մարինե

Մարկոսյանը, թերթերից մեկին ասել է, թե միշադեպի օրը ինքը «կաթիլայինի տակ» գտնվել է «Երեբուխի» հիվանդանոցում, եւ Կարենը ողջ օրը եղել է Նրա կողքին: Ըստ «Անավոտ» օրաթերթի՝ այդ մասին ցուցմունք են տվել նաեւ Մարինե Մարկոսյանին վիրահատած բժիշկը եւ բուժքույրը: Մեր տեղեկություններով, սակայն, այս ալիքին մտացածին է, եւ նախաքննությամբ այս արդեն իսկ հերքվել է: Եվ հետո՝ Կարեն Յարությունյանը հրաժարվել է ցուցմունքներ տալուց, ինչը շատ տարօրինակ է ալիքի գոյության պայմաններում: Վերջինս միայն նշել է, որ կատարված հանցագործության հետ ինքը որեւէ կապ չունի:

Նախաքննական մարմինը Կարեն Յարությունյանին մեղադրանք է առաջադրել «Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից դիտավորությամբ առողջությանը միշին ծանրության վնաս պատճառելով» համար (Թրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ): Նրա պաշտպան Կահագին Սանուկյանը հայտարարել է, որ «մեղադրանքն առաջադրելու հիմքեր չեն եղել», «քանի որ Եղիկ Բաղդասարյանի դատարժչական փորձաքննության ենթարկելու եզրակացությունը թվագրված է դեկտեմբերի 8-ով, այսինքն՝ մարդուն մեղադրանք է առաջարկվել, երբ դեռ պարզ չէր, թե տուժող մարմնական ինչպիսի վնասվածքներ եր ստացել՝ ծանր, միշին, թե՞ թերեւ»:

«Դետարևնությունն իրավունք» թերթը գրեց, որ իրականում քննիչները Կ. Յարությունյանի գործողություններին միտումնավոր տվել են քրեական վիճակը գնահատական, այս դեպքում, երբ վերջինի արարքը լիովին համապատասխանում է Թրեական օրենսգրքի 34-112 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին՝ «Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցափորձ», որևէ առանձին դաժանությամբ կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից (այս դեպքում հանցագործներին կապառնար 5-10 տարվա ազատազրկում): Ավելին, ըստ հոդվածգրի եզրակացության՝ թե՛ն Կ. Յարությունյանի նկատմամբ հայտարվել էր հետախուզում, «ինչ-որ գորեղ անձնափորության միջնորդությամբ ոստիկանությունը նրան չի ձերքակալել եւ հնարավորություն է տվել ինքնակամ ներկայանալու, որպեսզի ներկայում առաջադրված մեղադրանքի համատեքստում (պատճենը է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով) հետագայում դատարանը նրա նկատմամբ կիրառի համեմատաբար մեղմ պատիժ»:

Այս տարվա փետրվարի 26-ին Գլխավոր դատախազի ցուցումով գործը ոստիկանությունից տեղափոխվեց Երեան քաղաքի քննչական վարչության վարույթ: Թե Կենտրոնի ոստիկանության իրականացրած նախաքննության ինչը չի բավարարել դատախազությանը, պարզ չէ: «Գլխավոր դատախազությունը, որպես նախաքննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին, գործի նյութերն ուսումնասիրելիս նպատակահարմար է գտել այն տեղափոխել



Երեւանի քննչական վարչություն: Այլ բան ասել չեմ կարող», - նշել էր գլխավոր դատախազի մամլո քարտուղար Սոնա Տռուցյանը:

Փետրվարի 27-ին հրավիրած մամլո ասուլիսի ժամանակ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը համոզմունք հայտնեց, որ կարճ ժամանակահատվածում՝ 10-15 օրում, նախաքննությունը կավարտվի, եւ գործը կուղարկվի դատարան: Կյդ ժամկետները լրացան, եւ գործը հայտնվեց դատարանում՝ առանց հանցագործության դրդապատճառի, մյուս երկու հարձակվողների եւ կատարվածի պատվիրատուի ինքնությունը բացահայտելու:

«Եթե պատվիրատուներին չգտնեն, կարծում եմ՝ ըսդիանրապես իմաստ չունի այդ տղային պատժելը: Ի վերջո, սեւ գործ անողներ միշտ ել կգտնվեն», - ասում է Եղիկ Բաղդասարյանը եւ Նշում, որ եթե սկզբում քննիչին որեւէ կասկածյալի անուն չէր տալիս, հիմա արդեն կասկածելու հիմքեր ունի:

«Կարեն Յարությունյանը եւ Նրա մայրը մտերիմ հարաբերությունների մեջ են Վարդան Այվազյանի ընտանիքի հետ: Եթե ինձ վրա հարձակվողներից մեկը Կարեն Յարությունյանն է, ուրեմն նման պատահականություն չի կարող լինել: Չեմ բացառում, որ խմբի թիկունքում Վարդան Այվազյանն է կամ Նրա շրջապատի մարդիկ», - ասում է Ե. Բաղդասարյանը:

Այս «պատահականությունների» առնչությամբ մենք փորձեցինք մեկնաբանություններ ստանալ և անուն Վարդան Այվազյանից: Իր օգնականի եւ վարորդի միջոցով տեղեկանալով, թե ինչի մասին ենք գրուցելու, և ակտեց ուշացնել պատասխանը, ապա Նրա վարորդը փոխանցեց, թե «Վարդան Այվազյանը հիվանդ պառկած է», եւ մեր գորոյցն այդպես ել չստացվեց:

ՊՐԵՄ ՌԵՎՈ ՌԵՎՈՒՇՈ՝ ՌԵՎՈ ՌԵՎՈՒՇՈՒՇՈ ԵՐ ՌԵՎՈ ԵՐ ՌԵՎՈ ՌԵՎՈՒՇՈԵՐ ՌԵՎՈ ՌԵՎՈՒՇՈՒՇՈ ՌԵՎՈԵՐ

2009թ. հունիսի 4-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում, դատավոր Մ. Մարտիրոսյանի նախագահությամբ, սկսվեց Եղիկ Բաղդասարյանի վրա տեղի ունեցած հարձակման փաստի առթիվ հարուցված քրեական գործի դատական քննությունը: «Եթե հանցագործության պատվիրատուներին չպետք է գտնեն, անհմաստ է Կ. Յարությունյանին դատապարտելը», - դատարանում ասաց Եղիկ Բաղդասարյանը: Յարցաքննվեցին տուժող Եղիկ Բաղդասարյանը, Նրա որդին՝ Տիգրան Բաղդասարյանը եւ Բուզանդի 1/3 շենքի (որտեղ տեղակայված է «Հետքի» խմբագրությունը) պա-


հակ Կարապետ Աթոյանը: Վերջին երկուսը գործում ներգրավված են որպես վկաներ, սակայն նրանց ցուցմունքները, ըստ Էռլթյան, քրեական գործի հետ եական առևտություն չունեն:

Եղիկ Բաղդասարյանի հարցաքննության ժամանակ դատավորը հետաքրքրվեց, թե արդյոք նա կարո՞ղ է ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, որը քիչ թե շատ դատարանին կլողմնորդի՝ կոնկրետ ու՞մ նախաձեռնությամբ է հանցագործությունն իրականացվել: «Կարեն Յարությունյանի կալանավորումից հետո նրա մայրը եկել էր մեր տուն եւ ասաց, թե «տղային գլխին սարցում են»: Պատասխանեցի, որ ես այս մարդը չեմ, որի միջոցով կարդանան ինչ-որ մեկի գլխին սարցել: Հետո Կարենի մայրը պատմեց, որ ինքը Կարդան Այվազյանի որդու բժիշկն է, պարբերաբար, ինչքան գիտեմ՝ գրեթե ամեն օր նրանք հանդիպում են: Դրանից հետո ինձ մոտ կասկածներ առաջացան, որովհետեւ ես բազմաթիվ հրապարակումներ եմ ունեցել, այդ թվում՝ դեպքից մի քանի օր առաջ հոդված եմ գրել Կարդան Այվազյանի բիզնեսի մասին: Եթե Կ. Յարությունյանը Կարդան Այվազյանի շրջապատից է, վերջինիս որդու հետ շատ մոտ է, ինարավոր է, որ Այվազյանը միշաղեափի հետ կապ ունի», - ասաց է. Բաղդասարյանը:

Դատավորը հետաքրքրվեց նաև, թե արդյոք տուժողը չի՞ պատրաստվում ներկայացնել որեւէ գումարային պահանջ: «Ես ամբաստանյալի նկատմամբ քաղիաց չեմ ներկայացրել, եւ ընդհանրապես, գտնում եմ, որ եթե հանցագործության պատվիրատուններին չպետք է գտնեն, անմիմասն է Կ. Յարությունյանին դատապարտել, եթե նույնիսկ հարձակվողներից մեզը նա է», - կրկնեց Եղիկ Բաղդասարյանը:

Հունիսի 10-ի դատավարության ժամանակ Եղիկ Բաղդասարյանն անդրադապավ քննիչների աշխատանքում թույլ տրված բացթողումներին: «Կարեն Յարությունյանի եղբոր (մոր երկրորդ ամուսնու որդու) անունով երեք քջային հեռախոսահամար է գրանցված: Առայժմ քրեական գործում եղած այդ վերծանումներն եմ ուսումնասիրում: Այնուո՞ր զանգեր կան, որոնցով պեսոք է ընկինքները գրանցեին: Խոսքը հատկապես դեպքին նախորդող եւ հաջորդող մի քանի ժամերի հեռախոսազետերին է վերաբերում: Ես համոզված եմ, որ եղբոր անունով եղած այդ հեռախոսահամարներից մեզը միշաղեափի օրը եղել է Կարեն Յարությունյանի մոտ: Սակայն սրանով առանձնապես չեն գրանցել քննիչները: Բաներ կան, որոնք քննչական գործողություններով պիտի պարզվեին, մեզ՝ լրագողողներիս համար դժվար է դա անել եւ ինարավոր է՝ ամիսներ պահանջվեն դա անելու համար», - ասաց Եղիկ Բաղդասարյանը:

Կարեն Յարությունյանը նախաքննության ընթացքում հրաժարվել էր ցուցմունք տալուց: Բայց դատարանում նա պատասխանեց կողմերի բոլոր հարցերին՝ պնդելով, որ ինքը մեղավոր չէ: «Ես տան եմ եղել եւ կարող եմ դա ապացուցել: Ինձ ոստիկանությունում ասել են՝ դու ես եղել, պատմիր՝ ո՞նց է եղել: Ես ել ասել եմ՝ ես չեմ եղել.



բան չունեմ պատմելու»,,- ասաց Կ. Յարությունյանը: Ամբաստանյալը նշեց, թե միջադեպի օրը ժամը 3-ից 4-ի սահմաններում ինքը «Երեքուսի» բժշկական կենտրոնում վիրահատված մորք տեղափոխել է տուն եւ ամբողջ օրը տնից դուրս չի եկել: Նրա խոսքերով՝ դա կարող են հաստատել բնակարանում մորք՝ Մարինե Մարկոսյանին ինսամած բժշկուիին՝ Լուսինե Թովմասյանը, եւ բուժքույրը՝ Նահիա Մուրայյանը: Վերջինս Կարենի մոր մտերիմ ընկերուիին է:

Պաշտպան Վահագն Սանուկյանը միջնորդեց հիշյալ երեք անձանց դատարանում հարցաքննել: Սակայն դատավոր Սևացական Մարտիրոսյանը միջնորդությունը մերժեց՝ պատճառաբանելով, որ Մարինե Մարկոսյանը եւ Վերջինիս մտերիմ ընկերուիի Նահիա Մուրայյանը գործի ելքով շահագրգուված անձինք են, բացի այդ՝ ողջ դատաքննության ընթացքում գտնվել են դահլիճում: «Իսկ Լուսինե Թովմասյանը նախաքննության ժամանակ որպես վկա ցուցմունը է տվել, որ Կ. Յարությունյանը դեպքի օրը բնակության վայրում է եղել մինչեւ ժամը 19-ի սահմանները: Տվյալ պարագայում որեւէ կերպ չի հերքվում կամ հաստատվում ամբաստանյալի կողմից ժամը 19:50-ի սահմաններում իրեն վերագրվող արարքը կատարելու կամ չկատարելու հանգամանքը», - ասաց դատավորը:

Ավարտելով դատաքննությունը՝ դատարանը հայտարարեց, որ անցնում է վիճաբանությունների փուլին: Մեղադրող Յայկ Բայյանը իր ճառում նշեց, որ Կ. Յարությունյանին առաջադրված մեղադրանքը լիովին հիմնավորված է («Խուզիգանություն») եւ միջնորդեց նրան դատապարտել 5,5 տարվա ազատազրկման:

Յունիսի 23-ին Կ. Յարությունյանին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյափի դատարանը, Սևացական Մարտիրոսյանի նախագահությամբ, դատապարտեց 5 տարվա ազատազրկման: Նա մեղավոր ճանաչվեց Ջրեական օրենսգրքի «Խուզիգանություն» հոդվածի հատկանիշներով («Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից դիտավորությամբ առողջությանը միշտին ծանրության վեսա պատճառել»):

Պաշտպանական ճառք հրապարակելիս փաստաբան Վահագն Սանուկյանը մատևանաշեց նախաքննական մարմնի կողմից թույլ տրված տարբեր խախտումներ եւ դատարանին միջնորդեց «Կարեն Յարությունյանին արդարացնել՝ նրա մեղավորությունը կատարված հանցանքում ապացուցված չլինելու պատճառվ»:

«Իսկապես, նախաքննությունը վաստ է կատարված: Ես ել եմ ուզում համոզվել, որ, իրոք, ինքն (Կ. Յարությունյան) Է եղել: Չսայած, մենք պարզել ենք, որ կան բաներ, որոնք Կ. Յարությունյանը ճիշտ չի ասել: Նա նշել է, որ դեպքի օրը գտնվել է հիվանդանոցում՝ մոր մոտ, բայց այդ ժամին իրականում եղել է տանը եւ հեռախոսով մի քանի անգամ մտել իստերնետ՝ «Աղնակլասնիկ» կայքեց, զանգեր են եղել», - նկատեց Եղիկ Բաղդասարյանը:

Որպես նախաքննական մարմի կատարած աշխատանքի եական բացթողում՝ Ե. Բաղդասարյանը նշեց նաեւ այն հանգամանքը, որ դեպքի օրը՝ ժամը 22-ի եւ 23-ի սահմաններում, Կ. Յարությունյանի տան հեռախոսից մի քանի անգամ զանգահարել են Մոսկվայում գտնվող Վարդան Այվազյանին:


«Այս գործով հարցաքննվել է նաեւ Վարդան Այվազյանը, որը կապեր ունի Կարեն Յարությունյանի ընտանիքի հետ: Բայց ընկիցի մտքով չի անցել այդ զանգերի կապակցությամբ որեւէ հարց ուղղել նրան,- ասաց Ե. Բաղդասարյանը,- հաջորդ օրը 6 անգամ նորից զանգ է եղել, եւ մինչեւ Կարենի կալանավորումը զանգերի պարբերականությունը նվազել է»:

«Յետքի» խմբագիրը հույս հայտնեց, որ գործից անշատված մասով, որով ընթանում է նախաքննություն, այնուամենայնիվ, որոշակի հանգամանքներ կրացահայտվեն:

Յունիսի 25-ին Գլխավոր դատախազի կողմից գրավոր գուցում է տրվել ոստիկանությանը՝ ակտիվացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումները «Յետաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ, «Յետքի» գլխավոր խմբագիր Եղիկ Բաղդասարյանի նկատմամբ կատարված հարձակման մյուս հանցակիցներին հայտնաբերելու ուղղությամբ: «Մասնավորապես՝ խնդիր է դրվել հայտնաբերել լրագրողի վրա կատարված հարձակման ականատես այլ վկաների, ստուգել տուժողի, ԶԼՄ-Ների կողմից հսկեցրած վարկածները, պարզել Կ. Յարությունյանի հետ կապի մեջ գտնվողը, դեպքի հետ հնարավոր առնչություն ունեցող անձանց: Միաժամանակ մատնանշվել են կոնկրետ այն գործողությունները, որոնց կատարումն, ըստ դատախազության, անհրաժեշտ է լրագրողի կողմից առաջ քաշված վարկածը լիարժեք ստուգելու եւ ընդհանրապես անշատված մասով պարզաբանման ենթակա բոլոր հանգամանքները լիարժեք բացահայտելու համար», - նշված է դատախազության տարածած հաղորդագրության մեջ:

Սակայն առ այսօր մյուս հանցակիցների, առավել եւս՝ պատվիրատուների մասով ոչինչ բացահայտված չէ: Այս տարվա հոկտեմբերի 27-ին Ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության (6-րդ վարչություն) պետ Յունան Պողոսյանը հայտարարեց, թե Եղիկ Բաղդասարյանի գործից անշատված մասով «ամենօրյա աշխատանքները» շարունակվում են, ու դրանք գտնվում են անձամբ ոստիկանապետի հսկողության տակ:

Իսկ նոյեմբերի 24-ին Վերաքննիչ դատարանը, ժորա Յովսեփյանի նախագահությամբ, անփոփոխ թողեց Կարեն Յարությունյանի դատավճիրը՝ ուժի մեջ թողնելով վերջինիս նկատմամբ սահմանված 5 տարվա ազատազրկումը:



Արարատ Գալքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՆԴԻ

2008թ. մարտի 13-ի կեսօնին «Արավոտ» եւ «Զորորոր իշխանություն» օրաթերթերի ֆոտոլրագորդ Գագիկ Շամշյանի նկատմամբ բռնություն էր կիրառվել, եւ նրան անշարժ վիճակում տեղափոխել էին հիվանդանոց: Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի անվտանգության աշխատակիցները ծեծել ու հարվածներ էին հասցրել նրա սեռական օրգաններին, սակայն բժիշկներն ասել են, որ լրագրողը լուրջ վնասվածքներ չի ստացել. որոշ ինտիմներ կան միզուկի հետ, բայց դա վտանգավոր չէ:

Ֆոտոլրագորդ Գագիկ Շամշյանն անձամբ պատմում է Վ. Բրյուսովի անվան համալսարանում իր հետ կատարվածի մանրամասները. «Կաշառակերության հետ կապված ակցիայից հետո ուսանողները ուղղով գնացին Վ. Բրյուսովի անվան համալսարան, որպեսզի լսարանում որոշեն իրենց հետագա քայլերը: Լրագրողներով միացանք նրանց: Եթե ուսանողները մուտք գործեցին համալսարան, ես ել նրանց հետեւից մտա շենք, բարձրացա վերեւ ու սկսեցի նկարել:

Չնայած Յանրային հեռուստաթարներության լրագրողը համալսարանի անվտանգության 3 աշխատակիցներին ցույց տվեց իր վկայականը եւ խնդրեց թույլ տալ ներս մտնել, այդ աշխատակիցներից մեկն ասաց՝ ոչ մեկդ չեք մտնի ստեղ, ես կատարում եմ կառավարության հանձնարարականը: Ես ել վերեւից հարցրի՝ ինչո՞ւ պետք է կառավարությունը լրագրողների աշխատանքը խոչընդոտելու հանձնարարական տար համալսարանին: Բա' արա, դու ո՞նց ես հելել ըտեղ: Ասացի՝ արայով չխոսես եւ չփորձես խոչընդոտել լրագրողների աշխատանքին:



Հուսանկարներ՝ Յասմիկ Միքատյանի




Վյո պահին նրանցից մեկը՝ ճաղատ գլխով, բարձրացավ վերեւ ու հայիոյանք ներ տալով՝ ոտքով ուժեղ հարվածեց սեռական օրգաններիս: Ես ընկա գետնին, իսկ նրանք հարձակվեցին վրաս: Ոտքով պաշտպանվում էի Եւ պատասխանում նրանց հայիոյանքներին: Լրագրողները միշամտեցին, վիճաբանություն սկսվեց, որը տեղում մոտ 20 րոպե:

Մի հաւա շահել տղա եկավ, խնդրեցի, որ ներկայանա, բա՝ Ես ծամշյան Գագոն Եմ (հետո ճշտեցի, որ նա համալսարանի պրոռեկտորն ըր), դուրս արի: Թիշ անց եկավ նաև համալսարանի ռեկտոր Սուրեն Շոյանը, Ես մենք դուրս եկամք համալսարանից:

Համալսարանի անվտանգության ծառայության պետք եկավ, բա՝ թյուրիմացություն Եղել, իրար չեք հասկացել, ասացի՝ խնդիր չկա, Ես քեն չեմ պահում: Հանգիստ մեզ համար հարցազրույց էինք վերցնում, բայց զգում էի, որ ոսքերս թրչում են: Ծիշտն ասած՝ ինձ թվաց, թե հարվածի արյունքում միզել եմ: Բայց զնացի հարեւանությամբ գտնվող «Ազատություն» ռադիոկայանի գրասենյակ Եւ զուգարանում տեսա, որ արյուն էր գալիս»:

ՀՀ ոստիկանության լրատվության վարչության տարածած հաղորդագրության համաձայն՝ Գ. Ծամշյանին Երեւանի Վ. Բրյուսովի անվան համալսարանի մասնաշենքում մարմսական վսասվածք Են պատճառել Եւ նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտել Են համալսարանի անվտանգության ծառայության ղեկավար, 33-ամյա Կարեն Միրիջանյանը, համալսարանի պահուղուներ, 41-ամյա Արամ Գեւորգյանը Եւ 28-ամյա Էղգար Պապոյանը: Վերջիններս բերման Են ենթարկվել ոստիկանության Կենտրոնի բաժին, սակայն հետագայում ստորագրությամբ բաց Են թողնվել:

Զրեական օրենսգրքի 164 («Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը») Եւ 118 («Ծեծը») հոդվածների հատկանիշներով հարուցված քրեական գործը ընսվում էր ոստիկանության Կենտրոնի բաժնում: Նախաքննության ընթացքում Երեք Մեղադրյալներն Ել ընդունել են իրենց մեղսագրվող արարքները: Սակայն Միրիջանյանը, Գեւորգյանը Եւ Պապոյանը, Ազգային ժողովի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման համաձայն, ազատվեցին պատժի կրումից, ու նրանց դեմ հարուցված քրեական գործն այդպես էլ դատարան չմտավ:



Արարատ Գալթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Պ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ,
ՊՐԵՄԻՆԻՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐԵՄԻՆԻՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2009թ. ապրիլի 30-ի գիշերը Նալբանդյան-9 հասցեում գտնվող հրապարակի մոտ ծեծի ենթարկվեց «Armenia today» եւ «Bagin.info» լրատվական կայքերի կայքի համակառողո, «Բագին» փաստաբանական գրատեսյակի տևորեն կրգիշտի Կիվիրյանը: «Երերուսի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժնում վերջինիս մոտ ախտորոշվել էր «պոլիստրավմա»:

Իբրև բօնարարքի դրդապատճառ սկսեցին շրջանառվել տարբեր վարկածներ: Մի շարք կազմակերպություններ, մասնավորապես «Հայ Արհական Սիարանության Գերագույն խորհուրդ»-ը, «Լուսանցք» հասարակական-քաղաքական շաբաթաթերթը, «Հայարի.օրգ» կայքերը եւ Հայ Ազգայնականների Համախմբման բազմաթիվ անդամներ հայտարարեցին, թե չեն բացառում, որ Ա. Կիվիրյանի վրա հարձակումը «Զավակամի համաճիկ իշխանավորների ծեռքի գործն է»՝ պայմանավորված Զավախսի ինդիրի շուրջ Կիվիրյանի ունեցած դիրքորոշմամբ:

Որոշ լրատվամիջոցներ ել գրեցին, թե կատարված կարող է կապված լինել ոչ թե Կիվիրյանի, այլ նրա կնոշ՝ փաստաբան Լու-



Լուսանկարներ՝ Գագիկ Ճամշյանի



լու են գործել ել ավելի սկզբունքային դիրքերից»: Այնուամենայնիվ, վերջինս հակված է մտածելու, որ կատարվածը կապված է ամուսնու լրագրողական գործունեության հետ:

«Իմ փաստաբանական գործունեության հետ դա կապված չէ... Ես նույնպես համոզված եմ, որ Արգիշտի Կիվիրյանին փորձել են սպանել: Ես նույնիսկ լսեցի, որ փախչողներից մեկն ասաց՝ մեկ ա, քեզ սպանելու ենք», - պատմեց Լուսինե Սահակյանը:

Ա. Կիվիրյանի վրա հարձակվողները դեպքի վայրում թողել են բազմաթիվ հետքեր, այդ թվում՝ փայտե ձողը, որով հարվածներ են հասցել Արգիշտիի գլխին, եւ արձակված կրակոցների պարկումները: Բայց իրավապահները «տեղազնուում» իրականացնելիս կրակոցի հետեւանըները՝ պարկումները, այդպես էլ չէին հայտնաբերել: Ավելին՝ նրանցից մեկը փորձել էր Կիվիրյանի ընտանիքի անդամներին համգել, որ վերջիններու սխալել են, իրականում կրակոցներ չեն եղել, ու ուրով հարվածելով մուտքի դրանք՝ հայտարարել եր, թե գուցե նման ձայն է լսվել, իսկ իրենք շինութել են կրակոցների հետ:

Սակայն միշաղեափից մոտ կես ժամ անց՝ հետաքննիչներից առաջ, դեպքի վայր էր ժամանալ նաեւ ֆուտոլրագոռող Գագիկ Շամշյանը: Նրա լուսանկարներում, արյունոտ փայտե ձողից բացի, Փիքսվել էին նաեւ հանցագործների կրակած գնդակների պարկումները: Յետագայում Կիվիրյանը նույնպես հաստատեց, որ կրակոցներ հնչել են, պարզապես իրեն «հաջողվել էր ձեռքով հեռացնել գենքը, ինչի արդյունքում էլ դրանք շեղվել են այլ ուղղությամբ»:



Արգիշտի Կիվիրյանը սկզբում հրաժարվել էր իրավապահների հետ համագործակցելուց, մասնավորապես՝ ցուցմունք տալուց:

«Նախ՝ քրեական գործ է հարուցվել «Ղիտավորությամբ առղջությանը թեթև վնաս պատճառելու» մերադրանքով, այսինչ կատարվածը «Սպանության փորձ» է: Յետո՛ դեպքի վայրից անհետացել են պարկումները: Երրորդ՝ ոստիկանությունը տեղեկացրել է, թե կատարվածի մասին ահազանգ է ստացել «Երերունի» բժշկական կենտրոնից, այնինչ ամուսնուս սկզբում տեղափոխել են շտապօգնության հիվանդանոց, որտեղ եղել են նաեւ ոստիկաններ: Փաստ է, որ ահազանգը տրվել էր,- պարզաբանում է Կիվիրյանի կինը: - Այս բոլոր մեզ հիմք է տալիս պնդելու, որ քննությունն օբյեկտիվ չի կատարվում, և մենք որեւէ հոկյս չունենք, որ այս օբյեկտիվ կատարվի: Դրա համար է Արգիշտին հրաժարվել է ցուցմունք տալուց: Նա համարում է, որ չպետք է գքաղվել մի բանով, որն ի սկզբանե ապարդյուն է»:

Յայաստանի հաստաբանների պալատի նախագահ Ուլրեն Սահակյանն իրավապահների արարքին որակում տալիս տատանվում էր դիտավորության եւ իրավական անգրագիտության միջեւ: Ո. Սահակյանը մասնամասնեց, որ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ Թր. օր.-ի 117-րդ հոդվածով գործ կարող է հարուցվել միայն տուժողի բողոքի առկայության դեպքում, «ինչը կոչվում է ոչ թե հրապարակային մերադրանքի, այլ մասնավոր գանգատի գործ»:

«Եթե գտնում եք, որ անձը ստացել է մարմնական թեթև վնասվածք, ինչո՞ւ եք հարուցել քրեական գործ, երբ տուժողը բողոք չի ներկայացնել,- հաջուում է Ուլրեն Սահակյանը: - Սա այբուբեն է: Կարո՞ղ են այս մասին չիմանալ գործ հարուցող քննիչը, Յետքընության բաժանմունքի պետը, ոստիկանության բաժնի պետը: Բացի այն, որ նրանք պարտավոր են ծառայել ժողովորին, դա իրենց աշխատանքն է, նաեւ իրենց հացն է: թող բարի լինեն իրենց հացը մարդավայել վաստակել»:

Փաստաբանների պալատ նախագահի խորերով՝ Նշյալ այբուբենային իրողության մասին չեր կարող չիմանալ նաեւ դատախազը, որին հետաքանիչը քրեական գործ հարուցելուց հետո ուղարկել է որոշման պատճենը:

«Ո՞ս կարող է իրեն պրոֆեսիոնալ համարող մարդը չիմանալ, որ մարդու գլուխը կյանքի համար կենսական կարեւոր օրգան է, որը բաղկացած է կաշվից, դրա տակ գտնվող ուսկորից եւ ուղեղից՝ գորշ նյութից: Միայն գորշ նյութ չունեցող մարդը կարող է մտածել, որ գլուխը կենսա-



կան կարենոր օրգան չե»,,- ասաց Ռ. Սահակյանը եւ շեշտեց, որ Արգիշտի Կիվիրյանի դեմ կատարված բռնարարքի փաստով պես է քրեական գործ հարուցվի 104 հոդվածի 2-րդ մասով՝ «Սպանության փորձ»:

Մայիսի 7-ին գործի ընսությունը ոստիկանությունից տեղափոխվեց ԱԱԾ-ի քննչական վարչություն։ Սակայն մինչ օրս պատասխան չի տրվել, թե ինչպես են «անհետացել» պարկումները, այն դեպքում, երբ ֆոտոլրագրող Շամշյանը հետո անմիշապես դեպքի վայր են ժամանել ոստիկանության հետաքննիչները։

«Մենք դեպքի վայրի զննությամբ չենք հայտնաբերել պարկումներ։ Եթե մեկը վերցրել-պահել է, թող բերի ներկայացնի»,,- նշյալ հարցին ի պատասխան՝ հայտարարեց Ոստիկանության Թրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Յովհաննես Թամամյանը։

Գործի շրջանակներում ԱԱԾ-ն հարցաքննել է նաև Գագիկ Շամշյանին։ Նա հատուկ ընդգծել է այս անփույթ վերաբերմունքը, որը դեպքի վայրում իրեղեն ապացույցների նկատմամբ դրսեւորել են «պարոֆեսիոնալ» ոստիկանները։ Մասնավորապես, նրանցից մեկը «ձեռքերը գրպանում» ոտքով տշել է արյունոտ փայտե մահակը, ինչը ֆիքսված է նաեւ լուսանկարում։

Վրդեն մայիսի 21-ին ԱԱԾ-ի մամուլի կենտրոնը տեղեկացրեց, որ փաստաբան-լրագրողի նկատմամբ կատարված բռնարարքի առնչությամբ հարուցված քրեական գործը վերաորակվել է ԶՕ 34-104 հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով («Մի խումբ անձանց կողմից սպանության փորձ»)։


Յովհիսի 11-ին, Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն այս գործով կալանքի սանկցիա կիրառեց երկու անձանց նկատմամբ։ ԱԱԾ-ի մամուլի կենտրոնից «Ճետքին» հայտնեցին, որ վերջիններին կայանքի ժամկետը հերթական անգամ երկարացվել է՝ այս անգամ մինչեւ 2010 թ. հունվար։

ԱԱԾ-ն կալանավորվածների անունները չի հրապարակում՝ «Եւ-նելով նախարարներության շահերից»։ Մինչդեռ մամուլն արդեն գրել է, որ հիշյալ անձինք՝ Վաղիկ Սերոբյանը եւ Գուրգեն Կիլիկյանը, պարզապես հանցագործություն կատարողներն են։

Ինքը՝ Արգիշտի Կիվիրյանը, հայտարարել է, թե հանցագործության բացահայտման առումով հույսը ոստիկանության կամ ԱԱԾ-ի վրա չի դնում եւ փորձում է անցկացնել սեփական հետաքննությունը։ Նա խոստացել է հաջողությունների մասին խոսել վերջնական արդյունքներ ունենալուց հետո։

Վերջինիս կինը՝ Լուսինե Սահակյանը, միջադեպի առաջին օրերին նաեւ ասել էր, թե իրենց անընդհանուր հետեւել են։ Արգիշտի Կիվիրյանը երրորդից մեկին հայտնել է, թե մինչ օրս այդ երեւութը շարունակվում է։

«Տարբեր ձեւերով դա զգում ես, առավել եւս, որ ծանոթ ես, թե ինչ մեխանիզմներով է կատարվում հետեւելը։ Թե դա հիմա ո՞ւս հետ է կապված եւ ինչի՞՝ դեռ չգիտեմ»,,- ասել է Ա. Կիվիրյանը։



Բրիսկնե Աղաւարյան

Ա կ տ ե մ ո ւ ս պ ա շ ա ն
Ո ւ ս տ ր ո ւ թ ա ր ո ւ ս ե ր ի ն է ր ի ն է ր ի ն
Ա կ զ ա ր ա ն ո ւ ս տ ր ո ւ թ ա ր ո ւ ս ե ր ի ն է ր ի ն
Բ ա շ ա ն ո ւ ս տ ր ո ւ թ ա ր ո ւ ս ե ր ի ն է ր ի ն
5 Ե ր ե ս ո ւ ս տ ր ո ւ թ ա ր ո ւ ս ե ր ի ն է ր ի ն

Մայիսի 31-ին տեղի ունեցած Երեակի ավագանու ընտրություններին արձանագրվել է լրագրողների նկատմամբ բռնության 6 դեպք, ինչպես նաև՝ նրանց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու միջադեպեր:

1. ՌԱԴ 10:45-Ի ՌԱԴՐԱՄԱԿԱՆ ԵՐԵԱԿ

9/1 տեղամասում քանություն է կիրառվել «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Գոհար Վեզիրյանի, «Հայք»-ի լրագրող Տաթեև Մեսրոպյանի եւ «Ժամանակ Երեաւան» թերթի լրագրող Մարինե Խառատյանի նկատմամբ: Մետաքս թաղամասի Մ. Նալբանդյանի անվան դպրոցում տեղակայված 9/1 տեղամասում է եղել պատգամավոր Լեւոն Սարգսյանը: «Մենք գնացինք ընտրատեղամաս, մոտ 10:45, ես տեսա Լյովա Սարգսյանին, որին արդեն քվեարկել եր, 15 հոգով կանգնած էին, հարցրի՝ «Դուք այստե՞ղ եք քվեարկել», նա էլ պատասխանեց՝ «Ես 25 տուն ունեմ, որտեղ ուզեմ, այստեղ էլ կրվեարկեմ», ես էլ ասացի՝ «Հուսով եմ, որ 25-ում էլ չեք քվեարկել, - պատմում է Սարինե Խառատյանը: Հետո եկավ Գոհար Վեզիրյանը, դուրս հրավիրեց պատգամավորին: «Դու ո՞վ ես, որ ինձ ասես՝ դուրս արի», - ասել է պատգամավորը եւ Գոհար Վեզիրյանին անվանել «հիմար», «համբալ», Գոհար Վեզիրյանն էլ պատասխանել է՝ «Յիմարը դուք եք», ու պատգամավորը սկսել է հայիոյանքները՝ «քո մաման...»: Գոհար Վեզիրյանն էլ պատասխանել է մեկ այլ արտահայտությամբ»:

Մարինե Խառատյանը հաստատում է, որ հայիոյել սկսել է հենց պատգամավորը, եւ ձայնագրությունում էլ հստակ լսվում են վեճի ծագման եւ հետագա զարգացման մանրամասները: Լեւոն Սարգսյանն իր թիկնապահներին հրահանգել է դուրս հանել բոլոր լրագրող-

Ներին: Յենց այդ պահին պատգամավորի թիկնապահներից մեկն ապտակել է Գոհար Վեզիրյանին: Ըստ Մարինե Խառատյանի՝ ապտակի ծայնը լսվում է նաեւ ծայնագրությունում: Վրա են հասել ամրակազմ՝ թիկնապահներ, սկսել են ոլորել Գոհարի թեւերը եւ հարվածել նրան:

«Մեկը ծեռքերս բռնել է, մյուսը չափալաղել է երկու անգամ դեմքիս, մեկը հարվածել է գլխիս, որի արդյունքում իմ երկաթի մազակալը գլխիս մեջ շարդվել է, իսկ մյուսը քացով փորիս է խփել, շունչս կտրվեց, ու ես պազեցի,- պատմեց Գոհար Վեզիրյանը:- Ես հնարավորություն չունեցա երեկ բժշկի դիմել, բայց որովայնս ցավում է, հնարավոր է՝ վնասված օրգան կամ մկան լինի, վաղն անպայման գնալու եմ ստուգվեմ, որ ես ել հանգստանամ», - ասաց Գոհար Վեզիրյանը:

Մարինե Խառատյանի նկատմամբ բռնություն չի կիրառվել, բայց հայինյանքներ տեղացել են նաեւ նրա հասցեին: «Այդ ընթացքում Լյովա Սարգսյանը 7 հարկանի հայինյանքը հասցրել էր 17 հարկանու, եւ որեւէ մեկը չէր միջամտում՝ ոչ հանձնաժողովի անդամները, ոչ էլ ոստիկանները: Յանձնաժողովի նախագահ Միշա Սամվելյանը, թերեւս Լյովա Սարգսյանի ներկայությունից ոգեւորված, իրեն շատ լկտի էր պահում: Լյովա Սարգսյանն ինձ էլ հայինյեց, ինըն անձամբ իսկեց ծայնագրիչս: Յոգեկան սթրեսի մեջ եմ, ահավոր էր, եթե ես պատասխանեի ինձ տրված վիրավիրանքին, այնտեղ մի նոր մարդասպանություն տեղի կունենար», - ասում է Մարինե Խառատյանը:


«Թեւս ոլորեցին, բռունցքով ուսիս խփեցին, հեռախոսս վերցրին,- պատմում է Տաթեւ Մեսրոպյանը,- հետո «քուչի նայող տղերթից մեկը» հեռախոսս նորից հետ բերեց, երեւի ստուգեցին, որ նկարած բան չկա, հետ վերադարձրին»:

Պատգամավորն իր թիկնագորի հետ հեռացել է ընտրատեղամասից, իսկ հանձնաժողովի նախագահը, բոլոր հարցումներին ի պատասխան, հայտարարել է, որ նման միջադեպ տեղի չի ունեցել: «Մենք ոչինչ չենք կարող անել, պետք է գնաք ոստիկանության Էրեբունու բաժանմունք», - եղել է ընտրատեղամասում ներկա ոստիկանների պատասխանը:

«Յանձնաժողովի անդամներն ել հետևերը լրագրողներին են հայինյում: Մենք դեռ ընտրախախտում չեինք արձանագրել, բայց իրենց ծեռնտու չէր, որ մասակինք այստեղ», - շարունակում է Տաթեւը: Բոլորը հեռացել են միջադեպից հետո, սակայն Տաթեւը մնացել է ընտրատեղամասում եւ ականատես եղել ժամը 17-ից հետո սկսվող խախտումներին, լցունումներին ու մոտ 30 երիտասարդների՝ մի քակի անգամ քվեարկելուն:

2. ՀՈՅՈ 17:00-Ի ՇՐՋԱՐԱՐԿԱՆ

Մալաթիայի 8/05 ընտրատեղամասում բռնություն է կիրառվել «168 ժամ» թերթի լրագրող Արմինե Ավետյանի նկատմամբ եւ խոչընդոտել են «Թերթ.ամ» կայքի լրագրող Լիլիթ Թադեոսյանի աշխատանքներին: Լիլիթի նկատմամբ կոպիտ բռնություններ չեն իրականաց-



վել, սակայն նրան էլ են արգելել մոտենալ քվեատուիին: Լիիթը տեսել է, որ լցոնում են քվեատուիը, փորձել է միջամատել. «Ինձ էլ քաշօշեցին, հրեցին, չթողեցին, որ մոտենամ»:

«Ես 8/06-ընտրատեղամասում էի, որը նույն տարածքում էր, լսեցի ծայսեր ու գնացի 8/5, ուզում էի ապարատով նկարել, գորգոռացողներից մեկն ինձ սպառնաց, թե՝ «գլուխդ կշարդեմ, ապարատոյ էլ հետը, եթե նկարես», -պատմեց Լիլիթ Թաղեւոյանը Եւ վկայեց, որ Արմինե Ավետյանի եւ «Թրանսփերենսի ինժերնեյշն»-ի դիտորդ Սոնա Այվազյանի «թեւերը ոլորել են եւ դեմ են տվել պատին, որ նրանք էլ չմոտենան»: «Մոտ 20 հաստավիզներ եկան, շրջապատեցին, մեզ տարան կողքի, հարվածում են ձեռքերով: Գրիզը մտավ ձեռքին մեջ, ու արյուն եկավ», - հավելեց Արմինե Ավետյանը: Յանձնաժողովի անդամներն ու նախագահ Պետրոս Ավետիյանը որեւէ կերա չեն արձագանքել այս լցոնմանը եւ լրագրողների նկատմամբ գործադրված բռնությանը:

3. 17:30 ՌՈՒԹԵՐՆԵՐԸ

Մալաթիայի 7/25 ընտրատեղամասում բռնություն է կիրառվել «Արավոտ» օրաթերթի լրագրող Նելլի Գրիգորյանի նկատմամբ: Լրագրողը եւ ՀԱԿ-ի ներկայացուցիչները ականատես են եղել, թե ինչպես է մի հաղթանակ տղամարդ ՀԱԿ-ի վստահորդ կնոշը դեմ տվել պատին եւ փորձում բռնի ուժով դուրս հանել ընտրատեղամասից: «Ես որ տեսա, անմիջապես ֆոտոն միացրի ու սկսեցի նկարել: Յանձնաժողովի անդամները ներկա են, վստահված անձինք կային, բայց որեւէ մեկը չմիշամտեց: Ես որ սկսեցի նկարել, այդ անհայտ երիտասարդը, որը քիչ ուշ պարզվեց, որ նորագուցի Բոկոն է, շրջվեց, հարձակվեց ինձ վոա, սկսեց հրմշտել, գորգոռալ, թե՝ «քեզ ով է թողել, որ նկարես», ես մի պահ շփոթվեցի, հետո սկսեցի ուշքի գալ ու ասացի, որ ինքը խոչընդոտում է լրագրողի աշխատանքին», - պատմեց Նելլի Գրիգորյանը:

Մի քանի րոպե անց Բոկոն լրագրողից իւլել է ֆոտոխցիկը ու դուրս եկել: Մոտ 5 րոպեից ֆոտոխցիկը վերադարձել են, բայց հիշողության քարտը հանված էր: «Յանձնաժողովի սպիտակ մագերով մի կին սկսեց ինձ կարգի հրավիրել, թե՝ ով եմ, ինչու եմ գորգոռում, ես ել բացատրեցի, թե ով եմ, իմ ֆունկցիան ինչն է: Վյո պահին ինձ վիրավորանքն էր խեղդում. երկու կնոջ կրա հարձակվել են ինչ-որ անհայտ, կրիմինալ հեղինակություններ, ինչ-որ հարցեր են լուծում, իսկ հանձնաժողովում նստած են պատկառելի, լավ տպավորություն թողնող մարդիկ, բայց որեւէ միջամտություն չեն ցուցաբերում, շատ անտարբեր նայում են, թե ոնց են երկու կնոջ ահարեկում», - ասում է լրագրողը:

Տեղամասում ոստիկաններ չեն եղել: Արձանագրությունը հենց տեղամասում կազմվել է, որը հանձնաժողովի նախագահը հրաժարվել է գրանցել գրանցամատյանում. «Ասաց, որ ինքը չի տեսել: Ինքն իսկապես չեր տեսել, այդ պահին տեղում չեր, բայց վստահ-

ված անձիոք ու դիտորդները տեսել են: Բայց տեսավ, որ վստահված անձինք ՀԱԿ-ի դիտորդներն են միայն, չգրանցեց: Մենք եւս մեկ արձանագրություն կազմեցինք ու փոխանցեցինք Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին»:

4. ՌԵԹՐՈՎՈՐ 120 ՌԵՎԻԶՈՐ

տեղակայված 13/9 ընտրատեղամասում խոչընդուռտել են «Ազատություն» ռադիոկայանի և «Ա1+»-ի լրագրողների ու օպերատորների աշխատանքը: Տեղամասային հանձնաժողովի նախագահ Ժիրայր Այվազյանն արգելել է Նկարահանել ընտրացուցակը ու դուրս է հրավիրել օպերատորներին: «Մեզ թույլ չտվեցին Նկարահանումներ կատարել, բայց բռնություն չի կրառվել», -ասաց «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Տիգրան Ավետիսյանը:


5. 8/01 ՌԵԹՐՈՎՈՐ ԵՎ ՌԵՎԻԶՈՐ

բռնություն է իրականացվել «Յայկական ժամանակ» օրաթերթի արտահաստիքային թղթակից Արթուր Յովակիմյանի նկատմամբ: Լրագրողը նկատել է, որ Երիտասարդների մի հումք ցանկանում է լցոնում կատարել եւ սկսել է նկարել: Երիտասարդները մոտեցել են Արթուր Յովակիմյանին, վզից պոկել լրագրողի վկայականը, սպառնացել խլել ֆոտոխցիկը՝ խոստանալով այն վերադարձնել նկարվածը ջնշելուց հետո:

Ուստիկանության Երեսան քաղաքի վարչության հերթապահ մասից ոստիկանության Երերունու բաժին է ահազանգել «Յայք» թերթի խմբագիր Գեղամ Սագարյանը եւ հայտնել, որ Նալբանդյանի անվան դպրոցում գտնվող թիվ 9/1 ընտրատեղամասում Աժպատգամավոր Լեւոն Սարգսյանի թիկնապահները ծեծել են «Յայք» լրագրողին: «Դեպքի առթիվ ոստիկանության Երերունու բաժնում նախապատրաստվում են նյութեր, հանգամանքները ճշտվում են», - տեղեկացնում է ոստիկանության կայքը:

Գոհար Վեզիրյանը ոստիկանություն չի դիմել, սակայն նրա մասով Աժպատգամավոր Լեւոն Սարգսյանի անձնական թիկնապահ Յ. Գալոյանը ոստիկանության Երերունու բաժնում հաղորդում է տվել, որ «ժամը 10.30-ի սահմաններում թիվ 9/1 ընտրատեղամասում պատգամավոր Լ. Սարգսյանի քվեարկության ժամանակ «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Գոհար Վեզիրյանը հարձակվել է իրենց վրա եւ իրենց հասցեին խովհանական հայույնքներ տվել՝ խախտելով հասարակական կարգը»:

Գոհարը ոստիկանությունում գրել է, որ՝ «օգտվելով իր սահմանադրական իրավունքից՝ ինքը իրաժարվում է որեւէ բացատրություն տալ», քանի որ իր փաստաբան Յովիկ Արսենյանն իր հետ չի եղել: Սակայն լրագրողն ասում է, որ ոստիկանության տարածած տեղեկատվությունը ակնհայտ սուս է: «Թող քրեական գործ հարուցվի, գնանք բաց դատական նիստում ցուցունք տանք, թե իրա-



կանում ինչ է եղել: Գոհար Վեզիրյանը ընկրկելու խնդիր չունի, ոչ Ել՝ բողոք Ներկայացնելու», - ասաց լրագրողը:

«168 ժամ» թերթի լրագրող Արմինե Ավետյանը հաղորդում է տվել ոստիկանություն: Յատուկ քննչական ծառայությունը նրան ծանուցագիր է ուղարկել, սակայն լրագրողը ժամանակ չի ունեցել եւ չի գնացել: Արմինե Ավետյանի եւ Լիլիթ Թադեոսյանի մասով 2009 թ. դեկտեմբերի 11-ի դրությամբ ոստիկանության հասարակայնության հետ կապերի բաժինը դեռևս տեղեկություն չէր տրամադրել:

Գոհար Վեզիրյանի, Մարինե Խառատյանի եւ Տաթեւ Մեսրոպյանի մասով քրեական գործի վարույթը կարճվել է՝ թր. դատ. օր. 35 հոդվածի 1-ին մասի 2 կետի հիմնավորմամբ, այն է՝ արարջի մեջ հանցակազմ չկա:

Նելի Գրիգորյանին Ոստիկանության Մալաթիա-Սեբաստիա բաժին եւ հրավիրել, հարցաքննել: Սակայն հաջորդ օրը երեկոյան նրա ամուսնուն տանից դուրս են կանչել թաղի տղաները, եւ այդ դեպքը վերածվել է ծավալուն «ռազբորկաների»: Թաղապետ Դավիթ Օհանյանը իր «թայֆայով» եկել է ամուսնու մոտ եւ ասել, որ կնոջը՝ Նելիին համոզի են վերցնել բացատրությունը: «Ուղղակի որ չդառնար մի կաթի մեղրի պատմությունը, քանի որ արդեն ազգութակին խառնել են իրար, այդ ամենից խուսափելու համար ես գնացի ոստիկանություն, գրեցի, որ ոստիկանությունը գտել է հիշողության քարտը, ինձ ետ է վերադարձրել, բայց իրականում ոչ մի չիա ել չեր գտել եւ չեր վերադարձրել», - պատմեց Նելի Գրիգորյանը:

Բրիսեն Աղալարյան

Աղալարյան Եղի Եղի
Աղալարյան Աղալարյան
Աղալարյան Աղալարյան

2008թ. օգոստոսի 27-ին ԴԱՀԿ ծառայության աշխատակից-

ների հատուկ խումբը Վաևաձորի քաղաքի Վարդանանց եւ Սպանդարյան փողոցներում իրականացրել է կատարողական գործողություններ, որոնց արդյունքում տարածքից հանվել եւ տեղափոխվել է 10 ոչ հիմնավան շինություն՝ բնակելի տնակներ: Բնակիչների տարհանման գործողություններին ներկա է գտնվել «Յետքի» եւ «Աղավուտի» լրագրող Լարիսա Փարեմուզյանը: Նրան բնակիչները տեղեկացրել են, որ իրենց նկատմամբ կրասություններ եւ բռնություն է կիրառվում:

«Խնդրեցին, որ ես որպես լրագրող գնամ: Ալավերդուց հասայինստեղ: Կանաց հանդեա բռնություն էր կիրառվում, ես մոտեցա, ասացի՝ ինչո՞ւ եք կանաց հետ այսպես վարվում, չե՞ք կարող հանգիստ կատարել: Յետո սկսեցի նկարել, ֆոտոինցիկը խեցին ձեռքից, ջնջեցին նկարները, ճայնագրիչն իւլեցին ու սկսեցին հրել: Ասացի, որ ես լրագրող եմ, նայեցին փաստաթղթերս ու հետ տվեցին ֆոտոապարատն ու ճայնագրիչը: Մի 100 ոստիկան կար, 50-60 ԴԱՀԿ աշխատակիցներ, ես միայնակ լրագրող կին ինչպե՞ս կարող էի խոչընդոտել նրանց աշխատանքը», - պատմեց Լարիսա Փարեմուզյանը:

Մինչդեռ ԴԱՀԿ-ն հայտարարություն է տարածել, որում նշված է, որ լրագրողն է խոչընդոտել ԴԱՀԿ աշխատակիցների աշխատանքին: «Գործողությունները իրականացվել են ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի վճռի հիման վրա ստացված կատարողական վարույթներով՝ Վաևաձորի քաղաքապետարանի հայցերով: Տնակները տեղափոխվել են Վաևաձորի Սանկտ-Պետերբուրգ փողոցի 5-րդ տնակային ավան: Միաժամանակ պահպանվել են բնակիչների բոլոր գույքային իրավունքները, ապահովվել է տնակների եւ գույքի տեղափոխումը նշված թաղամաս: Յարկադիր ծառայունների գործողություններից անցել են առանց միջադեպերի մինչեւ պարտապան Ղնահիտ Մարգարյանի տնակի տարհանման գործողություններն սկսելը: Նշված անձը սուր կտրող-ծակող գոր-



34



Ժիշով մի քանի անգամ փորձել է հարվածել հարկադիր կատարողն, սակայն նրա գործողությունները կանխվել են: Հասկանալով Ա.Մարգարյանի այդ պահի հոգեվիճակը՝ ոստիկանները եւ հարկադիր կատարողները ընթացք չեն տվել միջադեպին: Սակայն Ալավերդուց ժամանած «Առավոտ» թերթի եւ հետզ.ամ կայքի լրագրող Լարիսա Փարեմուզյանը նույն պահին միջամտել է հարկադիր կատարողների գործողություններին: Յարկադիր կատարողի պահանջը՝ Ներկայանալ, Լ.Փարեմուզյանը անտեսել է եւ կոպտել ծառայողներին: Նա Ներկայացել է միայն իրավիճակը սկանդալայինի վերածելուց հետո: Փորձելով Ներխուժել տարհանվող տնակ՝ լրագրողը խոչընդոտել է հարկադիր կատարողների աշխատանքին: Նշենք, որ բացի Լ.Փարեմուզյանից, ծառայողների գործողություններին ականատես էին նաև բազմաթիվ լրագրողներ, որոնք առանց որեւէց խնդիր հարուցելու կատարում էին իրենց մասնագիտական պարտականությունները: ԴԱՐԿ ծառայությունը Լ.Փարեմուզյանի նման գործելակերպը համարում է անընդունելի եւ դիտում է որպես սադրանք», - նշված է ԴԱՐԿ ծառայության մամլո հաղորդագրության մեջ:

Մեպտեմբերի 5-ին Լ. Փարեմուզյանին հրավիրել են քննչական վարչություն եւ շուրջ 3 ժամ՝ 16:00-ից մինչեւ 19:30-ի սահմանները, քննիչ Գոր Յովակիմյանը բացատրություններ է վերցրել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի տնակային ավանում կատարված դեպքերի վերաբերյալ:

Օմբուդսմենն արդարադատության նախարարին խնդրել էր լրագրող Փարեմուզյանի հայտնած տեղեկությունների հիման վրա Նշանակել ծառայողական քննություն եւ անհրաժեշտության դեպքում համապատասխան անձանց ենթարկել պատասխանատվության: Եվ ահա «Շետքի» եւ «Առավոտ» թղթակցին կանչել են հարցաքննության:

«Ես 15 լուսանկար տվեցի, որոնցում ֆիքսված են ԴԱՐԿ աշխատակիցների կողմից գործադրվող բռնությունները: Հաստատեցի, որ ականատես եմ եղել Անահիտ Մարգարյանի նկատմամբ կատարվող անօրինականություններին, լրագրողական աշխատանք եմ կատարել ամբողջ տնակային ավանում, եւ քնակչությունը միահամուր դգնիել է կատարվող բռնությունների կապակցությամբ, - պատմում է Լ. Փարեմուզյանը, - սակայն ինձ համար շատ զավեշտալի եր, որ նախաքննող մարմինը կարեւոր հարցերը թողած, ինձ հարցնում եր, թե որտեղի՞ց եմ իմացել ԴԱՐԿ աշխատակիցների ժամանման մասին, Ե՞ր եմ գնացել այստեղ, ո՞ւմ հետ...»: Այլ լրագրողների՝ միջադեպի ականատեսները լինելու կապակցությամբ Լ. Փարեմուզյանը հայտնեց. «Ոչ մի լրագրող, բացի ինձնից, չի եղել այստեղ. ես մենակ եմ աշխատել, համենայնդեպս ժամը 13:30-ի սահմաններում: Ավելի ուշ եկավ Յելսինկյան ասամբլեայի Վանաձորի գրասենյակից Մարիամ անունով մի աղջիկ: Նա ել սկսեց լու-

սանկարել եւ ըմբոստանալ ԴՎՀԿ աշխատակիցների դեմ բռնությունների դեմ: Դժվարանում եմ ասել, թե գործն ինչ ընթացք կստանա»:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մասնագետ Երանուիի Թումանյանը «Յետքին» հայտնեց, որ Արդարադատության նախարարությունը Ժիտել է դեպքի փաստը: Այսուհետեւ Օմբուդսմենը նամակով դիմել է Յատուկ քննչական ծառայություն, որտեղից Դեկտեմբերի 12-ի դրությամբ դեռևս պատասխան չի ստացել: «Մեր գրության վերաբերյալ հիշեցում ենք ուղարկել, որին նույնպես չեն պատասխանել: Եթե մեկ շաբաթից մեզ չպատասխանեն եւ տեղյակ չպահեն գործի ընթացքի մասին, գրություն կուղարկենք գլխավոր դատախազին», - ասաց Երանուիի Թումանյանը:



36



Արարատ Գալթյան

Առաջնահանձնական «Հեռացումներ» Հայության պահանջման


Մայիսի 7-ին՝ ժամը 00.02-ին, Մարգարյան փողոցի թիվ 20/3 շենքի 1-ին մուտքի դիմաց երկու անհայտ անձինք ծեծի են Ենթարկել «Շակթ» հեռուստաընկերության հեռուստահաղորդավայր, 1957 թ. Ծնված Նվեր Մնացականյանին եւ դիմել փախուստի:

Նվեր Մնացականյանը դիմել էր «Վրմենիա» բժշկական կենտրոն, ստացել բուժօգնություն եւ գնացել տուն։ Նշանակվել էր դատարժշկական փորձաքննություն, եւ բարձրաստիճան ոստիկանները վստահեցնում էին, որ ամեն ինչ անելու եւ գործը շատ արագ բացահայտելու համար։

Որդեն օգոստոսի 21-ին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը հայտարարեց, թե լրագրողի դեմ կատարված բռնարարքի հեղինակները հայտնի են։ «Ուղղակի ասեմ, որ Նվեր Մնացականյանի որդուն ներկայացրել են երկու անձանց (մեկը համալսարանի ուսանող է), որոնք պատմում են մանրամասներ, դեպքի վայրը են նույնիսկ ցույց տալիս, որտեղ կատարել են հանցագործությունը»։ Ոստիկանապետը վստահեցրեց, որ հանցագործությունն ամենեւին կապված չէ և Մնացականյանի լրագրողական գործունեության հետ։ «Ես ել կասկածում եի, որ նրա մասնագիտական գործունեության հետ է կապված։ Բայց բանից պարզ վեց՝ անհեթեթ մի պատմություն է, որի հետ այդ մարդու ընդհանրապես կապ չունի։ Ինչ-որ աղջկա պատմություն է, Նվեր Մնացական



Հուսանկարները՝ Գագիկ Ճամշյանի




յանին շփոթել են մեկի հոր հետ», - ասուիսի ժամանակ ասել եր Ալիկ Սարգսյանը:

Ինքը՝ Նվեր Մսացականյանը, բոլորովին այլ կարծիքի ե: Կերպինս նույսիսկ հեռուստաեթերով ոստիկանությանը խնդրեց, որպեսզի իր գործով չգրաղվեն, «քանի որ ինքը մի բան է ասում, ոստիկաննո՞՝ մեկ այլ բան»:

Այս առնչությամբ Ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ (6-որդ Վարչություն) Դուսան Պողոսյանը նշեց, թե ոստիկանները միշտ ասում են այն, ինչ ներկայացնում ե տուժողը եւ ինչքան հնարավորություն ե տալիս նախարանության գաղտնիությունը: «Եթե սա պահանջում է, որ որեւէ մեկը չգրադի այդ գործով, դա բավականին քիչ է. աշխատանքները շարունակվելու են, անկախ նրանից՝ ինքը ցանկանո՞ւմ է, թե՞ ոչ: Ավելի լավ է դրսետել այնպիսի վարքագիծ, որով օգնեն բացահայտման աշխատանքներին, ոչ թե խոչընդոտեն»,- հոկ-


տեմբերի 27-ին տեղի ունեցած ասուլիսի ժամանակ ասաց Յ. Պողոսյանը՝ հատուկ շեշտելով, որ գործը, ոստիկանապետի հանձնարարությամբ, գտնվում է անձամբ իր ամենօրյա հսկողության տակ:

Սակայն Նվեր Մսացականյանի դեմ կատարված բռնարարքն այդպես էլ մնաց չբացահայտված: Ոստիկանության լրատվության վարչությունից՝ «Հետքին» փոխանցեցին, որ ոստիկանապետի մատևանշած հիշյալ երկու անձանց մասով մեղադրանքը չի հիմնավորվել, ուստի «քրեական գործի վարույթը կասեցվել է՝ հանցագործությունը կատարած անձի (անձանց) ինքնությունը հայտնի չլինելու պատճառով»:



ՄԱՍ II

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՁԼՄ-Ն
լրագրողները և ՁԼՄ-ն
ԴԱՏԱՐԱՆՆԵՐ
դատարանում



Journalists
and Media

in the Courts

Քրիստոն Աղալարյան

**ՈՇԵՎԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒ ՀԱՅԱՏԻ
«ԽԵՎԵԼՈՒՄ» ՀԱՅԱԳՈՎՐԾՈՒԹՅՈՒՆ».
ԳՈՎԱՐ ՀԱՅԱՀԱՅԱՎԵԼՈՒՄ**

Իշեւանի քաղաքապետարանը, հանձին քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի, դժգոհ է Կենտրոն Եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի վճորից՝ հօգուտ «Յետաքննող լրագրողներ»-ի Եւ բողոքարկել է այս վերադաս ատյանում:

ՀԱՅԱՀԱՅԱՎԵԼՈՒՄ ՀԱՅԱԳՈՎՐԾՈՒԹՅՈՒՆ

«**Յ**ետք»-ի 2008 թ. մայիսի 5-ի համարում տպագրվել է թերթի Տավուշի մարզի թղթակից Ռուկան Սարգսյանի հոդվածը՝ «Ում գրավածն են մտնում ավագահանքի փողերը»։ Նույն հոդվածը տպագրվել է նաև «Ազգ» օրաթերթի 2008 թ. մայիսի 20-ի ներդիրում։ Լրագրողը ներկայացրել էր Իշեւանի հարավային մուտքի մոտ, Աղստեղ գետի վրա գտնվող «Սպիտակ ջուր» ջրամբարից ավագի ապօրինի արդյունահանման վերաբերյալ փաստեր։ Լրագրողն իր ուսեցած տեղեկությունները ստուգել էր տեղում, լուսանկարել էր ավագի արդյունահանման եւ տեղափոխման գործընթացը, խոսել ջրամբարում աշխատող բանվորների հետ, ապա փորձել էր գրավոր հարցումներով ստանալ պաշտոնական մեկնաբանություններ։

«Սպիտակ ջուրը» 1997 թ. կառավարության որոշմամբ սահմանվել է իբրև Իշեւան քաղաքի համայնքային սեփականություն։ Բայց ջրամբարի թիվ մեկ պատասխանատու Իշեւանի քաղաքապետարանը դեռևս 2007 թ. հոկտեմբերի 22-ին իրեն ուղղված գրությունն անպատճախան էր թողել։ Բնապահպանության նախարարությունը հայտնել էր, թե «ջրամբարի ավագի օգտագործման իրավունքը որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի չի տրված, քանի որ նշված տարածքում պաշարների ուսումնասիրություն չի կատարված եւ լիցենզիայի պայմանագիր չի կնքված»։



40

իսկ Դատախազությունը հոդվածում հրապարակված փաստերը ստուգելու փոխարեն հարցում էր կատարել իշեւանի քաղաքապետարանի այգու տարածքի հարթեցման համար տեղափոխվել է միայն տիղմը՝ փաստորեն «հերքելով» ավագի արդյունահանման ակնհայտ փաստը: Մինչդեռ լրագրողն այցելել էր նաեւ Դիլիջան ու պարզել, որ այնտեղ հումսին ընթացող ամֆիթատրոնի շինարարության ավագը բերվում է «Սպիտակ ջուր» ջրամբարից:

Այս եւ այլ փաստեր «Հետքի» լրագրողին թույլ էին տվել եզրակացնել, որ ավագի ապօրինի արդյունահանումը կատարվում է իշեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի գիտությամբ եւ թույլտվությամբ: Եզրակացությունը, սակայն, դուր չի եկել քաղաքապետին:

«...Պատասխանողի նախաձեռնությամբ թերթում եւ ինտերնետային կայքում հրապարակված տեղեկությունները անհիմն են, իրենց մեջ պարունակում են զրապարտանք, որոնցով իսկ արատավորվում են ոչ միայն քաղաքապետի պատիվը, այլեւ արժանապատվությունը եւ բարի համբավը, վեստում եւ ստվերում են քաղաքապետարանի օրինական գործողությունները», - հիմնավորում է առաջին ատյանի դատարանին ուղղված հայցադիմում հայցվոր կողմի ներկայացուցիչ Գետրոգ Դավթյանը:

2008 թ. հունիսի 19-ին նա հայց է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Հետաքննող լրագրողներ» հ/կ-ին նույն զանգվածային լրատվամիջոցներով, որով տարածվել էր հոդվածը, «հերքել իշեւանի քաղաքապետարանի դեմ հրապարակված անհիմն տեղեկությունները եւ քաղաքապետ Վ. Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորող լուրերը, ինչպես նաեւ «Հետաքննող լրագրողներից», որպես վևասի փոխհատուցում՝ բռնագանձել փաստաբանական ծախսերը՝ 930. 000 դրամ գումարի չափով»:

ՀԱՅԱՀԱՅ ՀՈ՝ «ՀԵՏԱՔՆՆՈՂ ՀԱՅԱՀԱՅ ԵՐԵՎԱՆ» ՀԵՏԱՔՆՆՈՂ ՀԱՅԱՀԱՅ ՀԱՅԱՀԱՅ ԵՐԵՎԱՆ

Մայիսի 23-ին իշեւան համայնքի ավագանին որոշում է ընդունել համայնքի բյուջեից հատկացնել 930.000 դրամ՝ «զրապարտչական հոդվածի հեղինակին պատասխանատվության ենթարկելու» համար փաստաբանական ծառայություն մատուցողին: Նիստում ավագանու անդամներից Վահե Ղալումյանը հարցուել է, թե արդյոց ճի՞շտ է համայնքի բյուջեից նման նպատակով 930.000 դրամ ծախսելը: Քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը պատասխանել է, թե այս գործի համար հատուկ արտոնագիր ունեցող փաստաբան է անհրաժեշտ, եւ վստահեցրել, որ այդ գումարը վերադառնալու է համայնքային բյուջե:

«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ն նամակով դիմել էր Իջեւանի քաղաքապետին՝ խնդրելով տրամադրել 2008 թ. մայիսի 23-ի ավագանու նիստի արձանագրությունը եւ այն որոշումը, որով Իջեւան քաղաքի համայնքային բյուջեից 930.000 դրամ է հատկացվել նույն կազմակերպության դեմ «Պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող տեղեկությունը հերթելու պարտավորեցնելու եւ վեսախ հատուցման պահանջմերի մասին» հայցով Երեւանի Քաղաքացիական դատարանում ընսկող գործով փաստաբանական ծառայության մատուցման համար։ Քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը մերժել էր ավագանու որոշումները տրամադրել՝ «ինարավոր շահարկումներից խուսափելու» պատճառաբանությամբ եւ ասել, թե դրանք կտրամադրի դատական պրոցեսն ավարտվելուց հետո։

«Հետաքննող լրագրողները» դիմել էին դատարան՝ պարտավորեցնելու քաղաքապետին տրամադրել իրենց պահանջած փաստաթղթերը։ Նոյեմբերի 26-ին ՀՀ վարչական դատարանը մասնակիորեն բավարարել էր «Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի հայցն ընդդեմ Իջեւանի քաղաքապետի։ Դատարանն Իջեւանի քաղաքապետին պարտավորեցրել էր 5-օրյա ժամկետում, այսինքն՝ մինչեւ 2008 թ.-ի դեկտեմբերի 1-ը։ «Հետաքննող լրագրողներ»-ին տրամադրել ավագանու նիստում ընդունված որոշումների պատճենները, միաժամանակ՝ համայնքի բյուջեից հօգուտ հասարակական կազմակերպության բռնագանձել հայցի համար վճարված պետական տուրքը (8.000 դրամ)։

Քաղաքապետարանը չէր կատարել դատարանի պահանջը։ «Հետաքննող լրագրողները» դիմել էին ԴԱՀԿ ծառայությանը, սակայն դա ել անօգուտ էր։ Ի վերջո, օրենքով սահմանված բոլոր ողջամիտ ժամկետներից հետո եւ ԴԱՀԿ-ի միջոցով «Հետք» լրագրողին տրամադրել էին միայն քաղվածք որոշումից՝ 930 հազար դրամ հատկացնելու վերաբերյալ, ամբողջությամբ չկատարելով դատարանի պահանջը։

ՀՅԵՐՈՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՅԵՐՈՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ

2 ուգահեռաբար ընթացող Իջեւանի քաղաքապետարանի հայցի ընսությունն ընդդեմ «Հետաքննող լրագրողների» շարունակվեց Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում։ Ուլրեն Ափինյանի նախագահությամբ։ Դատաքննության ընթացքում հայցվորն այդպես էլ չկարողացավ մատնանշել, թե հատկապես որ տեղեկություններն են անհիմն, զրադարձիչ եւ արատավորում քաղաքապետի բարի համբա-



42

վը: Նա մատնանշեց երկու հոդվածները, որոնք ամբողջությամբ արատավորում են քաղաքապետի համբավը, այս է՝ «Ու՞մ գրավանն են մտնում ավազահանքի փողերը» եւ դրան հաջորդած «Երեք հանձնաժողովները «կտեսնե՞ն» ջրամբարի ավագի անօրինական շահագործումը» վերնագրերով հոդվածները:

Որպես իրականությանը տեղեկությունների չհամապատասխանելու հիմնափաստարկ հայցում նշվում է, որ քաղաքապետարանն ինքը շահագրգռված է եղել ապօրինի արդյունահանողներին բացահայտելու եւ պատժելու գործում եւ այդ նպատակով 2000 թվականից սկսած՝ բազմից դիմել է Իշեւանի ՆԳ բաժնի պետք Տ. Բաղրամյանին, Ս. Գալստյանին:

«Յետաքննող լրագրողներն» իրենց դիրքորոշումն արտահայտող պատասխանում պնդել են, որ լճի տարածքից ավագի ապօրինի արդյունահանում կատարվել է, ինչը հիմնափառ է և ապացուցում են Ներկայացված լուսանկարները: Որպես վկա դատական գործում Ներգրավվեց նաեւ հոդվածի հեղինակը եւ «Ազգ» օրաթերթը՝ որպես երրորդ կողմ: Իսկ «Յետաքննող լրագրողներ»-ի Ներկայացուցիչ, փաստաբան Կարեն Մեժլումյանի միջնորդությամբ դատարանում հարցաքննվեց նաեւ Իշեւանի քաղաքապետը:

Լրագրողը դատարանում փաստեց, որ հոդվածում Ներկայացված բոլոր մտքերն ու փաստերը շարադրել է իրավասու մարմիններին ուղղված գործուների պատասխանների եւ իր ուսումնասիրության արդյունքների հիման վրա: Յավաքած փաստերն իրեն հնարավորություն են տալիս համապատասխան մեկնաբանություններ ու կարծիքներ արտահայտել հրապարակման մեջ եւ դրա իրավունքը ինքը ունի իրեն լրագրող:

Այս տարվա հուլիսի 10-ին դատարանը, նախագահությամբ դատավոր Ռուբեն Ափիսյանի, մերժեց Իշեւանի քաղաքապետարանի՝ ի դեմս քաղաքապետի, հայցն ընդդեմ «Յետաքննող լրագրողների»՝ փաստելով, որ ««Ո՞մ գրավանն են մտնում ավազահանքի փողերը» հոդվածով իշեւանի քաղաքապետարանի գործարար համբավը արատավորող որեւէ տեղեկություն չի տարածվել, ուստի բացակայում է տարածված տեղեկության հերթում պահանջելու հիմքը»: Դատարանը ապացուցված համարեց նաեւ տարածված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելը հիմնավորող՝ «Յետաքննող լրագրողների» Ներկայացրած լուսանկարները, որոնցից ակնհայտ երեւում է, որ Աղստեղ գետի վրա «Սպիտակ ջուր» ջրամբարից կատարվում է ավազահանում: Ավելին՝ հոդվածում տեղ գտած տեղեկությունը, համաձայն որի՝ ապօրինի ավազահանման բիզնեսը գտնվում է Իշեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո, դատարանի մեկնաբանմաբ, պատասխանողը չի արձանագրել որպես հաստատված փաստ, այլ նշել է, որ «կան որոշակի տեղեկություններ, որոնք

լրագրողը փորձ է արել ստուգել Եւ գրավոր դիմել է պետական մարմիններ»:

Օգոստոսի 7-ին հշեւանի քաղաքապետարանը, հշեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը բողոք էն ներկայացրել Վերքաքնիչ քաղաքացիական դատարան՝ պահանջելով բեկանել Երեւանի Կենտրոն Եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճիռը, փոփոխել այն Եւ քավարարել իրենց պահանջները, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Վերաքնիչ բողոքում հայցվորը վիրավորանք է դիտարկել և լրագրողի հոդվածի հետեւյալ նախադասությունը՝ «Տաքու վարորդները մարզկենտրոնի քարուքանդ ճանապարհներով անցնելիս «բարի խոսքերով» Են հիշում քաղաքապետին»: Ըստ հայցվորի՝ «բարի խոսքերով» արտահայտությունն ուղղակի վիրավորանք է քաղաքապետին:

Նոյեմբերի 19-ին «Հետքի» խմբագրությունը ստացավ Վերաքնիչ քաղաքացիական դատարանի որոշումը, համաձայն որի՝ նոյեմբերի 13-ի նիստում դատարանը (նախագահող դատավոր՝ Կ. Յակոբյան) որոշել է բավարարել հշեւանի քաղաքապետարանի Եւ քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի հայցն ընդդեմ «Հետաքննող լրագրողների»: Վերաքնիչը բեկանել է Կենտրոն Եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի վճիռը Եւ գործն ուղարկել Ետ՝ նոր քննության:



Ա. Միմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՀԱՅ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՎԱԿԱՆ».

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՅԱՎԱԿԱՆ
ՀԱՅԱՀԱՅ ՀԱՅԱՎԱԿԱՆ՝
«ՀԱՅԱ ԲԱՐԱՔ ՀԱՅԱՎԱԿԱՆ»**

2001թ. հունվարի 25-ին Հայաստանի Հանրապետությունը դարձավ Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ, որով այս կառույցի առջեւ ստանձնեց մի շաբթ պարտավիրություններ, այդ թվում՝ նաեւ անդամակցություն ստանալու պահին Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) ստորագրման եւ անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ՄԻԵԿ-ի վավերացման պարտավորություններ: Մեր պետությունը վավերացրել է ՄԻԵԿ-ը 2002 թ. ապրիլի 26-ին: ՄԻԵԿ-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (ՄԻԵԿ) վերջնական վճիռներն իրենց մասնակցությամբ վեճերով:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2004) 5 հանձնադարական-առաջարկության 3-րդ կետով առաջարկվում է, որ անդամ պետություններն իրենց իրավական համակարգում կոնվենցիան կյանքի կոչեն՝ ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի կույսի ներքո: Դետելով այս առաջարկությանը՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում են. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարակի համար՝ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատուանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Պետք է փաստել, որ Հայաստանի Հանրապետության դատարանների գերակշիռ մեծամասնությունը շարունակում է անուշադրության մատնել Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթները, եւ այդ դրույթների մեկնաբանման նպատակով Սարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից սահմանված բազում կարեւորագույն սկզբունքներ¹: Ասվածի վառ ապացուցն են բոլորովին վերջերս «Իշեւանի քաղաքապետարանն ընդդեմ «Հետաքննող լիազրողների»» գործի շրջանակներում Երեւանի Կենտրոն Եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը եւ նույն գործով ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը թեեւ իր վճռում վկայակոչում է Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուրի արտահայտվելու ազատության իրավունքը, հետագայում այն ընդհանրապես որեւէ հղում չի պարունակում նույն հոդվածի 2-րդ մասին: Մինչդեռ, 10-րդ հոդվածի 2-րդ մասն է, որ սահմանում է այն իհմքերը, որոնց առկայությամբ միայն անհատի արտահայտվելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումն ընդհանրապես որեւէ հղում չի պարունակում ՄիԵԿ-ին եւ ոչ էլ ՄիԵԴ-ի կողմից արտահայտվելու ազատության բնագավառում սահմանված ընդհանուր սկզբունքներին:

Գործի փաստերը վկայում են, որ 2008 թ. մայիսի 20-ին «Ազգ» օրաթերթի Ներդիրում տպագրվել է Ուսկան Սարգսյանի «Ում գրպանն են մտնում ավագահանքի փողերը» հիդվածը, որտեղ մասնավորապես նշվել է. «Դիլիջան քաղաքում ընթացող շինարարության համար այստեղ ավագ տեղափոխող վարորդը վկայեց, որ լճից մի մեքենա ավագ վերցնելու համար 8.000 դրամ են վճարում, ավելի մեծ տարողությամբ մեքենա բեռնելու համար մինչեւ 20.000 դրամ է պահանջվում: Ովեր՞ն են այս ջրամբարի հարստությունից օգտվողները, որոնք լինեն տիղմից մաքրելու պատճառաբանությամբ, անօրինական չհարկվող մեծ եկամուտներ են ստանում:

Մեր ուսեցած տեղեկությամբ՝ այս թիգնեսը գտնվում է Իշեւանի քաղաքապետ Վարդուժան և Սերսիսյանի վերահսկողության ներքո:

Այն պաշտոնապես ճշտելու համար 2007 թ. հոկտեմբերին լժից ավագի արդյունահանման կապակցությամբ նամակով դիմեցինը Տավուշի մարզի դատախազություն...»: 2008 թ. մայիսի 26-ին նույն թեմայով տեղեկություններ են տեղադրվել և սեղմանական կայքում: Հրապարակմանը հետեւել է Իշեւանի քա-

¹ American Bar Association, Rule of Law Initiative, Judicial Reform Index for Armenia, Volume III, January 2008.



ղաքապետարանի հայցը՝ պահանջով, որ դատարանը պարտավորեցնի «Հետաքննող լրագրողներ» կազմակերպությանը՝ հերթել հշեւանի քաղաքապետարանի գործարար համբավը եւ հշեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորող տեղեկությունները եւ փոխհատուցել հայցվորի կրած վսասը:

Հիշյալ հոդվածները կարդացած անձանց համար դժվար չէ տեսնել, որ դրանք ընդհանրապես որեւէ ուղղակի կամ անուղղակի անդրադարձ չեն պարուսակում հշեւանի քաղաքապետարանին: Հետեւարար, հայցը չի կարող վերաբերել հշեւանի քաղաքապետարանի գործարար համբավի արատավորմանը: Ինչ վերաբերում է քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորելու հարցին, ապա փորձենք հայցի այս մասը դիտարկել ՄիԵԿ-ի 10-րդ հոդվածի եւ այդ հոդվածի մեկնաբանման նպատակով ՄիԵԴ-ի կողմից սահմանված ընդհանուր սկզբունքների լույսի ներք:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր որ ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որովք սահսրածաված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու նպատակով»:

ՄիԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից պարզ է դառնում, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե մի-

շամտությունը «Նախատեսված է օրենքով», ծառայում է հոդվածում թվարկված «օրինական նպատակներից» մեկին, տվյալ դեպքում՝ անձի «հեղինակությունը պաշտպանելուն» եւ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»։ Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԴ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխում է «հրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջեւ դրված «օրինական նպատակին», եւ արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «տեղին եւ բավարա՞ր են»²։ Որպես կանոն, արտահայտվելու ազատության այն սահմանափակումները, որոնք ՄԻԵԴ-ը համարել է 10-րդ հոդվածի խախտում, չեն բավարարում այս երրորդ պայմանը եւ, կարծում եմ, որ այս հայցը նույնպես անհիմն է հեկ այս մասով։

ՄԻԵԴ բազմից շեշտել է, որ. «Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության լրջագույն հիմքերից է, նրա առաջընթացի եւ յուրաքանչյուր մարդու զարգացման նախապայմանը»։ ...Այս տարածվում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների կամ գաղափարների» վրա, որոնք դրականորեն են ընդունվում կամ վիրավորական չեն, այլևս այնպիսիների, որոնք վիրավորական են, ցեցող կամ անհանգստացնող պետության կամ հասարակության որեւէ հատվածի համար։ Այդպիսին է բազմակարծության, հանդուժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»³։ Այնուհետեւ, քաղաքական խոսքի կամ հանրության շահերին առնչվող հարցերի վերաբերյալ ընսարկումների սահմանափակումները պետք է լինեն խիստ ներ։ Ավելին, քաղաքական կամ հասարակական գործիչները, որոնց թվին ՄԻԵԴ-ը դասում է նաեւ համայնքների ղեկավարներին, պետք է առավել հանդուժողական լինեն ընսադատության հանդեպ, քան մասնավոր անձինք, քանի որ «ի տարբերություն վերջիններին՝ հասարակական գործիչը գիտակցաբար ընդունում է, որ իր յուրաքանչյուր խոսք կամ արարք կարող է լուրջ ընսության առիթ հանդիսանալ»⁴։

-
- 2 *Sunday Times v. the United Kingdom (no. 1)*, մաս 62
<http://cmisckp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=Sunday%20%7C%20Times&sessionid=38628289&skin=hudoc-en>
- 3 *Handyside v UK*, No 5493/72, մաս. 49,
<http://cmisckp.echr.coe.int/tkp197/view.asp?action=html&documentId=695376&portal=hbkm&source=externalbydocnumber&table=F69A27FD8FB86142BF01C1166DEA398649>
- 4 *Söder v Turkey*, No 26682/95, մաս 61,
<http://cmisckp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbkm&action=html&highlight=S%CFCrek%20%7C%20v%20%7C%20Turkey&sessionid=38438978&skin=hudoc-en>



լրագրողների կամ լայն հանրության համար եւ պետք է, հետեւաբար, դրսեւորի տուերանտության ավելի մեծ աստիճան»⁵: ՄիԵԴ-ի կարեւորագույս սկզբունքներից մեկն էլ այն է, որ լրագրողական ազատությունը ներառում է նաեւ չափազանցության, նույնիսկ պրովոկացիայի որոշակի աստիճան⁶: Արտահայտվելու ազատության խախտումներին վերաբերող գործեր քննելիս ՄիԵԴ-ը մշտապես առավել մեծ պաշտպանություն է վերապահում լրատվամիջոցներ արտահայտված սուբյեկտիվ կարծիքին, քան փաստական մեղադրանքին, քանի որ, ըստ Դատարանի, սխալ է ակնկալել, որ սուբյեկտիվ կարծիքն առհասարակ հնարավոր է արդարացնել նվազագույս փաստական հիմքից զատ մեկ այլ բանով⁷:

Իր երկարատեւ գործունեության ընթացքում ՄիԵԴ-ը քննել է նույնանման փաստական հանգամանքներով մի քանի գործեր, որոնց սկզբունքները վստահաբար կիրառելի են նաեւ այս գործի շրջանակներում: Դրանցից են Ֆիլիպովիչն ընդդեմ Սերբիայի, Սուլոյովսկին ընդդեմ Լեհաստանի, Լոմբարդոն եւ այլք ընդդեմ Սալթայի, Դարրովսկին ընդդեմ Լեհաստանի եւ այլն: Վրժանահիշատակ է, մասնավորաբես, Ֆիլիպովիչն ընդդեմ Սերբիայի⁸ գործը, որի շրջանակներում ՄիԵԴ-ը քննության եր առել մի հարկային տեսուչի դիմում, որը հասարակական հավաքի ժամանակ Սերբիայի փոխվարչապետի ներկայությամբ հրավարակավ հայտարարել էր, որ Բարուչիսայի քաղաքացական «ծիշու մարդ չէ իր պաշտոնի համար», քանի որ նա «արդեն իսկ յուրացրել է 500 000 գերմանական մարդ», չնայած այն հանգամանքին, որ Ներպետական դատարանները որեւէ մեղադրական դատավճիր չեին կայացրել քաղաքապետի նկատմամբ: Այս գործում հարկային տեսուչի արտահայտվելու ազատության իրավունքի խախտում հայտնաբերելիս ՄիԵԴ-ը հիմնվել էր իր իսկ կողմից սահմանված մի շարք սկզբունքների վրա, այդ թվում՝ այն, որ դիմումատուի քննադատության թիրախը քաղաքացական է, որը հասարակական գործիք է, որ Ներպետական դատարանի կողմից սահմանված փոխհատուցման չափը հավասար էր դիմումատուի վեց ամսվա վարձատրությանը, եւ որ

5 Lingens v Austria, No 9815/82, մաս 42,
<http://cmisckp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=38438978&skin=hudoc-en&action=request>

6 Prager and Oberschlick v Austria, մաս 38,
<http://cmisckp.echr.coe.int/tkp197/portal.asp?sessionId=38438978&skin=hudoc-en&action=request>

7 Schwabe v Austria, No 13704/88, De Haes v Belgium Application no. 19983/92,
Lingens v. Austria no. 103, p. 28, « 46.

8 Filipović v Serbia, No 27935/05, <http://cmisckp.echr.coe.int/tkp197/view.asp?item=8&portal=hkcm&action=html&highlight=10%20%7C%20mayor%20%7C%20defamation&sessionId=38553586&skin=hudoc-en>

հստակորեն դիմումատուն ուներ միանգամայն օրինավոր պատճառ՝ հավատալու, որ քաղաքապետը, թերեւս, խուսափել է հարկեր վճարելուց, եւ որ այս մեղադրանքն անհիմն անձնական հարձակում չէ քաղաքապետի վրա:

Ուշադրության արժանի է նաեւ *Սոկոլովսկին ընդիւմ Լեհաստանի* գործը, որը վերաբերում էր մի լեհ քաղաքացու արտահայտվելու ազատության սահմանափակմանը: Քաղաքացին մեղադրվել էր քաղաքական բնույթի բուկետ բաժանելու մեջ, որի մեջ սուր ընսադատության էին արժանացել Կողմիսալու համայնքի ավագանու անդամները, որոնք գաղտնի քվեարկությամբ իրենք իրենց ընտրել էին տեղական ընտրությունների ընտրական հանձնաժողովներում: Ընսադատության հեղինակը դարձյալ որեւէ աղբյուր կամ ապացույց չէր վկայակոչել: Վկագանու անդամներից մեկը նյութի հեղինակին մեղադրել էր գրապարտության մեջ, եւ ներպետական դատարանները մեղադրական դատավճիռ էին կայացրել: ՄիԵԴ-ը, սակայն, ճանաչել էր դիմումատուի արտահայտվելու ազատության ոտնահարումը՝ համարելով, որ բուկետը վերաբերում է հանրությանը հետաքրքրող եւ մտահոգող հարցերի, այն է՝ համայնքի ավագանու անդամների կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում կատարված որոշ անթույլատրելի արարցների:

Այս եւ նման այլ գործերի լուսի ներքո՝ «Ազգ» օրաթերթում տպագրված վերոհիշյալ հոդվածը եւ www.hetq.am ինտերնետային կայքում տեղադրված տեղեկությունները չեն կարող արատավորող դիտվել հետեւյալ պատճառներով: Առաջին՝ կողմերը չեն վիճարկում այս հարցը, որ լճից կատարվող ավագահանությունն ապօրինի է: Դատարանում հայցվորը նշում է, որ իր կողմից հշեւանի ներքին գործերի բաժին դիմումներ են ներկայացվել, որով պատկան մարմինները տեղեկացվել են «Սպիտակ լճից» ապօրինի ավագահանության մասին: Յոդվածի հիմնական ուղերձը, այսպիսով, ոչ թե կոնկրետ անձի հասցեին մեղադրանք հնչեցնելն է, այլ, առաջին հերթին, հանրությանը մտահոգող հիմնախնդիր՝ ապօրինի ավագահանության հարցը ընսարկելը: Եթե ավագահանությունն ապօրինի է, ապա հստակորեն դրանից շահույթ են ստանում մեկ կամ մի քանի անհատներ կամ կազմակերպություններ, իսկ համայնքը կամ պետությունը՝ ոչ: Յոդվածի վերնագիրը եւ բուն հոդվածը, ըստ այդմ, հարցադրումներ են պարունակում: «Ու՞մ գրպանն են մտևում ավագահանքի փողերը» եւ «Ուկե՞ր են այս ջրամբարի հարստությունից օգտվողները, որոնք լիճը տիղմից մաքրելու պատճառաբանությամբ անօրինական, չհարկվող մեծ եկամուտներ են ստանում»: Այս պնդումը, որ «բիզնեսը գտնվում է հշեւանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերահսկողության ներքո», կարելի է դիտարկել ավելի շատ որպես սուբյեկտիվ կարծիք, քան



50



փաստական մեղադրանք: Ամեն դեպքում, այն գուրկ չէ բավարար փաստական հիմքից՝ վարորդի կողմից տրամադրված տեղեկությունները, Տավուշի մարզի դատախազության ուղարկված հարցումը, «Սպիտակ լճի» աշխարհագրական դիրքը՝ հջեւան քաղաքի վարչական սահմաններում, ինչպես նաև քաղաքապետ Վերուժան Ներսիսյանի պաշտոնավարման տարիների ընթացքում ապօրինի ավագահանության շարունակական բնույթը: Եվ, վերջապես, այս գործում որոշիչ է նաև այն, որ տեղեկատվությունը տարածվել է 2 լրատվամիջոցի կողմից: ՄիԵ՞՛Ռ-ը բազմից նշել է, որ իր սահմանած սկզբունքները վերաբերում են ցանկացած արտահայտության, սակայն դրանք ավելի քան խստորեն պեսը են պահպանվեն լրատվամիջոցների եւ նրանց ներկայացուցիչների նկատմամբ, որոնք կատարում են «հանրային հսկող շան» գործառույթ⁹ տեղեկություններ հաղորդելով հանրությանը, վերջինիս շահերին վերաբերող ցանկացած հարցի շուրջ¹⁰:

Վերոգրյալի լուսի ներքո հայցը ենթակա է մերժման:

9 *Goodwin v UK*, No 544, մաս 39,
<http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Goodwin&sessionid=38628963&skin=hudoc-en>

10 *Jersild v Denmark*, No 15890/89, մաս 35,
<http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbkm&action=html&highlight=Jersild%20%7C%2010&sessionid=38629172&skin=hudoc-en>

Քրիստոն Աղալարյան Արարած Դավթյան

ԳՈՐԾ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱ ԱՌԱՋԱԿԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՌԱՋԱԿԱՆ

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, Վրացն Խաչատրյանի նախագահությամբ, ապրիլի 17-ին ավարտեց «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի» համար մեղադրվող «Առավոտ» եւ «Չորրորդ իշխանություն» օրաթերթերի ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի դատավարությունը։ Դատարանն ապացուցված համարեց, որ 2008 թ. օգոստոսի 5-ին՝ Սմբատ Այվազյանի դատաքննության ժամանակ, Շամշյանը, չենթարկվելով լուսանկարահանումները դադարեցնելու վերաբերյալ դատավորի կարգադրությանը, բացահայտ անհարգալից վերաբերմունքը է դրսեւորել դատարանի նկատմամբ։

«Նիստի սկզբում դատավոր Գագիկ Ավետիսյանը ներկա գտնվող լրագրողներին թույլատրել է ձայնագրել եւ նկարահանումներ կատարել 5 րոպե ժամանակով։ Սակայն Գագիկ Շամշյանը չի ենթարկվել կարգադրությանը, ավելին՝ վիրավորական խոսքեր է ուղղել դատարանի եւ նիստը նախագահող դատավոր Գագիկ Ավետիսյանի հասցեին՝ անվանելով «հոդրե», «տխմար», իր պահվածքով խոչընդոտել է դատական նիստի կարգը, որի համար դատավորի կարգադրությամբ Գ. Շամշյանին հեռացրել են դատական նիստերի դահլիճից, վերցրել են արգելաքի եւ հանձնել ոստիկանությանը,- նախաքննությանը եւ դատարանին տված ցուցմունքում նշել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կարգադրիչների ստորաբաժանման պետ Վրթուր Փիլոսյանը։

Բառացիորեն նույնը հայտնել են նաեւ նշյալ դատարանի կարգադրիչներ Ռաֆայել Ստեփանյանը, Շահեն Օհանյանը եւ դատական նիստերի քարտուղար Յասմիկ Զալայյանը։ Շուրջ 6 ամիս տեւած նախաքննության արդյունքում հենց այս չորս անձանց ցուցմունքներով ել կազմվել է մեղադրական եզրակացություն, եւ գործն ուղարկվել է դատարան։



52



«Թե Եկուախորհուրդն իր բանաձեւերով, թե միջազգային այլ հեղինակավոր կառույցներ տարբեր գործերով մեր Երկրին բազմիցս հորոդորել են չիհմնվել միայն ոստիկանների ցուցմունքների վրա: Յիմա նույն բանը տեղի է ունեցել այս գործով. Վերցրել են միայն դատական կարգադրիչների ցուցմունքները եւ քրեական գործ հարուցել», - ասում է փաստաբան Յովիկ Արտենյանը:

Վերջինս ներկա է եղել միջադեպին եւ, որպես ականատես, պատմում է կատարվածի մասին. «Վյո օրը դատավոր Գագիկ Ավետիսյանը հենց մտավ Նիստերի դահլիճ, դեռ Նիստը չսկսած՝ միանգամից Գագիկ Շամշյանին ասաց՝ ինձ մի նկարեք: Շամշյանն էլ պատասխանեց, որ ինքը չի նկարում, ծայնագրում է: Սակայն չիմանալով, որ այդ տեխնիկան (ֆոտոխցիկը) իսկապես ունակ է նաև ծայնագրելու, ամենայն հավանականությամբ դատավորը չհավատաց եւ մտածեց, որ իր նկատմամբ իրականացվում է ծաղրանք: Եվ սանկցիա կիրառեց լրագրող Գագիկ Շամշյանի նկատմամբ՝ հեռացնել դատարանի դահլիճից»:

«Կարող են նաեւ ֆոտոապարատս փորձաքննության ուղարկել եւ համոզվել, որ այն նաեւ ծայնագրում է, եւ ես միայն ծայնագրում էի», - հավելում է Գագիկ Շամշյանը եւ հիշում, որ դեպքից մի քանի օր առաջ՝ դարձյալ Սմբատ Այվազյանի դատավարության ժամանակ, դատավոր Գագիկ Ավետիսյանն իր նկատմամբ Նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիա է կիրառել:

«Ուղղակի Ավետիսյանն իմ հանդեպ վատ է տրամադրված, որովհետեւ ես կաղրեր եմ ֆիքսել, որուցում նա դատի ժամանակ քնած է կամ քիթն է փորում, - ասում է Շամշյանը: Վյո օրը ես ինքնակամ դահլիճը լքեցի: Բայց Երկրորդ անգամ՝ միջադեպի օրը, հրաժարվեցի Ենթարկվել դատավորի անօրինական կարգադրությանը եւ պահանջեցի տրամադրել դահլիճից հեռացնելու որոշման պատճենը: Բայց Ավետիսյանն ավելի բորբոքվեց, ու կարգադրիչները հարձակվեցին վրաս, բռնությամբ դահլիճից դուրս հանեցին ու մոտ 1-1,5 ժամ ապօրինաբար պահեցին 1-ին հարկի աստիճանների տակ: Յետո Կենտրոնի փոխոստիկանապետ Արայիկ Պետրոսյանը եկավ եւ տաքսիով ինձ տարավ ոստիկանություն»:

«Սա ուղղակի խոսքի ազատության դեմ արշավ է, ուրիշ մեկնարանություն չունեմ», - ասում է Յայաստանի հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Ղանիեյյանը: Նա նույնպես դեպքի օրը եղել է դահլիճում եւ շեշտում է, որ Շամշյանի կողմից դատարանի հասցեին արված որեւէ Վիրավորական արտահայտություն չի լսել:

Գործը քննող Գայանե Երիցյանը նախաքննության ընթացքում Միքայել Ղանիեյյանից բացի ցուցմունքներ է վերցրել նաեւ մի քանի ականատես լրագրողներից: Սակայն որպես վկա դատակուզվել են միայն դատարանի կարգադրիչները եւ Նիստերի քարտուղարը:

«Դա արվել է միայն նրա համար, որպեսզի ստանան այն վկայությունը, որն իրենց պետք է, եւ այն մարդիկ, ովքեր նախաքննու-

թյան ժամանակ տվել են ճիշտ վկայություններ, կամ այնպիսի վկայություններ, որոնք իրենց հարմար չեն, նրանք չեն դատակուչ վել», - նշում է Միքայել Դասիեյանը:

Դատախազ Լեռն Զարխիֆալակյանը, ով հաստատել է մեղադրական եզրակացությունը Երևանում պաշտպանում եր մեղադրանքը, հրաժարվեց պատասխանել «Հետքի» հարցերին:

Իսկ Յովիկ Արսենյանը, որ պաշտպանում է Գագիկ Շամշյանի շահերը, նշում է, որ տեսականորեն կարող է Լեռն Զարխիֆալակյանի դեմ քրեական գործ հարուցելու միջնորդություն ներկայացնել: «Որովհետեւ իրավական տեսակետից նման իրավունք չկա՝ ընտրողական մոտեցում ցուցաբերել վկաների հարցում: Բայց միջնորդություն ներկայացնելու հնարավորությունս տեսական է, որովհետեւ ես իրատես անձնավորություն եմ, հետեւապես նման միջնորդություն չեմ ներկայացնի, քանի որ Գլխավոր դատախազությունում այսպիսի վիճակը համատարած է Եր զանգվածային, երբ հանցակազմի բացակայությամբ գործը հասցնում են դատարան: Այս ամենի նպատակն արդեն իրավական դաշտում չէ», - ասում է Յովիկ Արսենյանը:

Ուշագրավն այս է, որ կարգադրիչ-վկաների ցուցմունքներից բացի, նախաքննական մարմինը Շամշյանի մեղքը հիմնավորված է համարել նաեւ դատական նիստի ծայսագրությամբ: Գործում առկա է այդ ծայսագրության վերծանումը, սակայն դրանում բացակայում են «հորթ» եւ «տիսմար» վիրավորական արտահայտությունները:

«Մեղադրող Լեռն Զարխիֆալակյանը գտնում է, որ նախաքննական մարմինը ճիշտ որակում է տվել Եր ապացուցված է, որ դատավոր Գագիկ Ավետիսյանին անվանել եմ «հորթ» եւ «տիսմար»: Ինձ համար անհասկանալի է, որ դատախազը հիմնավորված չի համարում պետական հիմնարկության, տվյալ պարագայում՝ Փորձագիտական կենսորության վերակացությունը (Վերծանվել է միջադեպի օրը դատարանի կողմից արված նիստի ծայսագրությունը), որով հերքվել է այդ անհեթեթ մեղադրանքը: Այսինքն՝ նշված հիմնարկությունը ստու՞մ է: Ել ինչո՞ւ է մեր՝ հարկատուներիս հաշվին նշված հիմնարկությունն աշխատում», - հարցնում է Գ. Շամշյանը:

Դատաքննության ընթացքում մեղադրող Լեռն Զարխիֆալակյանը դատարանին ներկայացրեց մի փաստաթուղթ, ըստ որի՝ Գագիկ Շամշյանը մինչեւ 2008 թ. օգոստոսի 8-ը, այսինքն՝ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք» դրսերթելու պահին (օգոստոսի 5-ին), եղել է հաշվառման տակ եւ նրա նկատմամբ սահմանված պայմանական փորձաշրջանի ժամկետը դեռ չեր ավարտվել:

Յիշեցնենք, որ 2007 թ. հուլիսի 16-ին օրինական ուժ է ստացել Շամշյանի նկատմամբ կայացված դատավճիռը, որով նա մեղավոր եր ճանաչվել անձի արժանապատվությունը վիրավորելու եւ շոր-



54



թելու համար: Դատավճռով ազատազրկման ծերով նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել եւ սահմանվել եր մեկամսյա փորձաշրջան:

«Դատախազ Զարխիֆալակյանը դատավարության ընթացքում համոզվեց, որ չեն կարողանում ապացուցել, որ դատավոր Գագիկ Ավետիսյանին անվանել եմ «հորթ» կամ «տիսմար», ավելին՝ դա չի ապացուցվում նաեւ դատական նիստի ծայնագրությամբ, ուստի դիմեց այլ քայլերի», - դատարանում հայտարարեց Գ. Շամշյանը: Իսկ Գ. Շամշյանի պաշտպանը հիշյալ փաստաթղթի «կանխամտածված ի հայտ գալը» համարեց սպառնալիք եւ ճնշման միջոց:

«Շամշյան, լրիդ, ընդունիր մեղքդ, այլապես հետո ավելի խիստ կվարվենք, որովհետեւ պատիժդ մարված չէր, եւ դա կղիտվի որպես ծանրացնող հանգամանը: Սա է ողջ նպատակը. ուղղակի ամոր է», - մեկնաբանեց Յովիկ Արսենյանը:

Նա միջնորդություն ներկայացրեց եւ խնդրեց դատարան հրավիրել եւ որպես վկա հարցաքննել մի շարք անձանց, «որոնք ներկա են եղել օգոստոսի 5-ի Սմբատ Այվազյանի դատավարությանը եւ իրենց ցուցմունքներով դատարանին հևարավորություն կտան հրականացնել բազմակողմանի քննություն եւ վեր հանել օրեկտիվ ճշմարտությունը»:

Սակայն դատավոր Վրմեն Խաչատրյանը միջնորդությունը մերժեց՝ պատճառաբանելով, որ վկաներին հրավիրելիս պաշտպանական կողմը չի նշել նրանց հասցեները, ինչը դատարանին գրկել է նրանց ծանուցագրեր ուղարկելու հնարավորությունից:

Գագիկ Շամշյան իր հերթին միջնորդություն որպես վկա դատարան հրավիրել դատավոր Գագիկ Ավետիսյանին, «քանի որ քրեական գործի մեխն այն է, որ ես վիրավորել եմ իրենց նրան», - պարզաբանեց նա:

«Մի քանի անձանց մասով միջնորդություն ներկայացնելիս ներառեիք նաեւ Գագիկ Ավետիսյանի անունը: Քանի որ դա չեք արել, որպես անժամանակ միջնորդություն, դատարանը թողնում է այն առանց քննության», - հայտարարեց դատավոր Խաչատրյանը:

«Դատավորները մեկից մեկից եստաֆետներ են փախցնում, թե ով ավելի շատ օրենք կիսախտի եւ արդարադատության դեմ հանցագործություններ կգործի: Դա մեծ դժբախտություն է, երբ կան ականատես վկաներ եւ միջնորդում ենք նրանց հարցաքննել, բայց հանիրավի մերժում են, այն դեպքում, երբ պաշտպանական կողմը միջնորդության ընթացքում նաեւ ասաց, որ կարող ենք մեր նախաձեռնությամբ այդ վկաներին հրավիրել դատարան», - մեկնաբանեց փաստաբան Յովիկ Արսենյանը:

Մեղադրական ճառի շրջանակներում դատախազ Լեւոն Զարիխիֆալակյանը միջնորդություն Շամշյանին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգիարյուրապատիկի չափով:

«Դատավարության ողջ ընթացքում ինձ համար թիվ 1 անակնալու դա էր: Կարծում եի՝ քաղաքաբետի ընտրություններից առաջ գոնե մի 3 ամսով ինձ «ճամպրուկային» կուղարկեն. իրենք (իշխանությունները) ինձնից կպրծնեին, ես ե՛ իրենցից», - մեկնաբանում է Գագիկ Շամշյանը:

Պաշտպանական ճառում փաստաբան Յովիկ Արսենյանը նշեց, թե անհրաժեշտ է դադարեցնել «լրագրողի նկատմամբ շինօր եւ հանիրավի քրեական հետապնդումը»: Շամշյանը միացավ այս միջնորդությանը եւ հրաժարվեց ոչ միայն պաշտպանական ճառ ասելուց, այլեւ Վերջին խոսքից: «Միայն ուզում եմ ասել, որ ես կատարել եմ իմ մասնագիտական պարտականությունները, իսկ դատավոր Գագիկ Ավետիսյանը խոչընդոտել է ոչ միայն իմ, այլեւ տպյալ դատական նիստին ներկա լրագրողների աշխատանքին», - նշեց Շամշյանը: Նրա խոսքերով՝ «Գագիկ Ավետիսյանի խարդավանքների պատճառով բազմաթիվ նման միջադեպեր են եղել, եւ նույն այդ «խարդավանքների հետեւանքով է, որ դատարանի կարգադրիչները սուստ ցուցմունքներ են տալիս»:

Ապրիլի 17-ին դատավոր Վրմեն Խաչատրյանը հրապարակեց դատավճիռը. «Գագիկ Շամշյանին մեղավոր ճանաչել առաջադրված մեղադրանքում եւ Նրան տուգանել նվազագույն աշխատավարձի 350-ապատիկի չափով»:

Յունիսի 15-ին Վերաբենիչ դատարանն անփոփոխ թողեց այս դատավճիռը: Բայց քանի որ Շամշյանին առաջադրված մեղադրանքը՝ ԶՕ 343-րդ հոդվածը, Ներառված է Ազգային ժողովի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման մեջ, Վերաբենիչը պետք է այս կապակցությամբ նոր որոշում կայացներ: Այդպիսով, հուլիսի 17-ին Գագիկ Շամշյանի նկատմամբ Վերաբենիչ դատարանը կիրառեց համաներում՝ ազատելով 350 հազար դրամ տուգանքը Վճարելու պարտականությունից:

Սակայն ֆոտոլրագրող Շամշյանը հանդես եկավ արդարադատության նախարարին, Գլխավոր դատախազին եւ Վճռաբեկ դատարանի նախագահին հասցեագրված բաց նամակով, որում նշել եր, թե Վերաբենիչ դատարանի համաներման որոշումն անօրինական է, քանի որ նախկինում մեկ այլ քրեական գործով իր նկատմամբ համաներում արդեն կիրավել է:

«Իրենք (Վերաբենիչի դատավորները) ասում են՝ մենք քեզ լավություն ենք անում, շուխուր մի արա: Չե, ինձ օրենքն է պետք, օրենքի տառը պաշտպանեք», - ասում է ֆոտոլրագրողը: Նա միաժամանակ հույս էր հայտնել, որ Վերոհիշյալ բարձրաստիճան պաշտոնյաները կծռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ օրինախախտ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Սակայն, որպես բաց նամակի հետեւածք, Գլխավոր դատախազությունը ներկայացրեց վճռաբեկ բողոք: Արդյունքում բեկանվեց



56



Վերաքննիչի կողմից Շամշյանի նկատմամբ համաներում կիրառելու որոշումը եւ ուժի մեջ մնաց առաջին ատյանի դատարանի՝ Վերշինիս 350 հազար դրամով տուգանելու դատավճիռը:

«Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում եմ, որ դատավճիռն արդարացի չէ: Բայց Եվրադատարան դիմելու համար անպայման պետք է ունենամ նաեւ իմ դեմ նշանակված պատժի՝ 350 հազար դրամ տուգանքի վճարման անդորրագիրը: Դրա համար ել որոշեցի Ենթարկվել դատավորի որոշմանը», - ասում է Գագիկ Շամշյանը:

Նա վճարել է տուգանքի մեծ մասը՝ 200 հազար դրամը՝ պարտավորվելով մյուս մասը՝ 150 հազար դրամը, վճարել 1 տարվա ընթացքում: Սակայն ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն բաժանմունքի պետ Կարեն Խաչատրյանը դիմել է Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան եւ միջնորդել՝ ֆոտոլրագրող Շամշյանի նկատմամբ նշանակված տուգանքը փոխարինել հանրային աշխատանքով:

Պարզաբանելով Ներկայացված հայցի պահանջները՝ Կ. Խաչատրյանը մակարամասնել է, թե 7-օրյա ժամկետում ամբողջ տուգանքը չվճարելու դեպքում այլընտրանքային պատիժների կատարման բաժինը իրավասու եւ պարտավոր է միջնորդություն Ներկայացնել դատարան՝ տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու պահանջով: Սակայն միևնույն դատաքննությունը կսկսվեր, հետաձգվող դատական նիստերի արակնում Շամշյանը վճարել է նաեւ տուգանքի մնացած 150 հազար դրամը, ինչն ել հաշվի առնելով՝ դատավոր Մխիթար Պապոյանը գործը կարճել է:

Ա. Սկսննյան

Առաջին պատմութեան եւ
Առաջին պատմութեան եւ
Երրորդ պատմութեան
Առաջին գոգոյ պատմութեան
Առաջին գոգոյ պատմութեան

«Ա ռավու» եւ «Չորրորդ իշխանություն» օրաթերթերի ֆուտոլրագրող Գագիկ Չամշյանի գործով Կենտրոն Եւ Նորք-Մարաշ համայնքների ընդիանուղ իրավասության դատարանի 2009 թ. ապրիլի 17-ի դատավճիռը¹¹ որոշակիորեն հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 10-րդ և 6-րդ հոդվածների դրույթների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԿ) սահմանադրության մի քանիսին:

ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է յուրաքանչյուրի արտահայտվելու ազատությունը «առանց պետական մարմինների միջամտության եւ անկան սահմաններից»: Վյուհանդերձ, այս իրավունքը բացարձակ չէ, եւ 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է այն հիմքերը, որոնցով այն կարող է սահմանափակվել՝ պայմանավորված

«այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկար-



58



գությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավուսքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու նպատակով»:

Ինչպես ցուց է տալիս Վերոհիշյալ հոդվածի Եւ ՄիԵԴ-ի արակտիկայի Վերլուծությունը, ազատորեն արտահայտվելու իրավուսքի որեւէ միջամտություն համարվում է իրավաչափ միայն ու միայն այն դեպքում, եթե այն բավարարում է հիշյալ հոդվածի բոլոր երեք պայմանները միաժամանակ: Պայմաններից առաջինն այն է, որ ցանկացած միջամտությունը պետք է «**ևախատեսված լինի օրենքով**՝ ապահովելու իրավական որոշակիության սկզբունքը եւ հնարավորություն ըլձեռնելու անձին ինքնուրույն, իսկ հարկ եղած դեպքում նաեւ համապատասխան մասնագետի օգնությամբ կանխատեսելու իր գործողությունների համար նախատեսված պատասխանատվության ծեւը եւ չափը:

Երկրորդ պայմանը պահանջում է, որ պետական մարմինների ցանկացած միջամտություն համապատասխանի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «**օրինական նպատակներից**» առնվազն մեկին: Եվ երրորդ ու ամենակարեւոր պայմանն այն է, որ միջամտությունը պետք է «**անհրաժշտ լինի ժողովրդավարական հասարակությունում**»: Այս պայմանի առկայությունը որոշելու համար ՄիԵԴ-ը կիրառում է ես երկու իրավական կատեգորիա: Միջամտությունը պետք է բնի «հրատապ հասարակական կարիքից» եւ լինի «**համաշխափի**»: Ավելին՝ միջամտության անհրաժշտությունը պետք է ապացուցվի «**համոզիչ կերպով**», այն է՝ պետության կողմից այդ անհրաժշտությունը հիմնավորող փաստարկները պետք է լինեն «**ստեղին եւ բավարար**»: Ցանկացած միջամտություն, որի նպատակին կարելի էր հասնել «**պակաս սահմանափակող միջոցներով**», համարվում է անհամաշխափի:

Չենց այս վերջին պայմանին է, որ հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի համար Գագիկ Շամշյանի նկատմամբ կայացված դատավճիռը: Ավելայն է, որ դատավոր Գագիկ Ավետիսյանի «**ևեղինակությունն ու իրավուսքները պաշտպանելու**», ինչպես նաեւ ի դեմս նրա «**արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու**» օրինական նպատակով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքի համար Գագիկ Շամշյանին դատապարտելը խախտում է ժողովրդավարական հասարակությունում միջամտության անհրաժշտության պայմանը մի քանի պատճառով:

Ինչպես բազմից նշել է ՄիԵԴ-ը, «Արտահայտվելու ազատությունը հասարակության լրջագույն հիմքերից մեկն է, նրա առաջնաթացի եւ յուրաքանչյուր մարդու զարգացման նախապայմանը»:

...Այն վերաբերում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների կամ գաղափարների», որոնք դրականորեն են ընդունվում կամ վիրավորական չեն, այլև տեղեկությունների կամ գաղափարների, որոնք վիրավորական են, ցնցող կամ անհանգստացնող պետության կամ հասարակության որեւէ հատվածի համար: Այդպիսին է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:¹²

Այս սկզբունքները վերաբերում են ցանկացած արտահայտության, սակայն դրանք առավել քան խստորեն պետք է պահպանվեն լրատվամիջոցների եւ նրանց ներկայացուցիչների նկատմամբ, որոնք կատարում են «հանրային հսկող շան» գործառույթ՝¹³ տեղեկություններ հաղորդելով հանրությանը «վերջինիս շահերին վերաբերող ցանկացած հարցի շուրջ»¹⁴:

Այդ պարտքը կատարելիս լրագրողներն ազատ են՝ ապավինելու որոշակի չափազանցության եւ նույնիսկ պրովոկացիայի¹⁵: Լրագրողների հիշյալ պարտականությանը համապատասխանում է հանրության տեղեկացված լինելու իրավունքը:

Միե՞ն ընդունել է, որ լրատվամիջոցների «հանրային հսկող շան» գործառույթը նաեւ Ենթադրում է այնպիսի հարցերի բարձրացում, որոնք առնչվում են արդարադատության իրականացմանը: Լրատվամիջոցներն այն կառույցն են, որոնք հնարավորություն են ընձեռում քաղաքական գործիչներին եւ հանրությանը տեսնելու, թե արդյոք դատավորները պատշաճորեն են իրականացնում իրենց ծանր պարտականությունները¹⁶:

Դասկանալիորեն, դատավորը, որպես պետության դատական իշխանության Ներկայացուցիչ, նույնպես պետք է հանդուրժող լինի վիրավորական, ցնցող կամ անհանգստացնող տեղեկությունների կամ գաղափարների նկատմամբ:

Մյուս կողմից, դատարանը, ըստ Միե՞ն-ի, օժտված է հատուկ գործառույթներով եւ դրանց իրականացման ընթացքում պետք է վայելի բարձր «հասարակական վստահություն»: «Ճետեւաբար, կարող է հարկ լինել՝ պաշտպանելու այդ վստահությունը կործանարար եւ, ըստ եռլթյան, անհիմ հարձակումներից՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննադատության արժանացած դատավորը պարտավոր է դրսեւորել զսպվածություն, ինչը

12 *Handyside v UK* (1976) 1 EHRR 737, մաս. 49:

13 *Goodwin v UK* (1996) 22 EHRR 123:

14 *Jersild v Denmark* (1994) 19 EHRR 1, մաս 31:

15 *Prager and Oberschlick v Austria* (1995) 21 EHRR 1, մաս 38:

16 Նոյն տեղում, մաս 34:



թույլ չի տալիս նրան անդրադարձնելու իրեն ուղղված հարձակում-ները»¹⁷:

Այս հարցում միանգամայն այլ է ամերիկացի դատավորների մոտեցումը, որոնք խիստ ինքնավստահ են եւ մերժում են այն փաստարկը, որ հասարակության վստահությունն իրենց հեղինակության եւ արդարադատության իրականացման նկատմամբ կարող է խաթարվել թշնամական արտահայտությունների միջոցով¹⁸:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ ներպետական իշխանություններն են, որպես կանոն, որոշում՝ անհրաժեշտ է, արդյոք, տվյալ միջամտությունը արտահայտվելու ազատության իրականացման ընթացքին: Այդուհանդերձ, նրանց հայեցողությունը ենթակա է եվրոպական վերահսկողության ինչպես օրենսդրության, այնպես էլ դրա կիրառության հետ կապված որոշման մասով նույնիսկ այն դեպքում, երբ այդ որոշումը կայացրել է անկախ դատարանը¹⁹:

Վերադառնալով «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության» պայմանի առաջին բաղադրիչին՝ միջամտության «հրատապ հասարակական կարիքին», պետք է փաստե, որ ՄԻԵԴ-ն այս հարցին մոտենում է երկու կարեւոր բաղադրիչների լույսի ներքո:

Միջամտությունն անօրինական է համարվում, եթե արտահայտված խոսքը պարունակում է փաստացի հայտարարություններ կամ սուբյեկտիվ գնահատական, որը, սակայն, նույնպես չպետք է գուրկ լինի որոշակի փաստական հիմքից:

Չասկանալիորեն, Գագիկ Չամշյանը կամ որեւէ այլ մեկը կդժվարանա տալ այսպիսի փաստական հիմք, որը կիհմնավորի դատավոր Գագիկ Ավետիսյանի հասցեին իբր թե հնչեցված ««հորթ», «տիսմար» եւ այլ վիրավորական արտահայտությունների» ճշմարիտ կամ գոնե ճշմարտամոտ լինելը, մանավանդ այն դեպքում, երբ առհասարակ վիճարկելի է այդ արտահայտությունների հնչեցման փաստը: Խնդրո առարկա նիստին ներկա մի շարք անձինք պնդում են, որ նման արտահայտություններ չեն հնչել:

Մինչդեռ այս փաստի առնչությամբ է, որ խախտվել է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ լրագրողի արդար դատաքննության իրավունքը, քանի որ դատարանն անհեթեթ պատճռաբանությամբ մերժել է լսել պաշտպանության կողմի վկաներին²⁰, ինչը հանգեցրել է կողմերի հավասարության սկզբունքի եւ քրեական դատավարության մրցակցության սկզբունքի խախտման:

Դատարանի այն հիմնավորումը, թե վկաներին իրավիրելիս պաշտպանական կողմը չի նշել նրանց հասցեները, ինչը դատա-

17 Նույն տեղում, մասեր 34-35:

18 E. Barendt, *Freedom of Speech*, Oxford University Press, 2007, էջ 321:

19 Նույնը, մասեր 34-35:

20 *De Haes v Gijssels* (1997) 25 EHRR 1, մաս 50:

ուանին գրկել է ծանուցագրեր ուղարկելու հնարավորությունից, դարձյալ վկայում է այն մասին, որ դատարանը լուրջ չի մոտեցել իր պարտականություններին, մինչդեռ ՀՀ Թրեական դատավարության օրենսգրքի 340-րդ հոդվածի 4-րդ մասից պարզ է դառնում, որ դատարանը վկային կարող է կանչել նաեւ իր նախաձեռնությամբ: Վերոգրյալի համատեքստում ՄիԵԴ-ը դժվար թե համարի, որ միջամտության արդարացման համար դատարանի կողմից մատնանշված պատճառները «տեղին են եւ բավարար», եւ որ դատարանի վճիռը հիմնված է «համապատասխան փաստերի ընդունելի գնահատականի վրա»²¹:

Մի վերջին խնդիր, որին հարկ է անդրադառնալ այս գործի առնչությամբ, ժողովրդավարական հասարակությունում միջամտության անհրաժեշտության պայմանի երկրորդ բաղադրիչն է՝ **միջամտության համաշափությունը**: Տուստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության գործում²² ՄիԵԴ-ը միջամտությունն անհամաշափ է համարել զուտ այն պատճառով, որ բրիտանական դատարանը որպես վսափի փոխհատուցում էր ընտրել 1.5 միլիոն ֆունտը:

Եթե մեր դատարանները գտնեն, որ Գագիկ Շամշյանից գանձվելիք տուգանքի չափն անհամեմատելի է վերոհիշյալ գործի գումարի չափի հետ, կարելի է առաջարկել նրանց կարդալ Ամիհալաշինայեն ընդդեմ Մոլդովայի գործը²³, որտեղ ՄիԵԴ-ը նշել է, որ «չնայած դիմողի նկատմամբ սահմանված 360 լեին (համարժեք է 36 եվրոյի) համեստ գումար է թվում, այն, այդուհանդեմ, խորհութանշական արժեք ունի եւ արտահայտում է Սահմանադրական դատարանի՝ դիմողի նկատմամբ խիստ պատիճ կիրառելու ցանկությունը, քանի որ առավելագույնս մոտ է օրենսդրությամբ սահմանված առավելագույն չափին»: Ըստունենք, որ Գագիկ Շամշյանի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրիկունապատիկի չափով տուգանքը, որը համարժեք է մոտ 700 եվրոյի, նույնպես խիստ հեռու է համաշափությունից:

3.4. Յայաստանի Յանրապետության Թրեական դատավարության օրենսգիրը, 7-րդ հոդված, 4-րդ մաս. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եկրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնարանությունները, պարտադիր են դատարանի համար՝ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրարելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

21 Chauvy v France մաս 70:

22 Tolstoy Miloslavski v UK (1995) 20 EHRR 442:

23 Amicalachioie v Moldova դիմում N 60115/00, մաս 38:



Արարատ Գալթյան

ԳՈՐԾԻ ՇԵՐՋԱԿԱՆ ՀԱՅԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

« որրորդ իշխանություն» օրաթերթի լրագրող Գոհար Վեցիրյանին սպառնում էր նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգիարյուրապատիկից չափով տուգանք կամ երկուսից երեք ամսվա կալանք, եթե հաստատվեր նրան առաջադրված մեղադրանքը: Կենտրոն Եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում, Գագիկ Պողոսյանի նախագահությամբ, 2009 թ. մարտի 31-ին մեկնարկեց Վեզիրյանի դատավարությունը:

Ինչպես «Զորրորդ իշխանության» ֆոտոթղթակից Գագիկ Շամշյանը, այսպես էլ Գոհար Վեզիրյանը մեղադրվում էր «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի» համար: «Վիրավորված» դատավորը նորից Գագիկ Ավետիսյանն էր, եւ դեպքը դարձյալ տեղի էր ունեցել Սմբատ Այվազյանի դատաքննության ժամանակ՝ Գագիկ Շամշյանի հետ կատարված միջադեպի հաջորդ օրը՝ 2008 թ. օգոստոսի 6-ին:

Մեղադրանքի հիմքում նորից դրված էին նոյն մալոկանց ցուցմունքները, այս տարբերությամբ, որ վկա-կարգադրիչների թիվը մեկով ավելացել էր: Դատական կարգադրիչների ստորաբաժանման պետ Արթուր Փիլոյանը, կարգադրիչներ Ռաֆայել Ստեփանյանը, Շահեն Օհանյանը, Մուրադ Գրիգորյանը եւ դատական նիստերի քարտուղար Յասմիկ Զալյայանը միաբերան պնդել են, որ «... Գոհար Վեզիրյանը, չենթարկվելով դատավորի կարգադրությանը՝ բոլոր տեսակի նկարահանումներն ու ծայնագրությունները դադարեցնելու վերաբերյալ, շարունակել է ցուցադրաբար ծայնագրիչով ծայնագրել դատական նիստը: Պահանջը չկատարելու համար դատավորը կարգադրել է Գ. Վեզիրյանին՝ դուրս գալ նիստերի դահլիճից: Գ. Վեզիրյանը հրաժարվել է ենթարկվել եւ վիրավորական խոսքեր Եւ ուղել դատավոր Գագիկ Ավետիսյանի հասցեին՝ անվանելով «շիզոֆրենիկ» Եւ «կամակատար», իր պահվածքով

խախտել է դատական նիստի կարգը, որի համար դատավորի կարգադրությամբ նրան հեռացրել են դահլիճից, վերցրել արգելանքի եւ հանձնել ոստիկանությանը»:

«Բացարձակ սուտ է դատավորը նիստը չծայնագրելու կարգադրություն արձակելու իրավունք չունի, եւ նման կարգադրություն նա չի էլ տվել: Ինչի՞ մասին է խոսքը. դա լուսանկարել չէ, եւ բոլոր լրագրողներն ել անարգել ծայնագրել են», - ասում է Սմբատ Այվազյանի պաշտպան Յովիկ Արսենյանը, որն այս գործում ներգրավված էր որպես Գոհար Վեզիրյանի շահերի պաշտպան:

Գոհար Վեզիրյանը հիշում է, որ ամհան այդ շոգ օրը դատարանի շենքի մոտ հավաքված բազմաթիվ մարդիկ վանկարկել են «Ազատություն քաղբանտարկյալներին» եւ նմանօրինակ արտահայտություններ: Ու որպեսզի նիստերի դահլիճում աղմուկ չլինի, փակ են եղել բոլոր պատուհանները: «Այնքան շատ մարդ կար, որ իրար սեղմակած եինք նստել: Իսկ կարգադրիչները շատ անհարմար դիրքով կանգնած եին ինձ շատ մոտ: Խնդրեցի, որ մի քիչ այն կողմ գնան՝ արդեն շունչս կտրվում էր, երկրորդ՝ նրանք փակել եին տեսադաշտս, եւ չեմ կարողանում աշխատել: Յենց այդ խոսակցության պահին դատավոր Գագիկ Ավետիսյանը մտավ դահլիճ եւ միանգամից ինձ կարգադրեց կանգնել ոտքի: Յարցրի՝ ինչո՞ւ, բա՛ հրաժարվո՞ւմ եք կատարել դատարանի պահանջը: «Այո» կամ «ոչ» ասել չեմ կարող, ստիպված պատասխանեցի հարցով՝ իսկ Դուք ո՞նց եք կարծում, - հիշում է Վեզիրյանը եւ նշում, որ անմիջապես հետեւել է դահլիճը լքելու դատավորի կարգադրությունը, - կարգադրիչներն ուզում եին մոտենալ, ասացի՝ ինձ չկպչեք, ես ինքս որևս կգամ եւ հանգիստ քայլքով դահլիճը լքել եմ»:

Գագիկ Ծամշյանի օրինակով՝ այս դեպքում եւս նախաքննական մարմինն առաջարկված մեջադրանքն ապացուցված է համարել նաեւ գործին կցված հիշյալ նիստի ծայնագրությամբ: Վկակարգադրիչների ցուցմունքներին հակառակ՝ դրանում բացակայում են «շիզոֆրենիկ» եւ «կամակատար» վիրավորական արտահայտությունները:

«Այդ բառերը նրանք ուղղակի վերցրել են այդ օրվա թերթում հրաարակված իմ հոդվածից, որտեղ դրանք ես օգտագործել եմ նախորդ օրը Գագիկ Ծամշյանի հետ կատարվածի կապակցությամբ: Իսկ կարգադրիչներին անվանել եմ «դատավորի վեցնոցներ», որովհետեւ նրանք դատավորի պահանջով հարձակվել եին Գագիկի վրա», - ասում է լրագրող Վեզիրյանը: Նրա խոսքերով՝ հենց այդ հոդվածի համար ել կարգադրիչները «կատաղած» են եղել իր վրա, եւ երբ դահլիճից դուրս է եկել, դատարանի միջանցքում սկսել են իրեն հարվածել:

«Ինձ երկու ժամ դատարանում պահեցին վանդակաճաղերի հետեւում՝ քրեականների հետ: Նոյնիսկ նրանք կարգադրիչներին



հայույս եին ինծ հետ նման դաժան ձեւով վարվելու համար»,- պատմում է Գոհար Վեզիրյանը:

Թեեւ ոստիկանությունը Գոհարին դատաբժշկի ուղեգիրը տվել է երեք օր անց, այսուամենայնիվ, փորձագետն արձանագրել է նրա մարմնի տարբեր հատվածներում առկա բռնության հետքերը: Դատաբժշկը, սակայն, իր եզրակացության մեջ չի նշել, թե վնասվածքներն ինչ աստիճանի են:

«Իսկ գործը քննող Գայանե Երիցյանը վկա-կարգադրիչների ֆիզիկական ուժ գործադրելու գործողությունները գնահատել է իրավաչափ: Նա ակնհայտ խոշտանգման մեջ հանցակազմ չի տեսել, եւ գործի այդ մասը կարճել է», - նշում է Յովիկ Արսենյանը:

Գոհար Վեզիրյանի խոսքերով՝ անկախ այն հանգամանքից, թե օրերի ինչ թվագրությամբ է իր եւ Գագիկի նկատմամբ հարուցվել քրեական գործ, դա արվել է ի պատասխան «Չորրորդ իշխանության» բողոքների: «Մեր խմբագրությունը բոլոր համապատասխան ատյաններին բողոք էր գրել դատավոր Գագիկ Ավետիսյանի՝ լրագրողներին նկատմամբ դրսեւորած վարքագծի համար: Դրա համար էլ նման քրեական գործեր սարթեցին», - ասում է նա:

Պաշտպան Յովիկ Արսենյանը բացարկ հայտնեց մեղադրող Լեւոն Զարխիքալյանին, որովհետեւ վերջինս, ինչպես Շամշյանի դեպքում, հաստատել է մի մեղադրանք, որի հիմքում դրված են միայն կարգադրիչների եւ քարտուղարի ցուցմունքներ, «այն դեպքում, եղբ դատարանի դահլիճում կային բազմաթիվ ականատես վկաներ: Փորձ չի արվել հարցարման դատավարության մասնակիցներին, գոնե մեղադրողին, ներկա լրագրողներին: Եվ սա ուղղակիորեն հաստատում է այն, որ նպատակ չի եղել վեր համեմ օրեւէտիկ ճշմարտությունը»:

Դատարանն այս միջնորդությունը մերժեց՝ «անհիմն լինելու պատճառով»:

Ինչպես Շամշյանի դեպքում, այս անգամ էլ դատարանը հիմնվեց միայն դատական կարգադրիչների ցուցմունքների վրա, որոնք պնդեցին, թե դատավոր Ավետիսյանը Գոհարին դահլիճից հեռացրել է նիստը չձայնագրելու իր կարգադրությանը չենթարկվելու համար: «Դատավորի կարգադրությանը բոլոր լրագրողները ենթարկվեցին, բայց Վեզիրյանը շարունակում էր ցուցադրաբար ձայնագրել: Դատավոր Ավետիսյանն ասաց՝ ոտքի կանգնիր, բայց Վեզիրյանը չենթարկվեց ու դատավորի հետ մտավ բանավեճի մեջ՝ ասելով՝ «դու ո՞վ ես, որ ոտքի կանգնեմ, ես արդեն մի անգամ կանգնել եմ», - պատմեց կարգադրիչ Շահեն Օհանյանը: Վկան մանրամասնեց, որ լրագրողը դատավորին անվանել է «շիզոֆրենիկ», «կամակատար» եւ «վեցնոց»:

Պաշտպան Յովիկ Արսենյանը հետաքրքրվեց, թե այդ ինչպես է, որ դատական նիստի ձայնագրման կրիչում այդ արտահայտությունները բացակայում են: «Ես չգիտեմ՝ դա ինչ տեխնոլոգիա է,

բայց կային բառեր, որ Վեզիրյանը բարձր էր ասում, որպեսզի բոլոր լսեն, բայց որոշ բաներ էր ցածր էր ասում: Գուցե դրա համար ել չի ծայնագրվել,- ասաց կարգադրիչների ստորաբաժանման պետ Ա. Փիլոսյանը եւ հավելեց,- բայց ես ու իմ տղաները լսել ենք»: Նրա հարցաքննությունից հետո պաշտպան Յովիկ Արսենյանը հրաժարվեց մյուս երկու վկա-կարգադրիչներին հարցեր ուղղելուց, քանի որ «կարգադրիչների նախաքննական ցուցմունքները ոչ միայն բառացի, այլև կետադրական նշաններով նույնական են»:

ՀԱՅԻ ՀԱՅՈՒԹ ԲԱՅԻ ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ ՀԱՅ-ՀԱՅ ՊԱՅԻ ՀԱՅՈՒԹ ՀԱՅ ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ

Մայսի 5-ի նիստում պետք է ցուցմունք տար Գոհար Վեզիրյանը: Սակայն վերջինս, օգտվելով իր իրավունքից, հրաժարվեց ոչ միայն ցուցմունք տալուց, այլև հարցերին պատասխանելուց: «Որովհետեւ մեղադրանքը շինուու է եւ արհեստածին, իսկ քրեական գործում առկա են բոլոր ապացույցները, որոնք փաստում են, որ ես որեւէ վիրավորական արտահայտություն թույլ չեմ տվել դատարանի հասցեին», - ասաց լրագրողը:

Այսուհետեւ պաշտպան Յովիկ Արսենյանը միշնորդեց, որպեսզի դատարան հրավիրվեն եւ որպես վկա հարցաքննվեն առնվազն երեք անձ՝ Յելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը, «Յայք» թերթի լրագրող Արտակ Եղիշաբերյանը եւ «Վզատություն» ռադիոկայանի թղթակից Յովիաննես Շողիկյանը: «Այս մարդիկ նախաքննության ընթացքում իբրեւ վկա հարցաքննվել են: Սակայն, չգիտես ինչու, նրանք չեն դատակուվել», - պարզաբանեց փաստաբանը:

Մեղադրողը ներկայացրեց առարկություն՝ շեշտելով, որ Նախաքննական մարմինը տվյալ անձանց տված ցուցմունքները չեն առնչվում մեղադրանքին, ապացուցողական նշանակություն չունեն, ուստի իմաստ չկա նրանց դատարանում հարցաքննել»:

Դատավոր Գագիկ Պողոսյանը հետաքրքրվեց, թե «արդյոք պաշտպանական կողմը կարո՞ղ է դատարանին հայտնել նշյալ անձանց բնակության հասցեները, որպեսզի հնարավոր լինի նրանց հրավիրել»: «Ձեր առջեւ՝ սեղանին դրված քրեական գործում, նրանց հասցեները գրված են», - հակադարձեց պաշտպանը: Այսուամենայնիվ, դատարանը միշնորդությունը մերժեց՝ «Ակատի ունենալով, որ պաշտպանական կողմը ոչ նշեց տվյալ անձանց բնակության հասցեները, ոչ էլ մասրամասնեց, թե կոնկրետ ինչ հանգամանք է պարզվելու նրանց հարցաքննությամբ»:

Մայիսի 14-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գագիկ Պողոսյանը



հրապարակեց «Չորրորդ իշխանություն» օրաթերթի լրագրող Գոհար Վեզիրյանի դատավճիռը: Նա մեղավոր ճանաչվեց դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու մեջ եւ դատապարտվեց նվազագույն աշխատավարձի 350-հազարապատիկի չափով (350 հազար դրամ):

Պաշտպան Յովիկ Արսենյանը, մատնանշելով հենց դատարանում հետազոտված ապացույցները, հայտարարեց, թե Գոհար Վեզիրյանի գործողություններում հանցակազմ գոյություն չունի եւ չի եղել ի սկզբանե: Նա միջնորդեց իր պաշտպանյալի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը, կարճել քրեական գործը եւ արձակել արդարացման դատավճիռ:

Գոհար Վեզիրյանը պաշտպանական ճառն սկսեց անցյալ տարվա օգոստոսի 6-ին «Չորրորդ իշխանություն» օրաթերթում տպագրված իր հոդվածի ընթերցմամբ: «Երեկ Երեւանի Կենտրոն եւ Նորք - Մարաշ ընդհանուր իրավասության դատարանում նշանակված եր «Հանրապետություն» կուսակցության անդամ Միքայել Ավագյանի դատավարությունը, որն այդպես էլ տեղի չունեցավ, քանի որ դատավոր Գագիկ Ավետիսյանն իր սադրիչ գործողություններով տապալեց դատական նիստոց: Սույն դատավարության առաջին իսկ նիստին անդրադառնալիս մենք արձանագրել ենք, որ դատավոր Գագիկ Ավետիսյանը, ով եղել է հոկտեմբերի 27-ի գործով պետական մեղադրոց, վերջին շրջանում մշտական գտնվում է հոգեբան անհավասարակշիռ վիճակում եւ անընդհատ փորձում է նիստերի դահլիճում արհեստական լարվածության մեջ պահել հավաքվածներին...»:

Դատավորն ընդմիշեց լրագրողին եւ հայտնեց, թե «Դատավարության կողմերն իրավունք ունեն հիմնվել միայն այն ապացույցների վրա, որոնք հետազոտվել են դատաքննության ընթացքում»: Իսկ Վեզիրյանի ընթերցած հոդվածը գործի նյութերում ներառված չէ:

Լրագրողը միջնորդեց վերսկսել դատաքննությունը եւ այդ հրապառակումը դիտարկել իրուն ներկայացված լրացրոցից ապացուց: «Ես այդ հոդվածում գրել եմ, որ դատավոր Գագիկ Ավետիսյանը շիզոֆրենիկ է եւ ինսորե եմ, որպեսզի հոգեբուժարանից տեղեկանք ներկայացնի համապատասխան ատյաններին: Միաժամանակ գրել եմ, որ դատական կարգադրիչներից պետք չէ նեղանալ, որովհետու իրենք վարժեցված շներ են եւ վեցնոցներ», - ասաց Գոհար Վեզիրյանը:

Նա կատարանում իր հետ տեղի ունեցած միջադեպն ուղղակիորեն կապեց նշյալ հոդվածի հետ, քանի որ «Վկաների կեղծ ցուցմունքների մեջբերումներն արված են այս հրապարակումից, ինչն ապացուցվել ե դատարանի դահլիճում սղագրության վերծանվամբ»: «Որովհետեւ ոչ «շիզոֆրենիկ», ոչ «վեցնոց» բառերը ձայնագրության մեջ չկան: Իսկ ընմիջը, երբ այդ մարդկանց ցուցմունք է թելադրել, թերթը դրել է դեմսերն ու ասել՝ արտագրեք (որովհետեւ բառացի արտագրված է)», - ասաց նա:

Դատարանը լրագրողի միջնորդությունը մերժեց, քանի որ «այն պատճառաբանված եւ հիմնավորված չէ»: Գոհար Վեզիրյանը հայտարարեց, թե հայկական արդարադատությունից վաղուց արդեն սպասելիքներ չունի: Պարզապես նրան անհրաժեշտ է Հայաստանում անցնել դատական բոլոր ատյանները, եւ գործը հասցնել Եվրադատարան:

Վեզիրյանին տուգանելու հետ միաժամանակ դատարանը որոշել է նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ «ստորագրություն չհեռանալու մասին» որոշումը, թողնել անփոփոխ, մինչեւ դատավճիռը կստանա օրինական ուժ:

Պաշտպանական կողմը պատրաստվում էր ներկայացնել Վերաքննիչ բողոք, սակայն հուլիսի 7-ին Գոհար Վեզիրյանը, առաջնորդվելով Ազգային ժողովի հունիսի 19-ի «Համաներում հայտարելու մասին» որոշմամբ, համաձայնեց համաներման միջոցով ազատվել քրեական հետապնդումից: «Ես ինձ մեղավոր չեմ ճանաչել, բայց գրել եմ, որ համաձայն եմ ազատվել հետապնդումից համաներման միջոցով», - մեզ հետ զրոյցում ասաց լրագրողը:



Արման Պարի յան

Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ
Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ
Ո Ռ Ո Ռ «Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ Ո Ռ»

Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանը 2009 թ. հուլիսի 7-ին հանցագործության մասին հաղորդագրություն է ուղարկել ոստիկանություն «Ազատամտություն» թերթում տպագրված տեղեկությունների եւ կոլաժի կապակցությամբ՝ վիրավորանքի եւ գրապարտության համար:

Դիշեցնենք, որ Ե Վ-ում Զարուհի Փոստանջյանի ակտիվ գործունեությունից հետո իշխանամետ լրատվամիջոցները հեղեղված են պատգամավորին վիրավորող տեղեկություններով, սակայն վերջինս ոստիկանություն է դիմել դեռևս միայն «Ազատամտություն» թերթի կապակցությամբ, որը նաեւ հրապարակել էր մի կույտ՝ պատգամավորի դեմքը հարմարեցնելով պոռնիկի մարմնին: «Երեխաներս նույնպես տեսել են այդ նկարը, եւ թերթը պետք է պատասխանատվության ենթարկվի», - ասում է Զարուհի Փոստանջյանը:

«Ազատամտություն» թերթի գլխավոր խմբագիր Արտյոմ աչատյանի խոսքով՝ իրենց հրապարակած տեղեկություններում գրպարտություն չկա, իսկ վիրավորանք՝ հնարավոր է: «Մարդիկ կան, որոնց պետք է վիրավորել», - ասաց Արտյոմ աչատյանը:

Կենտրոնի քննչական բաժինը հուլիսի 28-ին քրեական գործ է հարուցել ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի տված հաղորդագրության հիման վրա քրեական օրենսգրքի 136 հոդվածի 1-ին մասով՝ վիրավորանք:

Քրեական օրենսգրքի 136 հոդվածով վիրավորանքը պատժվում է տողանքով նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսինարյուրապատիկի չափով (100.000-400.000 դրամ):

Սակայն ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոնական քննչական բաժնում դեկտեմբերի 21-ին կարճվել է պատգամավոր Զարուհի Փոստանջյանի մասին «Ազատամտություն» օրաթերթում տպագրված վիրավորական հոդվածի

ու կոլաժային նկարի առթիվ հարուցված քրեական գործը: Ջրեական գործը կարճելու եւ քրեական հետապնդում չիրականացնելու մասին ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի քննչական վարչության քննիչ Ա. Մխիթարյանը կասկածի տակ չի դրել հանգամանքը, որ Վերը Նշված հրապարակումներով անպարկեշտ ձեռով ստորագվել է պատգամավորի պատիվն ու արժանապատվությունը, սակայն իիմք ընդունելով հեղինակների հայտարարություններն այս մասին, որ իրենք չեն ճանաչում Զարուիի Փոստանշյանին, նրա հետ որեւէ թշնամանք չեն ուսեցել եւ դիտավորություն չեն ուսեցել վիրավորելու նրա արժանապատվությունը, գտել է, որ այդ անձանց գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 136 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները եւ որոշել է կարճել գործը:

Պատգամավոր Զարուիի Փոստանշյանը գործը կարճելու առթիվ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին: «Գտնում եմ, որ Նշված որոշումը՝ Վերևագրից սկսած եւ վերջացրած դրանում տեղ գտած իրավական վերլուծություններով ու գևահատականներով, աչքի չի ըսկում գրագիտությամբ, իիմնավորվածությամբ եւ օրինականությամբ: Ընսիչը այս անձանց ցուցմունքները չի համարել նրանց իսկ հրապարակած նյութերի բովանդակության հետ եւ հաշվի չի առել այն հանգամանքը, որ հենց այդ նյութերի բովանդակությունից ուղղակիորեն բխում է ինձ վիրավորանք հասցնելու ուղղակի դիտավորությունը: Բացի այդ, քննիչը հաշվի չի առել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 136 հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այսպես էլ՝ անուղղակի դիտավորությամբ», - իր դիմումի մեջ ասում է պատգամավորը՝ պահանջելով վերացնել գործը կարճելու մասին որոշումը եւ քրեական պատասխանատվության ենթարկել մեղավորներին:



70

■ ■ ■

Քրիստին Աղալարյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բոկտեմբերի 2-ին Վերաբնիքը նիշ քաղաքացիական դատարանը որոշեց պարտավորեցնել «Հայկական ժամանակ» օրաթերթին՝ հերքել Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդուն՝ Լեւոն Զոչարյանին վերաբերող տեղեկատվությունը եւ հատուցել նրա իրավունքների վերականգնման համար վճարած ծախսերը:

2009 թ. փետրվարի 6-ին օրաթերթի առաջին էջում տպագրվել էր տեղեկություն, թե «Ամանորից օրեր առաջ Դուքայում տեղի ունի կատարած կողմից հարբած վիճակում ձերբակալվել է Ռոբերտ Զոչարյանի կրտսեր որդին՝ Լեւոն Զոչարյանը։ Ըստ հավաստի աղբյուրների՝ կրտսեր Զոչարյանի հետ ձերբակալվել են նաև Մոսկվայում հայտնի դատախազ Գենայի որդին եւ եւս երկու հոգի։ Կրտսեր Զոչարյանի համար եղել են բազմաթիվ միջնորդություններ, սակայն տեղի իրավապահները նրան բաց են թողել չորս օր



Լուսանկարը՝ Գագիկ Ճամշյանի

պահելուց հետո միայն, այն էլ՝ զանազան փաստաթղթերի պահանջով։ Ըստ մեր աղբյուրների՝ Լեռն Որբերտի Թոշարյանը ծերպակալվել է հասարակական վայրում անկարգություններ անելու համար։ Նույն օրն իսկ Որբերտ Թոշարյանի գրասենյակի դեկավար Վիկտոր Սողոմոնյանը հերքել է տպագրված տեղեկությունը՝ նշելով, որ «Վերջին անգամ Լեռն Թոշարյանը Դուբայում եղել է 2007 թվականի դեկտեմբերին»։

Մարտի 25-ին Լեռն Թոշարյանը դիմել էր դատարան՝ «Յայկական ժամանակ» օրաթերթից պահանջելով հերքել պատիվն ու արժանապատվությունն արտավորող տեղեկությունները Եւ փոխհատուցել նյութական ու բարոյական վնասը։ Լեռն Թոշարյանի շահերը ներկայացնող Արփինե Մելիքբեկյանի հիմնավորմամբ՝ «ՅԺ»-ի նյութը անհիմն է Եւ Վերացական, չի պարունակում որեւէ փաստ հաստատող տեղեկություն, նշված չեն տեղեկության սկզբնադրյունները, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ այն ստահող, ասելուսեների վրա հենված, չստուգված, ընթերցողների մոտ սեւսացիա ստեղծելու Եւ շահույթ ստանալու նպատակով հրատարակված տեղեկություն։ Արփինե Մելիքբեկյանը դատարանին է ներկայացրել Լեռն Թոշարյանի անձնագրի պատճենը Եւ նրա դիվանագիտական անձնագիրը, որոնցում նշում չկա, որ նա «Յայկական ժամանակի» նշած ժամկետում եղել է ԱՄԷ-ում կամ հատել է այդ երկրի սահմանը։ Փաստաբանը դատարանին է ներկայացրել նաև իրենց կողմից Արաբական Միացյալ Եմիրությունների արտգործնախարարություն արված հարցման պատասխանը։ Յամածայն դրա՝ ԱՄԷ-ի համապատասխան մարմինները ստուգել են իրենց մոտ եղած տվյալները Եւ պարզել, որ Լեռն Թոշարյանի նկատմամբ արգելանք կամ իրավապահների կողմից հետապնդում չի արձանագրվել։

Նման տեղեկատվության տարածումը, ըստ հայցվոր կողմի, Լեռն Թոշարյանին ֆինանսական վնաս է պատճառել։ Յայցաղիմումում դա հիմնավորված է նրանով, որ «Յայկական ժամանակ»-ի այդ օրվա համարի տպաքանակը եղել է 8 000 օրինակ, յուրաքանչյուրը՝ 100 ՀՀ դրամ։ Այսինքն՝ «ՅԺ»-ն այդ համարի տարածման դիմաց ստացել է 80 000 ՀՀ դրամի եկամուտ (հայցադիմումում հաշվարկը սխալ էր կատարված, 8 000 օրինակի «շահույթը» 100 դրամ արժողությամբ կկազմի 800 000 դրամ-ին).։ Բացի այդ, հայցադիմումում նշվում է, որ այս տեղեկությունը հիմք է հանդիսացել հայցվորի մասին կեհծ տեղեկությունների տարածման համար նաեւ այլ զանգվածային լրատվության միջոցներով, ինչի շնորհիվ թերթը եկամուտ է ստացել։ Մեկ զանգվածային լրատվության միջոցի կողմից մեկ այլ ՉԼՍ-ին մեկ լուրի տրամադրման միջին արժեքը 10 000 դրամ գնահատելով՝ Լեռն Թոշարյանի պաշտպանները, փաստորեն, հաշվի են առել նաեւ այն, որ օրաթերթին հղում են



կատարել թվով 6 («Day.az», «tert.am», «Armtown.com», «Arminfo.info», «News.ru», «Trend.az», «Newsmegainfo.ru») եւ ավելի 2LU-ներ եւ հաշվարկել, որ վերոնշյալ տեղեկությունների տրամադրման համար օրաթերթը ստացել է միջինը 60 000 դրամ: Ըստ հայցվոր կողմի՝ այս նյութի հիման վրա մյուս 2LU-ները եւս ստացել են միջինը 80 000-ական դրամ եկամուտ եւ Լ. Զոչարյանին պատճառել 620.000 դրամի վնաս: Ըստ այդմ՝ Լեւոն Զոչարյանին հասցել է ընդիանուր առմամբ 3.620.000 դրամի վնաս, որից իրավունքների պաշտպանության ծախսերը գնահատված են 3 մլն ՀՀ դրամ: Քանի որ այս տեղեկությունները տարածվել են և անուն ու անձնագիրը հայտնի է այլ մարդու համար, ինչն օգտագործվել է բացառապես քաղաքական նպատակներով, ըստ հայցվորի՝ Լ. Զոչարյանին հասցվել է և անուն ու անձնագիրը հայտնի է այլ մարդու համար:

««Հայկական ժամանակ» օրաթերթի կողմից տարածած անհիմն եւ չստուգված տեղեկությունները հիմք են դարձել օգտագործել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոչարյանի որդու՝ Լեւոն Զոչարյանի անունը, Հայաստանի Հանրապետության վարկանիշը զցելու, վարկաբեկելու եւ միջազգային հանրության առաջ հայերին որպես «խուլիզան», «հանցագործ» ներկայացնելու եւ համանման որակներով ախտակապորելու համար, ինչն, անխոս, դիպուտ է ՀՀ հանրային շահերին եւս», - առաջին ատյան ուղարկված հայցադիմումում հիմնավորել է հայցվոր կողմը եւ գտել, որ Լեւոն Զոչարյանին հասցել է և անուն ու անձնագիրը հայտնի է այլ մարդու համար:

«Հայցվորը հայցադիմումին կից ներկայացրել է իր՝ ՀՀ քաղաքացու անձնագրի լուսապատճենը, որի գննությունից պարզ է դառնում, որ անձնագրի՝ օտարերկրյա պետությունների համար վավերականության ժամկետը լրացել է 2007 թ. փետրվարի 5-ին: Յետեւարար, պետք է ենթադրել, որ հայցվորը 2007 թ. փետրվարի 5-ից մինչ օրս ՀՀ տարածքը չի լրել: Մինչդեռ երկրորդ նախագահի գրասենյակի դեկանար Վիկտոր Սողոմոնյանը հայտարարել է ինդիքտ առարկա լուրի կապակցությամբ, որ հայցվորը վերջին անգամ Դուբայում եղել է 2007 թ. դեկտեմբերին: Այսինքն՝ ըստ Սողոմոնյանի, հայցվորն իր անձնագրի վավերականության ժամկետը լրանալուց առևվազն 10 ամսի անց եղել է Դուբայում», - հիմնավորում է օրաթերթի շահերը ներկայացնող փաստաբան Տիգրան Աթանեսյանը: Պատասխանող կողմի ենթադրությամբ՝ հայցվորն ունի առևվազն 2 դիվանագիտական անձնագիր, քանզի Լեւոն Զոչարյանը 2008 թվականի գարնանը ներկա է եղել Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում Եվրատեսիլ մրցույթին երգչուիկ Սիրուշոյի ելույթին: Դատարանում Տիգրան Աթանեսյանը միջնորդել էր և անձնագիրը անվտանգության ծառայությունից պահանջել տեղեկաբառ այս մասին, թե Լեւոն Զոչարյանը 2007-ի հունվարի 1-ից մինչեւ օրս քանի անգամ եւ երբ է լրել Հայաստանը: Փաստաբանը դի-

մել է ԱԱԾ, սակայն նրան մերժել են՝ ասելով, որ այդ տեղեկատվությունը Լեռու Թոչարյանի անձնական եւ ընտանեկան կյանքին է վերաբերում: Դատարանը եւս մերժել է փաստաբանի այս միջնորդությունը, ինչպես եւ մյուս միջնորդությունը՝ Երկու ամիս ժամանակ տրամադրել Վրդարադատության նախարարության միջոցով ԱՄԷ-ի հրավապահ մարմիններին իրենց կատարած հարցման պատասխանը ստանալու համար:

Յունիսի 5-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սելզումյանը որոշեց Լեռու Թոչարյանի հայցը բավարարել մասնակի: Դատարանը վճռեց «Հայկական ժամանակ» օրաթերթին պարտավորեցնել հերթել Լեռու Թոչարյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները, հօգուտ նրա բռնագանձել 3 մլն 620 հազար դրամ՝ որպես արատավորող տեղեկությունների տարածմամբ վերջինիս պատճառված վնասի հատուցման գումար, իսկ բարոյական վնասի՝ 12 մլն 500 հազար դրամի բռնագանձման մասով հայցը մերժեց:

Յունիսի 4-ին «Հայկական ժամանակ» օրաթերթը՝ ի դեմս «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի, Վերաքննիչ բողոք էր ներկայացրել: Յոկտեմբերի 2-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, նախագահությամբ Տարոն Նազարյանի, օրաթերթի բողոքը բավարարեց մասնակիորեն. Լեռու Թոչարյանի հայցը օրաթերթից 620.000 ՀՀ դրամ որպես պատճառված նյութական վնաս բռնագանձելու պահանջի մասով՝ մերժեց, իսկ մնացած մասով վճիրը թողեց անփոփոխ: Ըսնելով 620.000 դրամի պահանջը՝ Վերաքննիչ դատարանը նշում է, որ այս առումով «Հայկական ժամանակ»-ի ներկայացուցչի պնդումները հիմնավոր են, եւ Լեռու Թոչարյանը որպես բաց թողնված օգուտի գումար որեւէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ թերթը իրականում ստացել է նշված եկամուտը, ինչպես նաեւ չի հիմնավորել, թե որն է իր կողմից բաց թողնված օգուտը:

Ինչ վերաբերում է 3 մլն դրամին, որպես հայցվորի հրավիւնքների պաշտպանության ուղղված ծախս, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանը իրավացիորեն է բավարել նշված պահանջը: Ընդ որում, ընդհանուր իրավասության դատարանում Լեռու Թոչարյանին մատուցած ծառայությունների մասով որեւէ փաստաթուղթ չէր ներկայացվել, եւ միայն Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում Լեռու Թոչարյանի շահերի պաշտպանը ներկայացրել է այս տարվա հուլիսի 8-ին կազմված հանձնման-ընդունման ակտ, որից պարզ է դահնում, որ միայն առաջին ատյանի դատարանում մատուցվել է 2.500.000 ՀՀ դրամի ծառայություն:

«Նշված ապացույցը հայցվորը հնարավորություն չի ունեցել ներկայացնել դատարանին գործի քննության ընթացքում, քանի որ այս կազմվել է 2009 թ. հուլիսի 8-ին, մինչեւ գործի քննությունն



ավարտվել է 2009 թ. հունիսի 5-ին: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանում թեր Ներկայացվել է ապացուց, որը Ներկայացված չի եղել առաջին ատյանի դատարանում, սակայն Միայն այս հիմքով դատական ակտը Ենթակա չէ բեկանման, քանի որ թեր առանց բավարար ապացուցների՝ բոլոր դեպքերում դատարանի կողմից ճիշտ է լուծվել 3 մլն դրամի պահանջը, իսկ դատական ակտը ծեւական նկատառումներով Ենթակա չէ բեկանման՝ հաշվի առնելով արդարադատության արդյունավետության շահերը եւ գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքը»,- հիմնավորում է Վերաքննիչի որոշումը:

«3 մլն դրամը ակնհայտ անհիմ գումար է, ինչս եմ փաստաբան, գիտեմ, որ այդ որակի եւ ծավալի աշխատանքի համար շուկայում այդքան վարձատրություն չկա: Ի վերջո, դատարանը սա նախադեպ է դարձնում: Եթե այդ փոքրիկ ծավալի աշխատանքը, որն արել են Լեռն Թոչարյանի փաստաբանները, այդքան է գնահատվում, ես մտածում եմ, որ պիտի միլիոնատեր լինեի, բայց չեմ հասկանում, թե ինչու չեմ դարձել: Մոտակա ժամանակներս փաստաբաններս կորոշենք դա որպես նախադեպ օգտագործել», - ասաց փաստաբան Տիգրան Աթանեսյանը:

Միևնույն Վերաքննիչ դատարանը փաստել է, որ 3 մլն դրամ գումարի չափով գնահատված ծախսները պատասխանողից որպես փոխհատուցում քննագանձելու պահանջը բխում է հայցվորի եւ վերջինիս Ներկայացուցիչների միջեւ առկա ծառայությունների մատուցման իրավահարաբերություննից, տվյալ քննագավառում գործող գործարար շրջանառության սովորութենքից, Ներկայացուցիչներին վճարվող գումարի խելամտության սկզբունքից, գործի առանձնահատկությունից:

«Յարկ է նշել, որ գործարար շրջանառության սովորության պետք է դիտարկել ոչ թե առհասարակ ՀՀ-ում փաստաբանին վճարվող գումարի չափով, այլ նմանատիպ առանձնահատկություններ ունեցող գործերով ձեւավորված վարձատրության չափը հաշվի առնելով», - հիմնավորվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ:

Փաստաբան Տիգրան Աթանեսյանը «Յետքին» վստահեցրեց, որ անպայման Վճռաբեկ բողոք են Ներկայացնելու: «Յերբման մասով մենք գրկել ենք ապացուցներ Ներկայացնելու բոլոր հնարավորություններից, հետեւաբար հերքման պահանջը բավարպել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ: Խախտումներն այսքան շատ են, որ Վճռաբեկ դիմելու շատ հիմքեր ունենք», - ասաց փաստաբանը:

Վճռաբեկ բողոքը նա Ներկայացրել է հոկտեմբերի 27-ին, մեկամսյա ժամկետը լրացել է, սակայն գործը վարույթ ընդունելու մասին պաշտպանական կողմը մինչ օրս որոշում կամ մերժում չի ստացել:

Քիչ առաջ Աղավարյան

«Գինդ» պատրաստութեան
«Պատրաստութեան պատրաստութեան».
Պատրաստութեան պատրաստութեան, պատրաստութեան

Ոյեմբերի 10-ից «Չորրորդ իշխանություն» օրաթերթն սկսել է տպագրվել «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ի հրատարակչությամբ, բայց արդեն այլ անվամբ՝ «Չորրորդ ինքնիշխանություն»:

«Գինդ» տպարան ՍՊԸ-ն այս տարվա օգոստոսի 12-ին դիմել է դատարան «Չորրորդ իշխանություն» օրաթերթի պատվիրատու «Օգոստոս» գործակալություն ՍՊԸ-ի՝ պայմանագիրը լուծելու եւ գումարի բռնագանձման պահանջով։ Դատարանի նույն օրվա որոշմամբ արգելանք է դրվել պատասխանող «Օգոստոս» գործակալություն ՍՊԸ-ին պատկանող դրամական միջոցների եւ գույքի վրա, ինչպես նաև ընկերությանն արգելվել է օրաթերթն այլ տպարանում տպագրել։

«Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ին եւս դատարանը ճանաչել է որպես «Օգոստոսի» հրավահաջորդ՝ Երկրորդ պատասխանող, եւ Ներգրավել գործում։ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր հրավասության դատարանի նոյեմբերի 5-ի որոշմամբ արգելվել է «Չորրորդ իշխանություն» օրաթերթի տպագրությունը ինչպես «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ի, այնպես ել ցանկացած այլ ընկերության կողմից, որեւէ այլ տպարանում։ Հայցվորի Ներկայացուցիչ Տիգրան Պողոսյանը դատարանին հայտնեց, որ «Գինդ» տպարանը բազմից՝ թե բանավոր, թե գրավոր դիմել է պատասխանող «Օգոստոս» գործակալությանը պարտքի մարման համար, եւ վերջինս խոստացել է, որ կվճարի, սակայն չի վճարել։

«Գինդ» տպարանի եւ «Օգոստոս» գործակալության միջեւ կնքված պայմանագրերի համաձայն՝ մինչ 2008 թ. ավարտը թերթը (ի դեմս «Օգոստոս» գործակալության) տպարանին պարտք է մնացել 3 մլն դրամ։ Դատարանն ընթերցեց նաև «Օգոստոս» գործակալության տնօրենի այս տարվա հունվարի գրությունը, որով նա պար-



տավորվել էր մինչեւ 2009 թ. փետրվարի 1-ը վճարել 3 մլն դրամ գումար, սակայն չի վճարել: Գումարվել են նաեւ 2009 թ. պարտքերը, եւ «Օգոստոս» գործակալություն ՍՊԸ-ի ընդհանուր պարտքը «Գինդ» տպարանին, 2008 թ. եւ 2009 թ. կնքված պայմանագրերի համաձայն, կազմել է 4 մլն դրամից ավելի մայր գումար եւ մոտ 1.3 մլն դրամ տույժ՝ ընդամենը մոտ 5.5 մլն դրամ:

«Օգոստոս» գործակալությունը, առանց որեւէ զգուշացման, 2009 թ. հունիսի 20-ից դադարեցրել է թերթի տպագրությունը «Գինդ» տպարանում, եւ «Չորրորդ իշխանությունը» սկսել է տպագրվել այլ տպարանում: Թերթի գլխավոր խմբագիր Շողեր Մաթեւսյանը «Յետքին» տեղեկացրեց, որ իրենք այժմ թերթը տպագրում են իրենց տպարանում: «Յամաձայն 2009 թ. հունվարի 13-ին կնքված տպագրական ծառայության մատուցման մասին պայմանագրի 4-րդ կետի՝ մինչ պարտավորությունների կատարման ավարտը պատվիրատուն իրավունք չունի սույն պարբերականը, ինչպես նաեւ սույն պարբերականի անվան փոփոխությամբ այլ պարբերական տպագրության տալու ուրիշ տպարանում», - դատարանում հիմնավորեց Տիգրան Պողոսյանը:

«Օգոստոս» գործակալությունը արդեն վճարել է մոտ 2.8 մլն դրամ, եւ ներկայումս պարտքը կազմում է շուրջ 2.6 մլն դրամ: «Չի»-ի ներկայացուցիչները, մինչդեռ, պնդում են, որ իրենք որեւէ պատր կամ պատավորություն չունեն տպարանի նկատմամբ եւ ամբողջությամբ վճարել են տպարանի ծառայությունների գումարը: «Օգոստոս» գործակալության ներկայացուցիչ Եղիար Յովհաննիսյանի հիմնավորմամբ՝ «Գինդ» տպարանը չի ներկայացրել որեւէ փաստարկ, թե ինչի հիման վրա է առաջացել «Օգոստոս» գործակալության վճարման պարտավորությունը: «Յայցվորի կողմից ներկայացվել են հաշիվ-ապրանքագրեր, եւ այդ հաշիվ-ապրանքագրերի մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա ընդհանուր գումարը կազել է 30 625 350 դրամ՝ 02.12.2008 թ. մինչեւ 18.06.2009 թ.:

Յայցվորի կողմից ներկայացվել են նաեւ մեմորիալ օրդերներ, թե «Օգոստոս» գործակալությունը ինչ վճարումներ է կատարել, եւ ներկայացված մեմորիալ օրդերներով կատարված վճարումները գումարելով՝ ստացվում է, որ հայցվորներին կատարվել է ընդամենը մոտ 2.9 մլն դրամի վճարում, ներառյալ 2009 թ. օգոստոսի 6-ին վճարված շուրջ 2.9 մլն դրամ գումարը, այսինքն՝ ներկայացված ապացույցներով հաստատվում է, որ «Օգոստոս» գործակալությունը վճարել է դեռ ավելին՝ մոտ 2 մլն դրամի չափով», - ասում է Եղիար Յովհաննիսյանը:

«Կողմանկան անձանց Մ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Յովհիկ Արսենյանը հայցն անհիմն է համարում եւ կարծում, որ հարցը ամբողջությամբ քաղաքական եւ ոչ թե իրավական հարթության վրա է.

«Հայցվորի կողմից ներկայացրած թվով 131 հաշիվ-ապրանքագործի ուղղակի թվաբանական գումարման հաշվարկից ակնհայտ է դառնում, որ «Օգոստոս» գործակալությունը բարեխնդորեն կատարել է իր պայմանագրային պարտավորությունները, դեռ ավելին՝ վճարել է 2.2 մլն դրամին հասնող ավել գումար»:

Հովհկ Արտելյանը դատարանին միջնորդեց հայցն ամբողջությամբ մերժել, ինչպես նաև վերականգնել «Կողմանակի անձանց Մ» ՍՊ ընկերության կենսագործունեությունը, քանի որ վերջինիս հետ կապված որեւէ խնդիր գոյություն չունի: Դատարանը միջնորդության լուծումը հետաձգել էր մինչեւ դատական վերջնական ակտի կայացումը:

Դատավոր Գագիկ Խանդանյանը համարեց, որ հայցը պետք է բավարարել մասնակի: Դատարանը գտավ, որ տվյալ դեպքում պատասխանող «Օգոստոս» գործակալություն ՍՊԸ-ի կողմից պայմանագրերի համապատասխան կետով տպագրական ծառայությունների մատուցման դիմաց ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետեւանքով, որը հիմք է պայմանագիրը լուծելու, 2008 թ. եւ 2009 թ. ընթացքում առաջացել է մոտ 2.6 մլն դրամ գումարի պարտը՝ հաշվարկված տույժերի հետ միասին, որը ենթակա է բռնագանձման պատասխանող «Օգոստոս» գործակալություն ՍՊԸ-ից հօգուտ տպարանի: 21 հազար դրամ գումարի բռնագանձման մասով հայցը անհիմ համարվեց եւ մերժվեց:

Ինչ վերաբերում է «Օգոստոս» գործակալության ներկայացուցիչների այն պնդմանը, որ ընկերությունը «Գինը» տպարանին որեւէ գումար պարտը չէ եւ դեռ ավելին՝ 2.2 մլն դրամ գումար է ավել վճարել, ապա դատարանը դա անհիմ է համարել. «Պատասխանողի կողմից որեւէ ապացույց դատարանին չներկայացվեց, որ «Գինը» տպարան ՍՊ ընկերությունը 2 200 000 դրամ գումար է պարտը «Օգոստոս» գործակալություն ՍՊ ընկերությանը: Դատարանը ցանկանում է փաստել նաեւ, որ հայցվոր ու պատասխանող ընկերությունները տարիներ շարունակ աշխատել են հաշիվ-ապրանքագրերով, փոխանցումները եւ հաշվարկները կատարվել են այդ հաշիվ-ապրանքագրերի հիման վրա, եւ երբեք պատասխանողը այդ փաստաթղթի օրինականությունը չի վիճարկել եւ որեւէ առարկություն չի ներկայացրել»:

Ընսարկելով պատասխանողների ներկայացուցիչ Հովհկ Արտելյանի միջնորդություն՝ «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ՝ դատարանը համարել է, որ այն անհիմ է, քանի որ կողմերի միջեւ կնքված պայմանագրերի հիման վրա դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելուց եւ «Օգոստոս» գործակալություն ՍՊԸ-ին «Չորրորդ իշխա-



78



Նություն» օրաթերթի տպագրությունը արգելելուց հետո, անտեսելով դատարանի որոշումը, այդ պարտավորությունը ստանձնել էր «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ն, որի արդյունքում դատարանի որոշումը, ըստ Էռլյան, չէր կատարվել:

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թերթի տպագրությունն արգելելու որոշումները դատարանը թողեց անփոփոխ մինչեւ վճռի կատարումը, այսինքն՝ մինչեւ գումարի վճարումը:

Օրաթերթի գլխավոր խմբագիր Շողեր Մաթեւսյանը վստահեցրեց, որ իրենց հաջորդ քայլը լինելու է վերաբնիշ ատյանում վճիռը բողոքակելը, բացասական արդյունքի դեպքում՝ վճռաբեկ դատարան, այսուհետեւ՝ Եվրադատարան դիմելը: «Ես պնդում եմ, որ սա իշխանությունների կողմից հշեցված վճիռ է, որը դատավոր ընդամենը հրապարակեց», - համզված է Շողեր Մաթեւսյանը:

Մեր հարցին, թե եթե ԴԱՀԿ-ն պարտադրի, ինչպե՞ս են, ի վերջո, վճարելու պարտքը, Շողեր Մաթեւսյանը հարցով պատասխանեց. «Որտեղի՞ց վճարեմ»:

«Վյդ նույլ թերթը ի վիճակի է գումար մուծել եւ տպագրվել այլ տպարանում, բայց հրաժարվում է իմ փողերը տալուց», - ասում է «Գինդ» տպարանի տնօրեն Կարեն Ավետյանը:

«Գինդ» ՍՊԸ-ի մյուս ներկայացուցիչը՝ Պողոս Թերզյանը, բացարեց «Չի»-ն փակելու քաղաքական դրդապատճառները: «Թող տան մեր գումարը, օրը երեք անգամ տպվեն, ո՞վ է բան ասում», - ասաց Պողոս Թերզյանը:

Նոյեմբերի 17-ին «Չորրորդ ինքնիշխանություն» թերթը ստացել է ԴԱՀԿ մեկ այլ գործոքում, որով հետախուզություն է հայտարարվել «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մաթեւսյանի նկատմամբ: ««Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ն եւ հրատարակվող թերթը որեւէ այլ տպարանի, այդ թվում՝ «Գինդի» հետ որեւէ վեճ կամ պարտը չունեն: Ըստ այդմ՝ անհասկանալի է, թե ինչպես է Միհրան Պողոսյանը «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մաթեւսյանին հռչակել «պարտապան» ու նրա նկատմամբ հետախուզում հայտարարել: Եվ սա այն դեպքում, երբ չկա դատարանի որոշում, թե պետք է արգելել «Կողմանակի անձանց Մ» ՍՊԸ-ին հրատարակել «Չորրորդ ինքնիշխանություն» թերթը», - նոյեմբերի 18-ի համարում արձագանքել է «Չի»-ն:

«Գինդ» տպարանի տնօրեն Կարեն Ավետյանը «Չի»-ի բարձրացրած աղմակը շոռու է համարում, որի նպատակն է՝ ավելացնել թերթի ընթերցողների քանակը. «Եթե մարդն ունի իր կողմից ստորագրված փաստաթղթեր, որ ինքն ինձ այսքան փող է պարտք, ինչի՞ հիման վրա է հիմա այդ մարդը հերքում այդ փաստաթղթերը: Այս տպարանը 15 տարի ծառայել է թերթ տպագրելուն, «Չի»-ն ծնվել է այստեղ, եւ խմբագիրը փորձեց քցել «Գինդ» տպարանին:

Եթե «Զի»-ն 12 տարի է տպավում է, եղ ո՞ս մի անգամ չեղավ քաղաքական պատվեր, երբ որ ավելի թեժ պահեր են եղել մեր հանրապետությունում։ Բերեին փողերը տային։ Եթե «Գիսդը» դրանից հետո ել շարունակեր չտպագրել թերթը, նոր ասեին՝ քաղաքական պատվեր է։ Օրինակ՝ «Դայը», «Դրապարակ», «Տարեգիր», «Դայկական ժամանակ»՝ ինչո՞ւ ես սրանց դատի չեմ տվել, ինչո՞ւ ոչ Մեզ չի գրում դրա մասին»,- հարցնում է տպարանի տնօրենը։

Տնօրենի մեկնաբանմամբ՝ թերթը հանելով «Օգոստոս» գործակալությունից՝ խմբագիրը սկսել է թերթը տանել սնանկացման, այսինքն՝ դատարկել է հաշվվերը, գրասենյակը, որպեսզի չվճարի պարտքերը։ «Ինքը շատ լավ գիտեր, որ դատարանը որոշում է կայացնելու, որ ինձ այդ փողը վերադարձնեն։ Թերթը հանեց եւ տարավ ու սկսեց տպագրվել մի նոր ՍՊԸ-ով։ Դրա համար դատարանը իմ պահանջով ճանաչեց, որ նոր ՍՊԸ-ն իրավահաջորդ է «Օգոստոսի»։ Այսինքն՝ բոլոր պարտքերը, որ ուներ սախկին ՍՊԸ-ն, նոր ՍՊԸ-ն պետք է ինձ տա»,- ասում է տնօրենը։

Կարեն Ավետյանը համոզված է, որ դատարանի այս վճիռը ինչքան ել բողոքարկվի, միեւնույն է բոլոր ակտերը իրենց օգտին են կայացվելու։ Անդրադասնալով մեր հարցին, թե եթե, այդուհանո՞ք, թերթը որեւէ գումար չկարողանա վճարել, ինչպես է լուծվելու ինդիքը, Կարեն Ավետյանը իրենց հաջորդ քայլերը գաղտնի պահեց։ «Այ, կտեսնեք, թե հետո ո՞ւս կվճարեն մեր պարտքը, դա բոլորի համար դաս կինի»։

Փաստաբան Յովիկ Արսենյանը դատարանի այս ակտը քաղաքական համարեց եւ պնդեց, որ սա ընդդիմադիր թերթը փակելու միտում ունի։ Նա պատրաստվում է վերաքննիչ բողոք ներկայացնել։



Արման Պարի յան

«Շառական պատուհան»-ը՝
Շառական պատուհան
Շառական պատուհան

Շառական պատուհան Շառական
Շառական պատուհան Շառական

««Ո աղիո Յայ»-ի այս հաղորդման մասին մեր կարծիքին ու պահանջներին ընթերցողն արդեն տեղյակ է նրա խմբագրակազմին «Ժառանգության» հղած երկու բաց նամակներից: Դրանցից առաջինով ակնկալի էինք Սերժ Սարգսյանի ներողությունը ՀՀԿ փոխնախագահի ստախոսության եւ նախագահականից իշեցված այս պատուհանով երկսերիանոց ռադիոհամերգի համար, որի ոչ բոլոր տրագիկոմետրիկ մասերն ենք ներկայացրել հասարակությանը»:

Աժ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Ստեփան Սաֆարյանի հոդվածի այս հատվածն է առիթ հանդիսացել, որպեսզի «Ուաղիո Յայը» 26.08.09 թ. դատարան հայց ներկայացնի նրա դեմ՝ զանգվածային լրատվական միջոցներով տարածված՝ գործարար համբավը արատավորող տեղեկությունը հերթելու պահանջի մասին: «Ուաղիո Յայը» Ավանի եւ Նոր-Նորքի ընդհանուր իրավասության դատարանից խնդրել է Աժ պատգամավոր Ստեփան Սաֆարյանին պարտադրել՝ հերթել այն տեղեկատվությունը, որ «Ուաղիո Յայ» ռադիոկայանը, պատրաստելով եւ հուլիսի 30-ին եւ 31-ին եթեր հեռարձակելով «Յայկական անդրադարձ» ծրագիրը, կատարել է Սերժ Սարգսյանից եւ/կամ նախագահականից իշեցված պատվեր: Յայցվորը պահանջում է, որպեսզի Սաֆարյանը իր հերթումը տպագրի «Յապարակ» օրաթերթի 5-րդ էջում, այսինքն՝ նույն այն լրատվամիջոցի նույն այն էջում, որտեղ տպագրվել է Ստեփան Սաֆարյանի հոդվածը»:

Աժ պատգամավորի եւ ռադիոկայանի հրապարակային բանավեճի պատճառը է հանդիսացել հուլիսի 30-ին եւ 31-ին եթեր հեռարձակված «Յայկական անդրադարձ» ծրագիրը, որտեղ հեռակա բանավեճ է ծավալվել հանրապետական Գալուստ Սահակյանի եւ «Ժառանգության» պատգամավոր Ստեփան Սաֆարյանի միջեւ:

Իսկ որպես անկախ վերլուծաբան հանդես եկող Անդրիաս Դուկասյանը մեկնաբանել է կողմերի կարծիքները: Այսուհետեւ Դուկասյանը եթերից հայտարարել է, որ Հայաստանը, 1991-92 թվականներին վավերացնելով «ԱՊՀ ստեղծման մասին պայմանագիրը» և «Հելսինկյան համաձայնագիրը» (Հելսինկյան ավարտական ակտը), ճանաչել է Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը, որի պատճառով մինչ օրս չի կարող ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Հիշեցնենք, որ այդ տարիներին Հայաստանի արտաքին գործերի նախարարն է եղել Ռաֆֆի Շովհանսիսյանը:

«Ժողովրդին խարել են, այստեղ մարդիկ հանրահավաք են անում, գոռում են «Միացում, միացում», իսկ այստեղ Լեւոն ՏերՊետրոսյանն ու Ռաֆֆի Շովհանսիսյանը փաստաթուղթ են ստորագրում, որով ճանաչում են Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը Խորհրդային Ադրբեյջանի սահմաններում, այդքանից հետո ինչպես եր Ղարաբաղը միանալու Հայաստանին», - «Հետքին» տված հարցազրույցում ասաց վերլուծաբան Անդրիաս Դուկասյանը:

«Մենք ոչ թե ճանաչել ենք Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը, այլ վավերացրել ենք մի փաստաթուղթ, որով մեր համաձայնությունն ենք տվել՝ առաջնորդվել «Հելսինկյան ավարտական ակտի» 10 սկզբունքներով, որոնց մեջ մտնում է ինչպես տարածքային ամբողջականությունը, այնպես էլ ազգերի ինքնորշման իրավունքը եւ սահմանների խաղաղ ճանապարհով փոփոխությունը, եւ դրանցից ոչ մեկը դոմինանտ չէ մյուսի նկատմամբ»: «Հետքի» հետ զրույցում ասաց Ստեփան Սաֆարյանը, - Եթե մենք օրենք ընդունենք, համաձայն որի բոլոր խոշոր գործարարները պետք է հարկվեն, դա դեռ չի նշանակում, որ մենք օրենք ենք ընդունել, որ գործարար ՍամՎել Ալեքսանյանը պետք է հարկվի: Մի պարզ օրինակ բերեմ. Եթե մենք ճանաչած լինեինք Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը, ապա այդ պետությունը մինչ օրս ՄԱԿ-ում եւ միջազգային ամբիոններում հսկայական շանքեր չեր գործադրի, որպեսզի ամրագրել իր տարածքային ամբողջականությունը Հայաստանի կողմից»:

Անդրիաս Դուկասյանը կարծում է, որ ստորագրված փաստաթուղթը տարիներ շարունակ քողարկվել են եւ պատշաճ ուշադրության չեն արժանացել. «Մեզ մոտ մարդիկ չեն սիրում կարդալ, այդ պատճառով ել շատերը տեղյակ չեն այս փաստաթողեթերին»:

Ստեփան Սաֆարյանը էլ նշում է, որ «ԱՊՀ ստեղծման մասին պայմանագիրը» եւ «Հելսինկյան ավարտական ակտը» տպագրվել են գրքերում եւ տեղադրված են համացանցում. «Այսպես որ, անհնար է դրանք քողարկել»:

Եթե Լեւոն Տեր-Պետրոսյանը ստորագրել է այսպիսի փաստաթողեթը, որով ձախողվել է ԼՂՀ-ի ճանաչումը, ինչու՞ ներկայիս իշ-



82

խանությունը դա չի շահարկում. Անդրիաս Ղուկասյանի պատասխանը հետեւյալն է. «Եթե ներկայիս իշխանությունը շահարկի այդ փաստը, ապա նա պետք է շտկի Տեր-Պետրոսյանի սխալները, իսկ դա նշանակում է առ ոչինչ ճանաչել «ԱՊՀ ստեղծման մասին պայմանագիրը», այսինքն՝ փչացնել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Իսկ դա Յայաստանի իշխանությունը չի կարող անել»: Ըստ վերլուծաբանի՝ «ԱՊՀ ստեղծման մասին պայմանագիրը» եւ «Հելսինկյան համաձայնագիրը» նախկին Խորհրդային Միության անդամ-երկրների համար իրավական ուժ չունեն, քանի որ դրանք կոքվել են ոչ իրավական ճանապարհով. «Անդամ երկրները նախ պետք է Խորհրդային Միության Սահմանադրության համաձայն դուրս գային նրա կազմից, այնուհետեւ իրավասու կլինեին ինքնուրույն փաստաթուղթ ստորագրել եւ անդամակցել միջազգային կազմակերպություններին», - ասում է Անդրիաս Ղուկասյանը:

Ստեփան Սաֆարյանի եւ Անդրիաս Ղուկասյանի բանավեճը տեղափոխվել էր մամուլի էջեր, որի արդյունքն այն եղավ, որ ռադիոկայանը հայցադիմում ներկայացրեց՝ ընդդեմ պատգամավորի: Վերջինս դատարանում պետք է ապացուցի իր խոսքերի ճշմարտացիությունը, այն է՝ ռադիոկայանի հաղորդումը հեռարձակվել է նախագահականից իշեցված պատվերով:

Աժ պատգամավորին հարցինք՝ արդյո՞ք նա ունի նման փաստեր. «Ես այդ մասին կխոսեմ դատարանում, կհանդիպեմ դատարանում», - սա էր Սաֆարյանի պատասխանը:

Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանում սեպտեմբերի 24-ին սկսված դատավարությունը շատ դաշտաղ է ընթանում: Նախնական դատական նիստից հետո դատավոր Մազմանյանը մեկ ամսով արձակուրդ էր գնացել եւ նիստը հետաձգել մինչեւ դեկտեմբերի 10-ը: Դեկտեմբերի 10-ի նիստում Ս. Սաֆարյանը պետք է ապացուցեր, որ ռադիոհաղորդումը պատվիրված է նախագահականից: Սակայն դատավոր Գ. Մազմանյանի վատառողջության պատճառով դատական նիստը հետաձգվեց մինչեւ դեկտեմբերի 23-ը: Նման ձգձգումներով խախտվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ողքամիտ ժամկետում դատական պաշտպանություն ստանալու իրավունք ունի:

2010 թ. հունվարի 14-ին Ավան եւ Նոր-Նորք վարչական տարածքի ընդհանուր իրավասության դատարանում շարունակվեց եւ ավարտվեց ««Ուային Յայ»-ն ընդդեմ Աժ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանի» գործով նախնական դատական նիստը, որի ընթացքում կողմերը ներկայացրին իրենց ապացույցները: Իսկ հունվարի 25-ին նույն դատարանում պետք է սկսվեր ««Ուային Յայ»-ն ընդդեմ Ստեփան Սաֆարյանի» գործով դատաքննությունը, որը հետաձգվեց պատասխանող

պատգամավորի բացակայության պատճառով: Ստեփան Սաֆարյանի փաստաբանը դատարանին տեղեկացրեց, որ նա Երեւանում չէ, քանի որ նախօրեին այցելել է Տավուշի մարզ եւ այսօր չի կարողացել Վերադառնալ այնտեղից: Փաստաբանը դատարանին միջնորդեց հետաձգել դատական նիստը, քանի որ, ըստ նրա, գործի ամբողջական նյութերը գտնվում են Ստեփան Սաֆարյանի մոտ եւ առանց դրանց անհարմար կլինի սկսել դատաքննությունը:

Հայցվոր ռադիոկայանի ներկայացուցիչ Անդրիաս Ղուկասյանը դեմ էր դատական նիստի հետաձգմանը, քանի որ, ըստ նրա, ցանկացած հետաձգում վնասում է «Շադի՛ Յայ»-ի շահերին: Դատարանը որոշեց բավարարել Ստեփան Սաֆարյանի փաստաբանի ներկայացրած միջնորդությունը եւ դատական նիստը հետաձգել մինչեւ փետրվարի 1-ը:

Մենք զանգահարեցինք պատգամավորին՝ պարզելու, թե ինչ գործով է նա մեկնել Տավուշի մարզ, սակայն նրա փոխարեն հեռախոսազանգին պատասխանող տղամարդն ասաց, որ Ստեփան Սաֆարյանն այս պահին չի կարող խոսել: Նա նաեւ տեղեկացրեց, որ պատգամավորը դեռ Երեւան չի հասել:

